ՆԱԽԱԳԻԾ
ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Պ-596-30.04.2020,15.06.2020-ԳԿ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱՅԻ ՄԱՍԻՆ

Գ Լ Ո Ւ Խ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի նպատակը, կարգավորման առարկան եւ գործողության ոլորտը

1. Սույն օրենքի նպատակն է՝
   1) ապահովել հավաստի տեղեկատվություն ստանալու յուրաքանչյուրի իրավունքը.
   2) երաշխավորել կարծիքների արտահայտման իրավունքը.
   3) երաշխավորել տեսալսողական մեդիածառայություններ մատուցողների խմբագրական անկախությունը.
   4) երաշխավորել կարգավորող պետական մարմնի անկախությունը.
   5) նպաստել տեսալսողական հաղորդումների բազմազանության զարգացմանը:

2. Սույն օրենքը սահմանում է տեսալսողական մեդիածառայություն մատուցողների եւ օպերատորների կարգավիճակը, կանոնակարգում է հեղինակազորման, լիցենզավորման, ծանուցումների ներկայացման կարգը, սույն օրենքի կարգավորման առարկա հանդիսացող սուբյեկտների իրավունքների ու պարտականությունների առաջացման հիմքերը, գործունեության ընթացքում ծագող հարաբերությունները:
3. Սույն օրենքը չի տարածվում համացանցի, բացառությամբ ցանցային օպերատորների գործունեության, տեսալսողական արտադրանքին զուգահեռ կամ տեսալսողական արտադրանքի կազմում հաղորդվող կամ տեսալսողական արտադրանքի միջոցով հասանելիություն ստացող լրացուցիչ տեսալսողական կամ տեքստային տեղեկատվության (ինտերակտիվ հեռուստատեսության) վրա:
4. Սույն օրենքի գործողությունը տարածվում է Հայաստանի Հանրապետությունում՝
   1) տեսալսողական մեդիածառայություն մատուցողների վրա.
   2) օպերատորների վրա.
   3) տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորների վրա.
   4) կարգավորող պետական մարմնի վրա.
   5) հանրային տեսալսողական մեդիածառայություն մատուցողի գործունեության կառավարումն ապահովող եւ հսկողություն իրականացնող մարմնի վրա.

5. Սույն օրենքի իմաստով տեսալսողական մեդիածառայություն մատուցողը համարվում է Հայաստանի Հանրապետությունում գործող, եթե համապատասխանում է հետեւյալ պահանջներից մեկին.

1) գրանցումը եւ տեսալսողական տեղեկատվության սփռումը Հայաստանի Հանրապետության տարածքում է.

2) օգտագործում է Հայաստանի Հանրապետության լիազոր մարմնի տրամադրած հաճախականությունը.

3) օգտագործում է Հայաստանի Հանրապետության լիազոր մարմնի տրամադրած սլոթը հանրային մուլտիպլեքսում.

4) օգտագործում է Հայաստանի Հանրապետությունում գործող մասնավոր մուլտիպլեքսի կողմից տրամադրած սլոթը.

6. Սույն օրենքի իմաստով օպերատորը համարվում է Հայաստանի Հանրապետությունում գործող, եթե օգտագործում է Հայաստանի Հանրապետության տարածքում տեղակայված կայանը արբանյակային ազդանշանի համար, Հայաստանի Հանրապետության տնօրինման տակ գտնվող հաճախականությունները կամ Հայաստանի Հանրապետության տարածքում տրամադրվող ինտերնետ-կապը:

Սույն օրենքի իմաստով ցանցային օպերատոր են համարվում նաեւ ցանցային օպերատորների ենթակառուցվածքների կամ համացանցի միջոցով տեսալսողական տեղեկատվություն տարածողները (OTT օպերատոր):

Հոդված 2. Հայաստանի Հանրապետության տեսալսողական մեդիայի մասին օրենսդրությունը

1. Հայաստանի Հանրապետության տեսալսողական մեդիայի մասին օրենսդրությունը ներառում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, սույն օրենքը, «Զանգվածային լրատվության մասին», «էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների մասին», «Լեզվի մասին», «Գովազդի մասին» օրենքները, Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրքը, կարգավորող պետական մարմնի իրավական ակտերը, տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող այլ իրավական ակտերը եւ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը:

2. Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են սույն օրենքով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:

Հոդված 3. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքում օգտագործվում են հետեւյալ հիմնական հասկացությունները.

1) ***տեսալսողական մեդիածառայություն մատուցող*** *(այսուհետ՝ Հեռարձակող, լսողական մեդիածառայություն մատուցողը՝ Լսողական ծրագրեր հեռարձակող)* Հայաստանի Հանրապետության կողմից հիմնադրված կազմակերպություն կամ կարգավորող պետական մարմնի կողմից հեղինակազորված ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը կազմում եւ սպառողին է ներկայացնում տեսալսողական տեղեկատվություն եւ խմբագրական պատասխանատվություն է կրում տեսալսողական արտադրանքի բովանդակության համար.

2) ***կարգավորող պետական մարմին***՝ անկախ պետական մարմին, որն ապահովում է հեռարձակվող լրատվության միջոցների ազատությունը, անկախությունը եւ բազմազանությունը, վերահսկում է Հեռարձակողների, օպերատորների եւ տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորների գործունեությունը.

3) ***օպերատոր***՝ ցանցային կամ մուլտիպլեքս օպերատոր, որն առաջարկում է հաղորդակցային ծառայություն (ցանցեր, տեսալսողական համակարգեր, սլոթ եւ այլն) եւ պատասխանատվություն է կրում տեխնիկական ենթակառուցվածքի շահագործման միջոցով տեսալսողական ազդանշան սպառողներին հասցնելու համար.

4) ***մուլտիպլեքս օպերատոր***՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը բացառապես ապահովում է մուլտիպլեքսի տարածման եւ ենթակառուցվածքի տեխնիկական շահագործումը եւ օգտագործում է հաճախականային սահմանափակ ռեսուրսը.

5) ***ցանցային օպերատոր***՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը սեփականության կամ այլ իրավունքով ունի մալուխային կամ այլ ցանց (բացառությամբ հաճախականային սահմանափակ ռեսուրս օգտագործելու դեպքերի) եւ ապահովում է տվյալ ենթակառուցվածքի տեխնիկական շահագործումը.

6) ***հանրային հեռարձակող***՝ Հայաստանի Հանրապետությանը 100 տոկոս պատկանող ընկերության սեփականությունը հանդիսացող Հեռարձակող.

7) ***թեմատիկ ուղղվածություն***՝ տեսալսողական հաղորդումների ուղղվածությունն ըստ բովանդակային առանձնահատկությունների.

8) ***սպառող***՝ առնվազն մեկ Հեռարձակողի տեղեկատվությունն ընդունող (դիտող եւ (կամ) լսող) անձ.

9) ***փոխկապակցված անձ***՝ ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր.

10) ***տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտոր***՝Հեռարձակողի հետ պայմանագրի հիման վրա օպերատորին տարածման նպատակող տեսալսողական ծրագրեր տրամադրող ֆիզիկական կամ իրավաբանական անձ.

11) ***մուլտիպլեքս***՝ տվյալների մի քանի հոսքերի միավորմամբ միասնական մեկ հոսքի (թվային ցանց) ստացումը, որը հետագայում կրկին կարող է մասնատվել.

12) ***հանրային մուլտիպլեքս***՝ Հայաստանի Հանրապետությանը 100 տոկոս պատկանող ընկերության սեփականությունը հանդիսացող հեռարձակման թվային ցանց.

13) ***սլոթ***՝ մուլտիպլեքսում թվային հոսքի մի մասը, որը բավարար է ոչ ավելի, քան մեկ ծրագիր հեռարձակելու համար.

14) ***սփռում***՝ որոշակի տարածքի սահմաններում տեսալսողական տեղեկատվության տարածում.

15) ***տեսալսողական տեղեկատվություն***՝հաճախականություններով եւ հնարավոր այլ տեխնիկական միջոցներով (հաղորդիչ, արբանյակ, մալուխային ցանց եւ այլն) սպառողներին տրամադրվող տեսալսողական նյութ՝ ներառյալ տեսալսողական արտադրանքին զուգահեռ կամ տեսալսողական արտադրանքի կազմում հաղորդվող կամ տեսալսողական արտադրանքի միջոցով հասանելիություն ստացող լրացուցիչ տեսալսողական կամ տեքստային տեղեկատվությունը (ինտերակտիվ հեռուստատեսություն).

16) ***գծային տեսալսողական տեղեկատվություն***՝Հեռարձակողի կամ օպերատորի կողմից սպառողներին համաժամանակյա դիտելու եւ (կամ) լսելու նպատակով,

նախապես կարգավորված հաջորդականությամբ տրամադրվող տեսալսողական նյութ.

17) ***ոչ գծային տեսալսողական տեղեկատվություն***՝ Հեռարձակողի կամ օպերատորի կողմից անհատ սպառողի պահանջով, իր կողմից ընտրված պահին դիտելու եւ (կամ) լսելու նպատակով տրամադրվող տեսալսողական նյութ՝ ըստ տեսացանկի (կատալոգ).

18) ***տեսալսողական ծրագիր***՝ Հեռարձակողի կողմից նախապես կարգավորված հաջորդականությամբ տեսալսողական նյութեր.

19) ***տեսալսողական հաղորդում***՝ տարածվող պատկերներ եւ (կամ) հնչյուններ սահմանափակ տեւողությամբ նյութ, որը կազմակերպական իմաստով ինքնուրույն եւ ավարտուն է եւ համարվում է հեղինակային եւ (կամ) հարակից իրավունքի օբյեկտ.

20) ***առաջին ամրագրման հաղորդում***՝ առաջին անգամ հեռարձակվող տեսալսողական հաղորդում.

21) ***հայերեն տեսալսողական հաղորդում*** հայերեն ընկալման որեւէ միջոցով (կրկնօրինակում, հնչյունավորում եւ (կամ) ենթագիր) ուղեկցվող տեսալսողականհաղորդում.

22) ***տեսալսողական գովազդ***՝ իրավաբանական կամ ֆիզիկական անձանց, ապրանքների, գաղափարների կամ նախաձեռնությունների մասին տեղեկությունների տարածումը Հեռարձակողի միջոցով, որը կոչված է ձեւավորելու կամ պահպանելու հետաքրքրությունը տվյալ ֆիզիկական կամ իրավաբանական անձի, ապրանքների, ծառայությունների, գաղափարների կամ նախաձեռնությունների նկատմամբ՝ շահույթ ստանալու նպատակով.

23) ***հեղինակազորում***՝ կարգավորող պետական մարմնի կողմից ֆիզիկական կամ իրավաբանական անձին Հեռարձակողի կարգավիճակ տվող փաստաթղթի տրամադրում.

24) ***բացառիկ իրավունք***՝ այլ անձանց մտավոր սեփականություն հանդիսացող տեսալսողական տեղեկատվությունը որոշակի աշխարհագրական տարածքում տարածման բացառիկ իրավունք.

25) ***կարևոր իրադարձություն***՝ պետական կամ համազգային նշանակության քաղաքական, մշակութային, կրոնական, մարզական կամ դրանց իրենց նշանակությամբ համարժեք իրադարձություն.

26) ***մշտադիտարկում*** կարգավորող պետական մարմնի կողմից Հեռարձակողների եւ օպերատորների գործունեության՝ տեսալսողական մեդիայի մասին օրենսդրության պահանջներին համապատասխանությունը գնահատելու նպատակով իրականացվող դիտարկում:

27) ***վերահաղորդում***՝ այլ Հեռարձակողի կամ ցանցային օպերատորի կողմից տեսալսողական ծրագրի համաժամանակյա կամ գրեթե համաժամանակյա՝ տեսալսողական տեղեկատվության հեռարձակումից մինչեւ դրա ընդունումն ընկած կարճաժամկետ ընդհատումներով առաջացող տատանումների հետեւանքով՝ հեռարձակման գործընթացին ներհատուկ տեխնիկական պատճառներով պայմանավորված եւ ամրագրված (ձայնագրված եւ (կամ) տեսագրված) տեսալսողական հաղորդման հետագա հեռարձակումը.

28) ***էթիկայի կանոնագիր***՝ Հեռարձակողի կողմից միջազգային չափանիշների համաձայն ինքնուրույն կազմված փաստաթուղթ՝ սեփական էթիկական նորմերի վերաբերյալ:

Հոդված 4. Տեսալսողական տեղեկատվության ազատ ընտրությունը

1. Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում է տեսալսողական տեղեկատվության ազատ ընտրության, արտադրության ու տարածման իրավունքը: Տեսալսողական տեղեկատվության գրաքննությունն արգելվում է:

2. Յուրաքանչյուր ոք ունի տեսալսողական տեղեկատվության ազատ ընտրության իրավունք:

3. Պետությունն անհրաժեշտ պայմաններ է ստեղծում եւ միջոցներ է ձեռնարկում Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում Հանրային հեռարձակողի (առնվազն 1 տեսալսողական եւ 1 լսողական) տեսալսողական ծրագրերի ընդունման համար:

4. Օպերատորը եւ Հեռարձակողը համապատասխան սփռման տարածքների համընկնման շրջաններում չպետք է խոչընդոտեն սպառողների՝ օրինական հիմքով տարածվող այլ տեսալսողական տեղեկատվություն ընդունելու իրավունքը:

Հոդված 5. Մարդու իրավունքները տեսալսողական տեղեկատվության հասանելիության նկատմամբ

1. Եթե Հեռարձակողը կամ օպերատորը տեսալսողական տեղեկատվությունը հեռարձակում է անորոշ թվով անձանց համար եւ անվճար հիմունքներով, ապա յուրաքանչյուր ոք իրավունք ունի նման ծառայությունից սպառողական նպատակով օգտվելու անհատույց եւ առանց տվյալ Հեռարձակողին կամ օպերատորին տեղեկացնելու:

2. Այլ դեպքերում Հեռարձակողի կամ օպերատորի մատուցելիք տեղեկատվության գինը եւ պայմանները սահմանվում են պայմանագրային կարգով:

Գ Լ Ո Ւ Խ 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՀԵՌԱՐՁԱԿՈՂՆԵՐԻ ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ

Հոդված 6. Տեսալսողական տեղեկատվության լեզուն

1. Տեսալսողական տեղեկատվության լեզուն հայերենն է, բացառությամբ սույն օրենքով սահմանված դեպքերի:

2. Օտար լեզուներով հեռարձակվող տեսալսողական տեղեկատվությունը պետք է ուղեկցվի հայերեն լեզվով ընկալման միջոցներով (կրկնօրինակում, հնչյունավորում եւ (կամ) ենթագիր): Հայերեն ընկալման միջոցներով ուղեկցումը պետք է կիրառվի բացառապես բնօրինակ լեզվով տեսալսողական տեղեկատվության նկատմամբ:

Սույն դրույթը չի տարածվում.

1) միայն ձայնի միջոցով տարածվող տեսալսողական տեղեկատվության վրա.
2) Կարգավորող պետական մարմնի սահմանած կարգով Հեռարձակողների կողմից Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների մշակույթը ներկայացնող տեսալսողական հաղորդումների վրա.
3) օտար լեզվի ուսուցման նպատակով արտադրված տեսալսողական հաղորդումների վրա.
4) տեսալսողական հաղորդում կամ դրա մաս հանդիսացող երաժշտական ստեղծագործությունների վրա.
5) միայն արտերկրում սփռվող տեսալսողական հաղորդումների վրա:

3. Հեռարձակողների անվանումները էկրանային ցուցադրման ժամանակ օտար լեզուներով օգտագործելու դեպքում հայերեն անընդհատ տառադարձությունը պարտադիր է:

4. Հեռարձակողները, որոնք արտադրում են նաեւ մանկական եւ (կամ) լրատվական տեսալսողական հաղորդումներ, պարտավոր են իրենց ծրագրերում ապահովել լսողական խնդիրներ ունեցող սպառողների համար տեղեկատվության ընկալման մատչելիությունը՝ օրվա ընթացքում՝ կարգավորող պետական մարմնի կողմից սահմանված ժամերին, համապատասխանաբար առնվազն մեկական մանկական եւ լրատվական տեսալսողական հաղորդում ներկայացնելով ժեստերի լեզվով թարգմանությամբ կամ հայերեն ենթագրով:

Հոդված 7. Տեսալսողական հաղորդումներում հավաստի տեղեկատվության ապահովումը

1. Հեռարձակողները պետք է ապահովեն.

1) որեւէ անձի անվանական ուղղված խոսքի պատասխանի իրավունքը.

2) ներկայացված տեղեկություններում սխալների առկայության դեպքում, սեղմ ժամկետում միեւնույն հաղորդման, իսկ հնարավորության բացակայության դեպքում՝ այլ հաղորդման ժամանակ այդ մասին իրազեկումը.

3) իրազեկումը՝ ներկայացված փաստերի անանուն կամ հավաստիությունը բավականաչափ չստուգված աղբյուրների վերաբերյալ.

2. Տեսալսողական հաղորդումների ընթացքում Հեռարձակողը պետք է պահպանի հետեւյալ պահանջները.

1) ուղիղ եթերը պետք է ուղեկցվի «Ուղիղ եթեր» գրառմամբ.

2) տեսալսողական հաղորդումների կրկնությունը ողջ ընթացքում պետք է ուղեկցվի «Կրկնություն» գրառմամբ, բացառությամբ կինեմատոգրաֆիական եւ երաժշտական ստեղծագործությունների.

3) արխիվային տեսագրությունները կամ ձայնագրությունները պետք է թվագրվեն կամ ուղեկցվեն «Արխիվ» գրառմամբ:

Հոդված 8. Կարեւոր իրադարձությունների մասին տեղեկություն ստանալու իրավունքը

1. Յուրաքանչյուր ոք ունի Հեռարձակողների միջոցով կարեւոր իրադարձությունների մասին տեղեկություն ստանալու իրավունք՝ առանց նախապես անհատական թույլտվության:

2. Հեռարձակողները, որոնց ծրագրերում առկա են լրատվական բնույթի տեսալսողական հաղորդումներ, պարտավոր են լուսաբանել կարեւոր իրադարձությունները:

3. Կարեւոր իրադարձությունների շրջանակը հաստատում է կարգավորող պետական մարմինը:

4. Եթե կարեւոր իրադարձությունը տեւում է մի քանի օր, ստեղծվում է առնվազն մեկ տեսանյութ իրադարձության ամեն օրվա մասին:

5. Մեկ տեսանյութի տեւողությունը չի կարող կարճ լինել 60 վայրկյանից:

6. Հայաստանի Հանրապետության մարզական հավաքականների մասնակցությամբ կարևոր իրադարձությունների ամբողջական տարածման բացառիկ իրավունքը պատկանում է Հանրային հեռարձակողին:

Հոդված 9. Տեսալսողական հաղորդումների չարաշահման արգելքը

1. Արգելվում է տեսալսողական հաղորդումներում օրենսդրությամբ արգելված արարքների կոչեր տարածելը: Ուղիղ եթերի ժամանակ նման կոչեր հնչելու դեպքում Հեռարձակողը պատասխանատվության չի ենթարկվում, եթե կոչի հեղինակը ուղիղ եթերում զգուշացվել է իրավախախտման մասին, իսկ կրկնակի կոչի դեպքում՝ ուղիղ եթերը դադարեցվել է:

2. Կարգավորող պետական մարմինը օրենքով իրեն վերապահված վերահսկողական գործառույթների իրականացման ընթացքում վարչական իրավախախտման կամ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով արգելված արարքի հատկանիշներ հայտնաբերելու դեպքում դիմում է իրավասու մարմիններին:

3. Էրոտիկ բնույթի տեսալսողական հաղորդումները եւ սարսափ ու ակնհայտ բռնություն պարունակող ֆիլմերը, ինչպես նաեւ անչափահասների առողջության, մտավոր եւ ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող հաղորդումները կարող են եթեր հեռարձակվել ժամը 24:00-6:00-ն: Նման հաղորդումների որոշման չափորոշիչները սահմանում է կարգավորող պետական մարմինը:

4. Պետության կողմից հայտարարված սգո եւ հիշատակի օրերին գովազդի եւ զվարճալի հաղորդումների հեռարձակումը Հեռարձակողների կողմից արգելվում է:

5. Հեռարձակողները կամ օպերատորները սույն հոդվածի 3-րդ մասում նշված հաղորդումները՝ առանց ժամային սահմանափակումների կարող են տարածել սպառողների կողմից այդ հաղորդումների հասանելիության արհեստական արգելքի (կոդ) ներդրման տեխնիկական հնարավորության առկայության դեպքում:

6. Արգելվում են տեսալսողական հաղորդումները, որոնց մասնակիցները Հեռարձակողին նախապես հայտնի՝ կենցաղային հողի վրա առաջացած վիճաբանության, երկարատեւ ժամանակահատվածի ընթացքում ձեւավորված հակակրանքի արդյունքում հաղորդման բնույթով պայմանավորված՝ եթերում կարող են կատարել օրենքներով արգելված գործողություններ:

7. Արգելվում են տեսալսողական հաղորդումները, որոնք հետապնդում են ազգային, ռասայական, սեռային և կրոնական հատկանիշով խտրականություն քարոզելու նպատակ կամ պարունակում են նման նպատակ հետապնդող տեղեկատվություն:

8. Արգելվում են Հեռարձակողի, իսկ ոչ գծային տեղեկատվության դեպքում՝ օպերատորի կողմից տեսալսողական ծրագիրը կամ դրա մասը առանց դրանց հեղինակային կամ հարակից իրավունքի սուբյեկտ չհանդիսացող իրավատերերի համաձայնության տարածելը:

Գ Լ Ո Ւ Խ 3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՀԵՌԱՐՁԱԿՈՂՆԵՐԻ ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Հոդված 10. Տեսալսողական հաղորդումները

1. Հանրային մուլտիպլեքսում Հեռարձակողները տեսալսողական ծրագրերի հեռարձակումն իրականացնում են կարգավորող պետական մարմնի, իսկ մասնավոր մուլտիպլեքսում՝ մասնավոր մուլտիպլեքս օպերատորի կողմից տրամադրված սլոթի միջոցով:

2. Մասնավոր Հեռարձակողը Հանրային հեռարձակողի սույն օրենքի 22-րդ հոդվածի 6-րդ մասի 3-րդ կետի «զ» ենթակետով նախատեսված հաղորդումները

հեռարձակում է առանց փոփոխությունների՝ այդ թվում նույն ելքային տվյալներով եւ առանց գովազդի:

3. Ոչ սեփական տեսալսողական հաղորդումները կարող են հեռարձակվել միայն դրանց հեռարձակման իրավունքը հավաստող փաստաթղթերի առկայության դեպքում:

4. Տեսալսողական հաղորդման եւ հեղինակի մասին տեղեկատվության (ենթագիր, ձայնային ներկայացում) ամբողջական հեռարձակումը պարտադիր է, բացառությամբ Լսողական ծրագիր հեռարձակողի երաժշտական ստեղծագործությունների:

5. Լիցենզիա ստացած Հեռարձակողի ծրագրում մանկական, կրթական, մշակութային եւ սպորտային թեմատիկ ուղղվածության տեսալսողական հաղորդումները պետք է կազմեն շաբաթական եթերաժամի առնվազն 20 տոկոսը:

Սույն մասի պահանջը չի տարածվում լսողական ծրագրեր հեռարձակողների վրա:

6. Հայերեն տեսալսողական հաղորդումները մեկ Հեռարձակողի հեռարձակմամբ չի կարող պակաս լինել ամսական ընդհանուր ժամաքանակի 55 տոկոսից :

7. Հեռարձակողի լրատվական հաղորդումներում նույն թեմայի վերաբերյալ լուսաբանումը չպետք է գերազանցի հաղորդման եթերաժամի 25 տոկոսը:

8. Ծխելու տեսարաններ պարունակող տեսալսողական հաղորդումը՝ դրա մեկնարկին, տեսանելի չափով, 5 վայրկյան տեւողությամբ պետք է ուղեկցվի «ծխելը վնասում է ձեր առողջությանը» գրառմամբ:

Հոդված 11. Տեսալսողական հաղորդումներն ընտրությունների (հանրաքվեների) նախընտրական (հանրաքվեի դրված հարցի վերաբերյալ) քարոզչության ժամանակահատվածում

1. Ընտրությունների (հանրաքվեների) նախընտրական (հանրաքվեի դրված հարցի վերաբերյալ) քարոզչության իրականացման համար օրենքով սահմանված ժամանակահատվածում՝

1) տեսալսողական հաղորդումները հեռարձակվում են ընտրությունների (հանրաքվեների) մասին օրենսդրությանը համապատասխան.

2) Հեռարձակողները պարտավոր են հավասար պայմաններ ապահովել թեկնածուների եւ մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների (հանրաքվեի քարոզչության կողմերի) համար՝ հրապարակավ հայտնելով վճարովի տեսալսողական հաղորդումների իրենց եթերաժամի գինը եւ հեռարձակման պայմանագրի էական այլ պայմաններ.

3) Հեռարձակողի լրատվական հաղորդումներում թեկնածուների, կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների (հանրաքվեի քարոզչության կողմերի) նախընտրական (հանրաքվեի դրված հարցի վերաբերյալ) քարոզչության վերաբերյալ պետք է ներկայացվի անկողմնակալ եւ գնահատականներից զերծ տեղեկատվություն՝ պահպանելով լուսաբանման համար հավասար հնարավորություններ ապահովող Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով և Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումներով սահմանված կարգերը.

4) թեկնածուներին, կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին (հանրաքվեի քարոզչության կողմերին) նախընտրական հիմնադրամի միջոցների հաշվին տրամադրվող նախընտրական քարոզչական տեսալսողական հաղորդումները (Հանրային հեռարձակողի դեպքում՝ նաեւ օրենքով սահմանված անվճար եթերաժամը) պետք է ուղեկցվեն էկրանի վրա պարտադիր անընդմեջ լուսագրով՝ «Նախընտրական (հանրաքվեի դրված հարցի վերաբերյալ)

քարոզչություն», իսկ լսողական հաղորդումների դեպքում յուրաքանչյուր հաղորդման ընթացքում ոչ պակաս, քան երկու անգամ պետք է հիշեցվի դրա մասին:

2. Ընտրությունների (հանրաքվեների) քվեարկության օրը եւ դրան նախորդող օրն արգելվում է հեռարձակել քարոզչական կամ քարոզչությանը նպաստող նյութ՝ տեղեկատվական, խմբագրական, փաստավավերագրական, հեղինակային կամ այլ հաղորդումների տեսքով կամ ցանկացած այլ ձեւով նախընտրական (հանրաքվեի դրված հարցի վերաբերյալ) քարոզչություն իրականացնելը:

3. Ընտրությունների (հանրաքվեների) քվեարկության օրը եւ դրան նախորդող օրը ուղիղ եթերի ժամանակ քարոզչություն հնչելու դեպքում Հեռարձակողը պատասխանատվության չի ենթարկվում, եթե քարոզչության հեղինակը ուղիղ եթերում զգուշացվել է իրավախախտման մասին, իսկ կրկնակի քարոզչության դեպքում՝ ուղիղ եթերը դադարեցվել է:

Հոդված 12. Տեսալսողական հաղորդումները ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ

1. Հեռարձակողները պարտավոր են ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ վարչապետին կամ արտակարգ դրության ընթացքում ի պաշտոնե արտակարգ դրության տարածքի պարետ հանդիսացող պաշտոնյային հատկացնել եթերաժամանակ՝ պաշտոնական հաղորդագրություն կատարելու համար:

2. Հեռարձակողների կողմից եթերաժամանակի հատկացման կարգը եւ պայմանները սահմանում է կարգավորող պետական մարմինը:

3. Ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ Հեռարձակողների տեղեկատվության սահմանափակումները կիրառվում են «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» եւ «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» օրենքներով սահմանված շրջանակներում:

Հոդված 13. Հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզիա ստացած Հեռարձակողի տեսալսողական հաղորդումների պահպանման կարգը

1. Լիցենզիա ստացած Հեռարձակողները պարտավոր են վարել տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյան եւ պահպանել իրենց հեռարձակած տեսալսողական հաղորդումների տեսագրություններն ու ձայնագրությունները՝ հեռարձակման օրվանից սկսած 45 օր ժամկետով, բացառությամբ սույն օրենքի 22-րդ հոդվածի 6-րդ մասի 3-րդ կետի «զ» ենթակետով նախատեսված դեպքերի:

2. Տեսալսողական հաղորդումները պետք է գրանցվեն կարգավորող պետական մարմնի համար հասանելիություն ունեցող տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանում, որի ձեւը եւ վարման կարգը սահմանում է կարգավորող պետական մարմինը:

3. Տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանի տվյալների հիման վրա կարգավորող պետական մարմինը վերահսկում է Հեռարձակողների գործունեության համապատասխանությունը օրենսդրության պահանջներին: Կարգավորող պետական մարմինը ընտրանքային սկզբունքով իրականացնում է Հեռարձակողների կողմից հեռարձակվող տեսալսողական տեղեկատվության մշտադիտարկումներ յուրաքանչյուր Հեռարձակողի համար ամսվա ընթացքում առնվազն հինգ օր: Մշտադիտարկման արդյունքները կարող են համադրվել հաշվառման էլեկտրոնային մատյանների տվյալների հետ:

4. 45 օրը լրանալուց հետո տեսալսողական հաղորդումների տեսագրությունները եւ ձայնագրությունները կարող են ջնջվել, եթե այդ ընթացքում հաղորդումներում տեղ

գտած տեղեկությունների հերքման, ուղղման կամ դատական վեճերի առկայության վերաբերյալ Հեռարձակողը պատշաճ չի ծանուցվել: Նշված ձայնագրություններն ու տեսագրությունները կարող են չպահպանվել վիճելի հարցերի լուծումից հետո:

Հոդված 14. Հովանավորությունը Հեռարձակողների տեսալսողական հաղորդումներում

1. Հովանավորությունը Հեռարձակող չհանդիսացող կամ տեսալսողական ծրագրերի ստեղծման գործում չներգրավված ֆիզիկական կամ իրավաբանական անձի մասնակցությունն է տեսալսողական հաղորդման ուղղակի կամ անուղղակի ֆինանսավորմանը՝ այդ անձի անունը, ապրանքանիշը, համբավը կամ գործունեությունը գովազդելու նպատակով:

2. Տեսալսողական հաղորդումների հովանավորության նկատմամբ կիրառվում են «Գովազդի մասին» օրենքի զանգվածային տեղեկատվության էլեկտրոնային միջոցներում գովազդը կարգավորող դրույթները:

3. Հովանավորված տեսալսողական հաղորդման բովանդակությունը եւ ուղղվածությունը չպետք է կրեն հովանավորի միջամտությունը եւ այլ բնույթի ազդեցություն:

4. Արգելվում է հովանավորությունը՝

1) կուսակցությունների, կուսակցությունների ղեկավար մարմինների անդամների մասնակցությամբ հիմնադրված կամ կառավարվող հիմնադրամների, նախընտրական հիմնադրամների եւ կրոնական կազմակերպությունների կողմից կամ դրանց միջոցներից.

2) լրատվական թողարկումների, պաշտոնական հաղորդագրությունների եւ քաղաքական հաղորդումների.

3) դեղատոմսով տրամադրվող դեղերի անունների հիշատակումով, արտադրությամբ եւ վաճառքով, ինչպես նաեւ օրենսդրությամբ արգելված գործունեությամբ զբաղվող ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից:

5. Ալկոհոլային խմիչքների, ծխախոտի, դեղերի, բուժտեխնիկայի, զենքի եւ զինամթերքի արտադրությամբ զբաղվող ֆիզիկական կամ իրավաբանական անձանց, ինչպես նաև բուժական մեթոդների, վիճակախաղի, շահումով խաղի, խաղատան կազմակերպման գործունեությամբ զբաղվող անձանց կողմից հովանավորության դեպքում կիրառվում են «Գովազդի մասին» օրենքով նախատեսված սահմանափակումները:

6. Հովանավորվող տեսալսողական հաղորդման մեջ պետք է հստակ նշվի հովանավորին համապատասխանող անվանումը կամ ցանկացած այլ խորհրդանիշ, ինչպես նաեւ նշվի իր ապրանքների եւ ծառայությունների համար օգտագործվող ապրանքային նշանը, որոնք կարող են ներկայացվել հաղորդման ընթացքում, սակայն ոչ ավելի, քան մեկ ժամվա ընթացքում երեք անգամ՝ յուրաքանչյուրը 15 վայրկյան տեւողությամբ:

7. Հեռարձակողների կողմից գովազդի հեռարձակումն իրականացվում է սույն օրենքի եւ «Գովազդի մասին» օրենքի պահանջներին համապատասխան

Գ Լ Ո Ւ Խ 4

ՀԵՌԱՐՁԱԿՈՂՆԵՐԸ ԵՎ ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐԸ

Հոդված 15. Մասնավոր Հեռարձակողների հիմնադրումը

1. Հեռարձակողների հիմնադրման (ստեղծման) ժամանակ կամ դրանից հետո օտարերկրյա կապիտալի մասնակցության բաժինը չպետք է տվյալ կազմակերպության որոշումների ընդունման համար անհրաժեշտ բաժնեմասերի հիսուն տոկոսին հավասար կամ հիսուն տոկոսից ավելի լինի, եթե այլ բան նախատեսված չէ միջազգային պայմանագրով:

2. Մասնավոր Հեռարձակողների հիմնադիրներ (մասնակիցներ) չեն կարող լինել՝

1) Հանրապետության նախագահը եւ նրան փոխկապակցված անձինք.

2) պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմինները.

3) Կառավարության անդամները եւ նրանց փոխկապակցված անձինք.

4) Ազգային ժողովի պատգամավորները եւ նրանց փոխկապակցված անձինք.

5) դատավորները եւ նրանց փոխկապակցված անձինք.

6) համայնքների ղեկավարները եւ նրանց փոխկապակցված անձինք.

7) կարգավորող պետական մարմնի անդամները, աշխատակիցները եւ փոխկապակցված անձինք.

8) կուսակցությունները՝ այդ թվում կուսակցության ղեկավար մարմնի անդամները եւ նրանց փոխկապակցված անձինք.

9) կուսակցությունների հիմնադրամները

10) կրոնական կազմակերպությունները.

11) 18 տարին չլրացած քաղաքացիները:

Հոդված 16. Մասնավոր մուլտիպլեքս օպերատորի հիմնադրումը

1. Մասնավոր մուլտիպլեքս օպերատորի գործունեությունն իրականացվում է օրենքով սահմանված կարգով կարգավորող պետական մարմնի կողմից տրամադրված լիցենզիայի հիման վրա Հայաստանի Հանրապետությունում գրանցված իրավաբանական կամ ֆիզիկական անձի կողմից, որի հիմնադրման (ստեղծման) ժամանակ կամ դրանից հետո իրավաբանական անձի օտարերկրյա կապիտալի մասնակցության բաժինը չպետք է հավասար կամ ավելի լինի մուլտիպլեքս օպերատորի որոշումների ընդունման համար անհրաժեշտ բաժնեմասերի 50 տոկոսից, եթե այլ բան նախատեսված չէ միջազգային պայմանագրով:

2. Մասնավոր մուլտիպլեքսի սփռման տարածքը չպետք է լինի ավելի փոքր, քան մեկ մարզի կամ Երեւան քաղաքի տարածքը:

Հոդված 17. Հեռարձակողների եւ օպերատորների ինքնուրույնության երաշխիքը

1. Արգելվում է Հեռարձակողների եւ օպերատորների գործունեությանը միջամտելը:

2. Պետական իշխանության մարմինները կարող են Հեռարձակողների եւ օպերատորների գործունեությանը միջամտել միայն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում:

Հոդված 18. Հակամենաշնորհային երաշխիքը

1. Իրավաբանական եւ ֆիզիկական անձինք միաժամանակ կարող են դառնալ ոչ ավելի, քան լիցենզիա ստացած երկու (մեկ հանրապետական եւ մեկ մայրաքաղաքային, մեկ հանրապետական և մեկ մարզային կամ մեկ մայրաքաղաքային և մեկ մարզային սփռման) Հեռարձակողի հիմնադիր եւ (կամ) մասնակից:

2. Սույն հոդվածի դրույթները չեն տարածվում Հեռարձակողների կողմից սփռվող լսողական ծրագրերի վրա:

Հոդված 19. Հեռարձակողների եւ օպերատորների եկամուտների աղբյուրները եւ դրանց հրապարակայնացումը

1. Հեռարձակողների եկամուտները գոյանում են գովազդից, վճարովի եթերաժամից, հովանավորությունից, սեփական արտադրության տեսաշարային, ձայնաշարային եւ տեսաձայնաշարային նյութերի վաճառքից, բաժանորդային մուծումներից, հիմնադիրների ներդրումներից եւ օրենքով չարգելված այլ աղբյուրներից ստացված ֆինանսական միջոցներից: Հանրային հեռարձակողի եկամուտները կանոնակարգվում են նաեւ սույն օրենքի 29-րդ հոդվածով:

2. Հեռարձակողները եւ օպերատորները պարտավոր են ապահովել իրենց աղբյուրների թափանցիկությունը, մինչեւ հաշվետու տարվան հաջորդող մայիսի 1-ը հրապարակել իրենց տարեկան ֆինանսական հաշվետվությունները եւ տեղեկատվություն տարեկան եկամուտների մասին՝ ըստ սույն հոդվածի 1-ին մասում նշված եկամուտների աղբյուրների, ինչպես նաեւ տեղեկություններ՝ հիմնադիրների եւ մասնակիցների մասին:

3. Հեռարձակողները եւ օպերատորները պարտավոր են յուրաքանչյուր տարի մինչեւ ապրիլի 1-ը կարգավորող պետական մարմին ներկայացնել նախորդող տարվա հասույթի (այսուհետ՝ Հասույթ) գոյացման բացվածքը եւ չափի վերաբերյալ տեղեկություն:

Հոդված 20. Ելքային տվյալները

1. Հեռարձակողները պարտավոր են ամեն օր եթերում ներկայացնել իրենց անվանումները, խորհրդանիշերը, իսկ Լսողական ծրագրեր հեռարձակողը՝ ազդականչերը:

2. Հեռարձակողները պարտավոր են՝

1) տեսալսողական հաղորդումների հեռարձակման ժամանակ անընդմեջ հեռարձակել տվյալ ընկերության խորհրդանիշը, բացառությամբ գովազդային հաղորդումների.

2) յուրաքանչյուր հեռարձակվող հաղորդման ավարտին նշել (հայտարարել) տվյալ տեսալսողական հաղորդման արտադրողի մասին տեղեկություններ.

3) հանդես գալ հեղինակազորման հայտում նշված անվանմամբ:

3. Արգելվում է քաղաքական նախաձեռնության, կուսակցության կամ կուսակցության հիմնադրամի անվանումն օգտագործել որպես Հեռարձակողի անվանում:

Հոդված 21. Արբանյակային տեսալսողական հեռարձակումը

Հեռարձակողները արբանյակային հեռարձակում կարող են իրականացնել համապատասխան արբանյակային գործակալության հետ պայմանագիր կնքելուց եւ կարգավորող պետական մարմնին ծանուցում ներկայացնելուց հետո:

Գ Լ Ո Ւ Խ 5
ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂՆԵՐԸ

Հոդված 22. Հանրային հեռարձակողների կարգավիճակը եւ գործունեության սկզբունքները

1. Հանրային հեռարձակողները հիմնադրվում են Կառավարության կողմից փակ բաժնետիրական ընկերությունների ձևով:

2. Հանրային հեռարձակողների թիվը չի կարող պակաս լինել երեքից՝ երկու ընդհանուր և մեկ կրթական-մշակութային ուղղվածության ծրագրերով:

3. Հանրային հեռարձակողը առանց հեղինակազորման և սլոթի օգտագործման լիցենզիայի հանրային մուլտիպլեքսի միջոցով կարող է սփռել միայն մեկ ծրագիր: Հանրային հեռարձակողը, հավելյալ ծրագիր սփռելու ցանկության դեպքում, հանրային մուլտիպլեքսի սլոթի օգտագործման համար մասնակցում է մրցույթի սույն օրենքի 45-րդ հոդվածով սահմանված կարգով:

4. «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի իմաստով լիազոր մարմինը Հանրային հեռարձակողի համար Հանրային հեռարձակողի խորհուրդն է (այսուհետ՝ Խորհուրդ):

5. Հանրային հեռարձակողները ղեկավարվում են օբյեկտիվության, ժողովրդավարության, անկողմնակալության, բազմազանության, բազմակարծության սկզբունքներով եւ ապահովում են կարծիքն ազատ արտահայտելու իրավունքի, խղճի, մտքի եւ կրոնի, ինչպես նաեւ ստեղծագործական ազատությունը:

6. Հանրային հեռարձակողները պարտավոր են՝

1) ապահովել հեռարձակվող տեղեկատվական, կրթական, մշակութային եւ ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանությունը.

2) օրվա եթերաժամը հատկացնել հայերեն տեսալսողական հաղորդումներին, բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի.

3) մշակել եւ իրականացնել ծրագրային քաղաքականություն՝

ա. հասարակական առավել հնչեղություն ունեցող տեղեկատվության հեռարձակման համար օգտագործել ամենադիտելի եթերային ժամանակը՝ ներկայացնելով խնդրի կամ հարցի վերաբերյալ պաշտոնական հաղորդագրությունը (տեղեկատվությունը), կարծիքների բազմազանությունը.

բ. սպառողներին մատուցել հաղորդումներ, որոնցում ներկայացվում են Հայաստանի Հանրապետության տարբեր տարածաշրջանների, ազգային փոքրամասնությունների, հասարակության տարբեր շերտերի ու սոցիալական խմբերի շահերը.

գ. սպառողներին մատուցել հաղորդումներ, որոնք ուղղված են ազգային, ռասայական, կրոնական և սեռային հատկանիշով խտրականություն պարունակող կարծրատիպերի հաղթահարմանը.

դ. սպառողներին մատուցել հաղորդումներ, որոնք ուղղված են բնակչության իրավագիտակցության, սոցիալական պատասխանատվության եւ մեդիագրագիտության բարձրացմանը, հասարակական-քաղաքական , միջազգային իրադարձությունների մասին բնակչությանը համալիր տեղեկատվության տրամադրմանը, Հայաստանի Հանրապետությունում աղետների կառավարմանը եւ նվազեցմանը.

ե. եթերային ժամանակ տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների կյանքի և մշակույթի մասին հաղորդումների հեռարձակման նպատակով, ոչ գիշերային ժամերին ազգային փոքրամասնությունների համար նվազագույնը շաբաթական 30 րոպե հանրային տեսալսողական Հեռարձակողների և 2 ժամ՝ հանրային Լսողական հեռարձակողի եթերով.

զ. իրավատեր հանդիսանալու դեպքում, ապահովել կրթական, մշակութային եւ մանկական տեսալսողական հաղորդումների՝ այդ թվում ֆիլմերի եւ դրանց կրկնօրինակումների շրջանառությունը մարզային սփռում իրականացնող Հեռարձակողների համար, ոչ ուշ, քան դրանց առաջին ամրագրումից 3 տարի անց:

7. Հանրային հեռարձակողների տեսալսողական հաղորդումներում թույլատրվում է ցուցադրել մեկ եթերային ժամվա ընթացքում մինչեւ 5 րոպե տեւողությամբ գովազդ, ինչպես նաեւ մշակութային, ուսումնական, գիտակրթական եւ սպորտային

տեսալսողական հաղորդումների ցուցադրման ժամանակ հովանավորների մասին սույն օրենքին համապատասխան նշել տեղեկություններ (հովանավորություն):

8. Մշակութային, ուսումնական, գիտակրթական եւ սպորտային տեսալսողական հաղորդումների ցուցադրման ժամանակ հովանավորների մասին սույն օրենքին համապատասխան տեղեկություններ նշելու դեպքերի (հովանավորություն) վրա չի տարածվում Հանրային հեռարձակողի գովազդի հեռարձակման համար սույն օրենքով սահմանված ժամանակային սահմանափակումը: Մշակութային, ուսումնական, գիտակրթական եւ սպորտային հաղորդումների ցուցադրման ժամանակ հովանավորի մասին տեղեկությունների հիշատակումը չպետք է գերազանցի տվյալ հաղորդման ընդհանուր տեւողության 2,5 տոկոսը:

9. Հանրային հեռարձակողին թույլատրվում է ցուցադրել սոցիալական գովազդ՝ «Գովազդի մասին» օրենքով սահմանված կարգով: Ժամը 00:00-ից մինչեւ 18.00-ն ընկած ժամանակահատվածում սոցիալական գովազդը հեռարձակվում է անհատույց հիմունքներով: Ժամը 18:00-ից մինչեւ 00:00-ն ընկած ժամանակահատվածում սոցիալական գովազդը հեռարձակվում է վճարովի հիմունքներով՝ «Գովազդի մասին» օրենքով սահմանված կարգով:

10. Հանրային հեռարձակողների կանոնադրությունները հաստատում է Խորհուրդը:

11. Հանրային հեռարձակողները գործում են սույն օրենքին, իրենց կանոնադրությանը եւ այլ իրավական ակտերին համապատասխան:

12. Հանրային հեռարձակողների հեռարձակման ենթակա պաշտոնական հաղորդագրության (տեղեկատվության) արտադրությունն իրականացնում է այդ հաղորդագրությունը (տեղեկատվությունը) ներկայացնող մարմնի աշխատակազմը (ստորաբաժանումը) կամ այդ մարմնի համաձայնությամբ՝ Հանրային հեռարձակողները կամ այլ Հեռարձակողներ:

Հոդված 23. Հանրային հեռարձակողի խորհուրդը

1. Հանրային հեռարձակողի կառավարումն ապահովող եւ հսկողություն իրականացնող մարմինը Խորհուրդն է:

2. Խորհուրդը բաղկացած է յոթ անդամից՝ Խորհրդի նախագահ եւ Խորհրդի 6 անդամ: Խորհրդում պետք է ապահովվի սեռային ներկայացվածությունը:

3. Խորհրդի անդամները նշանակվում են մրցութային կարգով վարչապետի կողմից՝ վեց տարի ժամկետով:Նույն անձը չի կարող անընդմեջ երկու անգամից ավել ընդգրկվել Խորհրդի կազմում:

4. Խորհրդի անդամ կարող են լինել Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, հայերենին տիրապետող եւ բարձրագույն կրթություն ունեցող, տեսալսողական բնագավառի, ինչպես նաև գիտության, կրթության, մշակույթի և լրագրության ոլորտի գործիչներ:

5. Որպես Խորհրդի անդամի թեկնածու չեն կարող առաջադրվել՝

1) դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված անձը.

2) անձը, որը դատապարտվել է հանցագործության համար, եւ դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ.

3) կուսակցությունների ղեկավար մարմինների անդամները և նրանց փոխկապակցված անձինք.

4) մասնավոր Հեռարձակողների հիմնադիրները.

5) Հանրապետության նախագահը եւ նրա հետ փոխկապակցված անձինք.

6) Կառավարության անդամները եւ նրանց հետ փոխկապակցված անձինք.

7) Ազգային ժողովի նախագահը եւ նրա հետ փոխկապակցված անձինք:

6. Խորհրդի անդամ նշանակվելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, Խորհրդի անդամը պարտավոր է՝

1) դադարեցնել ձեռնարկատիրական կամ քաղաքական գործունեությամբ զբաղվելը.

2) ազատվել վճարովի հիմունքներով աշխատանքից, բացառությամբ գիտական, կրթական կամ ստեղծագործական աշխատանքի:

Հոդված 24. Խորհրդի գործունեության կարգը

1. Խորհուրդը գործում է սույն օրենքի, այլ օրենքների եւ իր հաստատած կանոնակարգի համաձայն:

2. Խորհուրդն իր աշխատանքներն իրականացնում է ամենօրյա գործունեության եւ նիստերի միջոցով: Խորհրդի նիստերը գումարվում են Խորհրդի նախագահի նախաձեռնությամբ կամ խորհրդի առնվազն երեք անդամի պահանջով, բայց ոչ պակաս, քան ամիսը մեկ անգամ:

3. Խորհրդի նախագահի բացակայության, ինչպես նաեւ նրա կողմից իր պարտականությունները կատարելու անհնարինության դեպքում նիստը վարում է նրան փոխարինող Խորհրդի անդամը, իսկ նրա բացակայության դեպքում՝ Խորհրդի տարիքով ավագ անդամը:

4. Խորհրդի նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա է Խորհրդի անդամների կեսից ավելին:

5. Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող Խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

6. Խորհրդի նիստերն արձանագրվում են:

7. Խորհուրդն ապահովում է իր գործունեության հրապարակայնությունը: Խորհուրդն իր գործունեության, ընդունած որոշումների եւ ծրագրերի մասին պարբերաբար տեղեկատվություն է տրամադրում զանգվածային լրատվության միջոցներին եւ հրապարակում իր պաշտոնական կայքում:

8. Խորհրդի նախագահի հիմնական աշխատավարձի հաշվարկման գործակիցը 10 է, իսկ Խորհրդի անդամներինը՝ 7.5: Խորհրդի նախագահի եւ Խորհրդի անդամների աշխատավարձը որոշվում է «Պետական պաշտոններ եւ պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքով սահմանված բազային աշխատավարձը սույն մասում նշված գործակիցներով բազմապատկելու միջոցով:

Հոդված 25. Խորհրդի անդամների նշանակման կարգը եւ լիազորությունների դադարումը

1. Խորհրդի անդամի թափուր տեղի համալրման մրցույթն անցկացնելու նպատակով կարգավորող պետական մարմինը ձեւավորում է ժամանակավոր մրցութային հանձնաժողով (այսուհետ՝ Մրցութային հանձնաժողով):

2. Մրցութային հանձնաժողովը բաղկացած է 5 անդամից, ներառյալ՝ նախագահը, որը բաց քվեարկությամբ ընտրվում է Մրցութային հանձնաժողովի անդամների կողմից առաջին նիստի ժամանակ:

3. Մրցութային հանձնաժողովի նախագահը եւ անդամները պաշտոնավարում են մինչեւ Խորհրդի անդամի թափուր տեղի համալրումը:

4. Մրցութային հանձնաժողովի անդամ կարող են լինել լրագրության, Հեռարձակողի կառավարման բնագավառի, գիտության, մշակույթի եւ արվեստի գործիչներ, ինչպես նաեւ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

5. Մրցութային հանձնաժողովի ձեւավորման կարգը սահմանում է կարգավորող պետական մարմինը:

6. Մրցութային հանձնաժողովի ընթացիկ գործունեությունը սպասարկում է կարգավորող պետական մարմինը:

7. Մրցութային հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով: Մրցութային հանձնաժողովի նիստերը հրավիրում եւ վարում է Մրցութային հանձնաժողովի նախագահը, իսկ դրա անհնարինության դեպքում՝ Մրցութային հանձնաժողովի տարիքով ավագ անդամը:

8. Մրցութային հանձնաժողովի անդամները գործում են հասարակական հիմունքներով:

9. Խորհրդի անդամի թափուր տեղի առկայության դեպքում Խորհրդի նախագահը, իսկ Խորհրդի նախագահի թափուր տեղի առկայության դեպքում Խորհրդի տարիքով ավագ անդամը թափուր տեղն առաջանալուց հետո՝ Մրցութային հանձնաժողով ձեւավորելու համար 3-օրյա ժամկետում այդ մասին գրավոր տեղեկացնում է կարգավորող պետական մարմնին:

10. Մրցութային հանձնաժողովը, ձեւավորվելուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում, ինչպես նաեւ Կառավարության եւ կարգավորող պետական մարմնի պաշտոնական կայքում հայտարարություն է տարածում Խորհրդի անդամի թափուր տեղի համալրման համար մրցույթի անցկացման վերաբերյալ:

11. Հայտարարության մեջ նշվում են՝

1) թափուր պաշտոնի թեկնածուին ներկայացվող պահանջները.

2) մրցույթին մասնակցելու համար ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, դրանք ներկայացնելու վայրը, ժամկետը, մրցույթի անցկացման օրը եւ ժամը:

12. Մրցույթն անցկացվում է նաեւ այն դեպքում, երբ դրան մասնակցելու համար դիմել է մեկ մասնակից:

13. Եթե մրցույթին մասնակցելու համար ոչ մի դիմում չի ներկայացվել կամ մրցույթի արդյունքով հաղթող չի ճանաչվել, ապա մրցույթը համարվում է չկայացած եւ անցկացվում է նոր մրցույթ:

14. Նոր մրցույթն անցկացվում է ընդհանուր հիմունքներով՝ սույն հոդվածով սահմանված կարգով:

15. Փաստաթղթերը ներկայացվում են կարգավորող պետական մարմին մրցույթի անցկացման մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող 10 օրվա ընթացքում: Նշված ժամկետից հետո ներկայացված փաստաթղթերը Մրցութային հանձնաժողովը չի քննարկում:

16. Մրցույթի արդյունքներով հաղթողին որոշելու նպատակով Մրցութային հանձնաժողովի նիստը հրավիրվում է փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետի ավարտից հետո՝ 10 օրվա ընթացքում:

17. Մրցութային հանձնաժողովը, ուսումնասիրելով մրցույթի մասնակիցների վերաբերյալ փաստաթղթերը, որոշում է մրցույթի հաղթողին: Անհրաժեշտության դեպքում մինչեւ մրցույթի հաղթողի վերաբերյալ որոշում կայացնելը Մրցութային հանձնաժողովը կարող է թեկնածուի հետ անցկացնել հարցազրույց:

18. Մրցութային հանձնաժողովի նախագահի հրավերով նիստերին կարող են մասնակցել Հեռարձակման ոլորտի մասնագետներ:

19. Մրցութային հանձնաժողովի որոշումներն ընդունվում են նրա անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Մրցութային հանձնաժողովի անդամները քվեարկում են «կողմ» կամ «դեմ»:

20. Մրցույթի արդյունքով Մրցութային հանձնաժողովն ընդունում է հետեւյալ որոշումներից մեկը.

1) մրցույթը չկայացած համարելու եւ նոր մրցույթ անցկացնելու մասին.

2) մրցույթում հաղթող ճանաչելու մասին:

21. Մրցութային հանձնաժողովը մրցույթում հաղթող է ճանաչում մեկ մասնակցի:

22. Մրցութային հանձնաժողովի կողմից մրցույթում հաղթող ճանաչվելու մասին որոշումն ընդունելուց հետո՝ եռօրյա ժամկետում, վարչապետը Խորհրդի անդամ է նշանակում մրցույթում հաղթած մասնակցին:

23. Մրցույթի համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը եւ դրանց ներկայացման կարգը սահմանում է Կառավարությունը:

24. Խորհրդի անդամները նախքան պաշտոնավարման ժամկետը լրանալը չեն կարող հետ կանչվել իրենց պաշտոններից, բացառությամբ այն դեպքերի, երբ Խորհրդի անդամը՝

1) հրաժարական է տվել.

2) ընտրվել կամ նշանակվել է այլ պաշտոնում.

3) վերջին մեկ տարվա ընթացքում անհարգելի պատճառով չի մասնակցել Խորհրդի՝ երկու անընդմեջ կամ ընդհանուր առմամբ երեք նիստերին.

4) նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռը մտել է օրինական ուժի մեջ.

5) կորցրել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը.

6) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

7) չի կատարել սույն օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված պարտականությունները.

8) հրաժարվել է մասնակցել Խորհրդի նախագահի ընտրության քվեարկությունը.

9) մահացել է:

Հոդված 26. Խորհրդի նախագահը

1. Խորհրդի նախագահի ընտրությունը կատարվում է հետեւյալ կարգով.

1) Խորհուրդը իր կազմից, գաղտնի քվեարկությամբ ընտրում է Խորհրդի նախագահ 4 տարի ժամկետով.

2) Խորհրդի նախագահ չի կարող ընտրվել Խորհրդի անդամի թափուր պաշտոն լինելու դեպքում: Խորհրդի անդամը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվել Խորհրդի նախագահ.

3) Խորհրդի նախագահի ընտրության ընթացակարգը սահմանվում է կարգավորող պետական մարմնի որոշմամբ.

4) երեք անգամ անընդմեջ Խորհրդի նախագահ չընտրելու դեպքում Խորհուրդն արձակվում է.

5) արձակված խորհուրդը շարունակում է իր գործունեությունը մինչեւ նոր Խորհրդի ամբողջական ձեւավորումը:

2. Խորհրդի նախագահը՝

1) կազմակերպում է Խորհրդի եւ նրա աշխատակազմի գործունեությունը.

2) գումարում է Խորհրդի նիստերը եւ նախագահում է դրանք, ստորագրում է Խորհրդի ընդունած որոշումները եւ նիստերի արձանագրությունները, բացառությամբ խորհրդի նախագահին պաշտոնանկ անելու մասին արձանագրությունը եւ որոշումը, որոնք ստորագրում է խորհրդի ավագ անդամը.

3) վերահսկում է Խորհրդի որոշումների կատարումը.

4) ընդունում եւ ազատում է Խորհրդի աշխատակազմի աշխատողներին.

5) համակարգում եւ ապահովում է Խորհրդի բնականոն աշխատանքը:

6) Հայաստանի Հանրապետությունում, օտարերկրյա պետություններում եւ միջազգային կազմակերպություններում ներկայացնում է Խորհուրդը.

7) իր իրավասության սահմաններում առանց լիազորագրի հանդես է գալիս Խորհրդի անունից եւ ներկայացնում են նրանց շահերը.

3. Խորհրդի նախագահի բացակայության կամ պաշտոնեական պարտականությունները կատարելու անհնարինության դեպքում նրան

փոխարինում է Խորհրդի նախագահի կողմից որպես փոխարինող նշանակված Խորհրդի անդամը, իսկ եթե Խորհրդի նախագահը փոխարինող չի նշանակել, ապա Խորհրդի տարիքով ավագ անդամը:

Հոդված 27. Խորհրդի իրավասությունները

1. Խորհուրդը՝

1) սահմանում է հանրային հեռարձակողի տեսալսողական հաղորդումների ընդհանուր ծավալը եւ տեսալսողական ծրագրերի թիվը.

2) սահմանում է Հանրային հեռարձակողի ֆինանսական միջոցների օգտագործման կարգը եւ ուղղությունները.

3) հաստատում է Հանրային հեռարձակողի աշխատողների հաստիքացուցակը, պաշտոնները, նրանց հետ կնքվող պայմանագրերի ձեւերը, պայմանները եւ վարձատրման կարգը.

4) սահմանում է Հանրային հեռարձակողի այն պաշտոնների ցանկը, որոնք զբաղեցնողներն իրավունք չունեն աշխատելու այլ Հեռարձակողներում կամ զանգվածային լրատվության այլ միջոցներում.

5) սահմանում է Հանրային հեռարձակողի գործադիր տնօրենների թափուր տեղերի համալրման համար մրցույթի անցկացման կարգը.

6) նշանակում է Հանրային հեռարձակողների՝ մրցույթում հաղթող ճանաչված գործադիր տնօրեններին.

7) Հանրային հեռարձակողների գործադիր տնօրենների ներկայացմամբ նշանակում և ազատում է գործադիր տնօրենների տեղակալներին.

8) յուրաքանչյուր տարի մինչեւ հունվարի 20-ը լսում է Հանրային հեռարձակողների նախորդ տարվա գործունեության մասին գործադիր տնօրենների հաշվետվությունները.

9) Հանրային հեռարձակողների տնօրենների ներկայացմամբ պարբերաբար հաստատում է ծրագրային քաղաքականությունը.

10) հաստատում է իր կանոնադրությունը եւ Հանրային հեռարձակողի կառուցվածքը.

11) հաստատում է Խորհրդի աշխատակազմի կառուցվածքը եւ հաստիքացուցակը.

12) հաստատում է Հանրային հեռարձակողի լրագրողների մասնագիտական վարքագծի կանոնները.

13) ստացված բողոքների հիման վրա կամ իր նախաձեռնությամբ ուսումնասիրում է լրագրողների մասնագիտական վարքագծի կանոնների խախտման դեպքերը եւ ընդունում է խորհրդատվական բնույթի եզրակացություն.

14) առնվազն տարին մեկ անգամ կազմակերպում է Հանրային հեռարձակողների գործունեության վերաբերյալ հասարակական կարծիքի ուսումնասիրություններ ու հրապարակում դրանց արդյունքները.

15) իրականացնում է «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքով իրեն վերապահված այլ իրավասություններ.

16) Հանրային հեռարձակողի կողմից տեղեկատվական, կրթական, մշակութային եւ ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանության ապահովման վիճակի վերաբերյալ հաշվետվություն է ներկայացնում կարգավորող պետական մարմին.

17 հայտարարում է Հանրային հեռարձակողի ֆինանսատնտեսական գործունեության անկախ աուդիտ անցկացնելու վերաբերյալ մրցույթ.

18) գործադիր տնօրենների եւ նրանց տեղակալների նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ եւ նշանակում կարգապահական տույժեր.

19) անդամների ձայների մեծամասնությամբ, փակ գաղտնի քվեարկությամբ, երկշաբաթյա ժամկետում որոշում է կայացնում խորհրդի նախագահին պաշտոնանկ

անելու վերաբերյալ Հանրային հեռարձակողների հիմնադրի միջնորդությունը բավարարելու կամ մերժելու մասին:

2. Խորհրդի որոշումները պետք է լինեն պատճառաբանված:

3. Խորհրդի որոշումներն իրենց իրավասության շրջանակներում կատարում են Հանրային հեռարձակողների գործադիր տնօրենները:

4. Խորհուրդն իր աշխատանքները կազմակերպում է աշխատակազմի միջոցով: Խորհրդի աշխատակազմը «Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմ» պետական հիմնարկն է:

Հոդված 28. Հանրային հեռարձակողների գործադիր տնօրենների իրավասությունները

1. Հանրային հեռարձակողների գործադիր տնօրենները՝

1) ղեկավարում են Հանրային հեռարձակողների ընթացիկ գործունեությունը.

2) Խորհրդի հաստատմանն են ներկայացնում ծրագրերի կառուցվածքը, դրանց առանձին բաժինների համամասնությունները, հաղորդացանցը.

3) արձակում են հրամաններ.

4) կնքում են պայմանագրեր եւ վերահսկում դրանց կատարումը.

5) մասնակցում են Խորհրդի աշխատանքներին խորհրդակցական ձայնի իրավունքով.

6) Հայաստանի Հանրապետությունում, օտարերկրյա պետություններում եւ միջազգային կազմակերպություններում ներկայացնում են Հանրային հեռարձակողին.

7) իրենց իրավասության սահմաններում առանց լիազորագրի հանդես են գալիս Հանրային հեռարձակողի անունից եւ ներկայացնում են նրանց շահերը.

8) օրենքով, այլ իրավական ակտերով եւ Հանրային հեռարձակողների կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում են Հանրային հեռարձակողին պատկանող գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

9) տալիս են Հանրային հեռարձակողների անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

10) նշանակում եւ ազատում են Հանրային հեռարձակողների աշխատողներին, բացառությամբ գործադիր տնօրենների տեղակալներին, նրանց նկատմամբ կիրառում են խրախուսման միջոցներ եւ նշանակում կարգապահական տույժեր.

11) Խորհրդի հաստատմանն են ներկայացնում Հանրային հեռարձակողների տարեկան հաշվետվությունները.

12) ապահովում են աշխատողների մասնագիտական կատարելագործումը.

13) իրականացնում են օրենքով, իրավական այլ ակտերով եւ Հանրային հեռարձակողների կանոնադրությամբ նախատեսված այլ իրավասություններ:

2. Հանրային հեռարձակողների գործադիր տնօրենների բացակայության կամ պաշտոնեական պարտականությունները կատարելու անհնարինության դեպքերում նրանց փոխարինում եւ նրանց լիազորություններն իրականացնում են Հանրային հեռարձակողների գործադիր տնօրենների տեղակալները:

Հոդված 29. Հանրային հեռարձակողների ֆինանսավորումը

1. Խորհուրդը «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքով սահմանված կարգով առաջիկա տարվա բյուջետային գործընթացն սկսելու մասին վարչապետի որոշմամբ սահմանված ժամկետում յուրաքանչյուր տարի կազմում եւ պետական ֆինանսների կառավարման բնագավառում Հայաստանի Հանրապետության լիազորված պետական կառավարման համակարգի մարմին է ներկայացնում Հանրային հեռարձակողների առաջիկա տարվա բյուջետային ֆինանսավորման հայտերը՝ առանձին նշելով Խորհրդին, Հանրային

հեռարձակողներին հատկացվելիք գումարները առաջիկա տարվա պետական բյուջեի նախագծում ներառելու համար:

2. Հանրային հեռարձակողների ֆինանսավորումը չի կարող պակաս լինել նախորդ տարվա բյուջետային ֆինանսավորման չափից: Հանրային հեռարձակողների բյուջետային ֆինանսավորման չափը կարող է համամասնորեն փոփոխվել՝ կախված պետական բյուջեի համամասնության փոփոխության հետ:

3. Հանրային հեռարձակողների հաջորդ տարվա ծախսերի նախահաշիվը հաստատում է Խորհուրդը՝ Հանրային հեռարձակողների գործադիր տնօրենների ներկայացմամբ:

Հոդված 30. Հանրային հեռարձակողների տարեկան հաղորդումը

1. Խորհուրդը մինչեւ յուրաքանչյուր տարվա ապրիլի 1-ը Ազգային ժողով է ներկայացնում Հանրային հեռարձակողների նախորդ տարվա գործունեության (ներառյալ՝ ծրագրային և ֆինանսական), ինչպես նաև սույն օրենքի 22-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված դրույթների կատարման վերաբերյալ հաղորդում:

2. Հանրային հեռարձակողների նախորդ տարվա գործունեության վերաբերյալ հաղորդումը հրապարակվում է Խորհրդի պաշտոնական կայքում:

Գ Լ Ո Ւ Խ 6
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆԸ

Հոդված 31. Կարգավորող պետական մարմինը

1. Կարգավորող պետական մարմինը Հեռուստատեսության եւ ռադիոյի հանձնաժողովն է:

2. Կարգավորող պետական մարմինն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանով եւ իր անվանմամբ կնիք, դրոշմակնիք, ձեւաթուղթ եւ անհատականացման այլ միջոցներ:

3. Կարգավորող պետական մարմինն օրենքով իրեն վերապահված իրավասության շրջանակներում կամ հատուկ լիազորությունների առկայության դեպքում ներկայացնում է Հայաստանի Հանրապետությունն այլ պետություններում եւ միջազգային կազմակերպություններում: Կարգավորող պետական մարմինը կարող է համագործակցել այլ պետությունների համապատասխան կառույցների եւ միջազգային կազմակերպությունների հետ:

4. Կարգավորող պետական մարմնի նստավայրը Երեւան քաղաքն է: Իր որոշմամբ կարգավորող պետական մարմինը կարող է արտագնա նիստեր գումարել նաեւ այլ համայնքներում:

Հոդված 32. Կարգավորող պետական մարմնի լիազորությունները

1. Կարգավորող պետական մարմինը՝

1) հրապարակային եւ մրցութային կարգով հատկացնում է սլոթ.

2) իրականացնում է իրավաբանական կամ ֆիզիկական անձի հեղինակազորումը.

3) իրականացնում է սլոթի օգտագործման լիցենզավորման մրցույթը.

4) իրականացնում է ցանցային օպերատորի գործունեության լիցենզավորումը.

5) իրականացնում է մասնավոր մուլտիպլեքս օպերատորի գործունեության լիցենզավորման մրցույթը.

6) սահմանում է սլոթի օգտագործման, մուլտիպլեքս օպերատորի գործունեության լիցենզավորման մրցույթի անցկացման կարգը, մրցույթի

մասնակցության հայտերի ձեւերը, ցանցային օպերատորի գործունեության լիցենզավորման կարգը եւ դիմումի ձեւը.

7) հաստատում է լիցենզիայի ձեւերը.

8) կազմում եւ հրապարակում է լիցենզիա ստացած անձանց ցուցակը, հսկողություն է իրականացնում լիցենզիայում նշված պայմանների եւ սույն օրենքի պահանջների կատարման նկատմամբ.

9) տեսալսողական հաղորդումների տեսագրությունների եւ ձայնագրությունների ընտրանքային դիտարկման միջոցով պարզում է դրանց համապատասխանությունը օրենսդրության եւ լիցենզիայի պահանջներին.

10) վերահսկում է տեսալսողական հաղորդումների տեխնիկական չափանիշների համապատասխանությունը Կառավարության որոշմամբ սահմանված ստանդարտներին.

11) սույն օրենքի խախտման կամ իր որոշումները չկատարելու դեպքում կիրառում է պատասխանատվության միջոցներ.

12) վերահսկում է Հեռարձակողների կողմից նախընտրական քարոզչության Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված կարգի պահպանումը.

13) ուսումնասիրում եւ պատասխանում կամ եզրակացություն է տալիս Հեռարձակողների, օպերատորների եւ տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորների գործունեության վերաբերյալ բողոքներին, առաջարկություններին եւ հարցումներին.

14) իրականացնում է Հեռարձակողների եւ օպերատորների գործունեության մշտադիտարկում.

15) կարող է ներգրավվել տեսալսողական մեդիայի բնագավառին առնչվող միջազգային պայմանագրերի եւ իրավական ակտերի նախագծերի մշակմանը.

16) «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» օրենքով սահմանված կարգով եւ դեպքերում իրականացնում է ստուգումներ եւ ուսումնասիրություններ.

17) վերահսկողություն է իրականացնում Հանրային հեռարձակողներում տեղեկատվական, կրթական, մշակութային եւ ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանության ապահովման վերաբերյալ.

18) սահմանում է Խորհրդի կողմից սույն օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով նախատեսված հաշվետվության ներկայացման կարգը եւ ձեւը.

19) սահմանում է ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ վարչապետին կամ արտակարգ դրության ընթացքում ի պաշտոնե արտակարգ դրության տարածքի պարետ հանդիսացող պաշտոնյային եթերաժամանակ հատկացնելու կարգը եւ պայմանները.

20) սահմանում է մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրության ձեւը.

21) օրենքով սահմանված կարգով հաստատում է իր կառուցվածքը.

22) տալիս է եզրակացություն սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ.

23) մասնակցում է տեսալսողական մեդիա ոլորտի քաղաքականության մշակմանը.

24) սահմանում է հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման պայմանները եւ հրապարակում է ազատ սլոթերի առկայության վերաբերյալ տեղեկատվություն.

25) ստուգում է հեռարձակողի կողմից սլոթի օգտագործման լիցենզավորման հայտին կցված լիցենզիայի պայմանների համապատասխանությունը.

26) իրականացնում է սույն օրենով նախատեսված այլ լիազորություններ

2. Կարգավորող պետական մարմինը սույն օրենքով սահմանված սուբյեկտներից, պետական մարմին

ներից եւ պաշտոնատար անձանցից պահանջում եւ ստանում է անհրաժեշտ փաստաթղթեր եւ այլ տեղեկատվություն:

3. Տեսալսողական մեդիայի մասին օրենսդրության պահանջների խախտում հայտնաբերելու դեպքում կարգավորող պետական մարմինն իրավասու է Հանրային հեռարձակողներին հանձնարարելու սահմանված ժամկետում վերացնել հայտնաբերված թերությունները:

4. Կարգավորող պետական մարմինը իրավասու է՝

1) սույն օրենքի տուգանք նախատեսող հոդվածով արգելված արարք հայտնաբերելու դեպքում միջնորդություն ներկայացնել Խորհրդին Հանրային հեռարձակողի գործադիր տնօրենին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ.

2) լիցենզիայի գործողության կասեցում կամ դադարեցում նախատեսող հոդվածներով արգելված արարքները կատարելու, ինչպես նաեւ սահմանված ժամկետում թերությունները չվերացնելու դեպքում կարգավորող պետական մարմինը իրավասու է միջնորդություն ներկայացնել Խորհրդին՝ Հանրային հեռարձակողի գործադիր տնօրենի պաշտոնավարումը դադարեցնելու վերաբերյալ:

5. Կարգավորող պետական մարմինը Հեռարձակողի հեղինակազորման կամ լիցենզիայի գործողությունը կասեցնելու կամ դադարեցնելու դեպքում՝ եռօրյա ժամկետում այդ մասին հայտնում է այդ ծրագիրը հեռարձակող մուլտիպլեքս օպերատորին՝ հեռարձակումը անհապաղ դադարեցնելու համար:

6. Կարգավորող պետական մարմինն իր լիազորություններն իրականացնելիս կարող է հասարակական կամ պայմանագրային հիմունքներով ներգրավել մասնագետների եւ փորձագետների:

7. Կարգավորող պետական մարմինն ընդունում է սույն օրենքով նախատեսված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական, անհատական եւ ներքին ակտեր:

8. Կարգավորող պետական մարմնի ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը հրապարակվում են նաեւ կարգավորող պետական մարմնի պաշտոնական կայքում:

9. Կարգավորող պետական մարմինը, կարգավորող պետական մարմնի անդամները եւ կարգավորող պետական մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների աշխատակիցներն իրենց լիազորություններն իրականացնելիս անկախ են եւ ենթարկվում են միայն օրենքին: Չի թույլատրվում անօրինական ազդեցություն եւ միջամտություն նրանց գործունեությանը:

Հոդված 33. Կարգավորող պետական մարմնի գործունեության սկզբունքները

Կարգավորող պետական մարմինն իր գործունեությունն իրականացնում է օրինականության, ժողովրդավարության, հավասարության, անաչառության, ինքնուրույնության, կոլեգիալության եւ հրապարակայնության սկզբունքների հիման վրա:

Հոդված 34. Կարգավորող պետական մարմնի անդամների թեկնածուներին եւ անդամներին ներկայացվող պահանջները եւ նրանց վարձատրության կարգը

1. Կարգավորող պետական մարմնի անդամի թեկնածու կարող է լինել քսանհինգ տարին լրացած, վերջին չորս տարում միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, վերջին չորս տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, ընտրական իրավունք ունեցող եւ հայերենին տիրապետող յուրաքանչյուր ոք, որն ունի հեռարձակման, տնտեսության, կառավարման, ճարտարագիտության, մշակույթի, արվեստի կամ իրավագիտության առնվազն երեք

տարվա մասնագիտական աշխատանքային փորձառություն, բարձրագույն կրթություն, հանդիսանում է զանգվածային լրատվության բնագավառում հեղինակավոր մասնագետ:

2. Կարգավորող պետական մարմնի անդամ չի կարող լինել՝

1) անձը, որը դատապարտվել է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի հիման վրա, եւ դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ.

2) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված անձը.

3. Կարգավորող պետական մարմնի անդամներն իրենց լիազորությունների իրականացման ժամանակահատվածում չեն կարող լինել որեւէ կուսակցության անդամ կամ որեւէ այլ կերպ զբաղվել քաղաքական գործունեությամբ: Հրապարակային ելույթներում նրանք պետք է ցուցաբերեն քաղաքական զսպվածություն:

4. Կարգավորող պետական մարմնի անդամները չեն կարող զբաղեցնել իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում, որեւէ պաշտոն՝ առեւտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական եւ ստեղծագործական աշխատանքից: Կարգավորող պետական մարմնի անդամի պարտականությունները գերակա են նրա կողմից իրականացվող այլ գործունեության նկատմամբ:

5. Կարգավորող պետական մարմնի անդամի լիազորությունները ստանձնելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, կարգավորող պետական մարմնի անդամը պարտավոր է՝

1) դադարեցնել ձեռնարկատիրական կամ քաղաքական գործունեությամբ զբաղվելը.

2) ազատվել պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում, ինչպես նաեւ առեւտրային կազմակերպություններում զբաղեցրած պաշտոններից.

3) ազատվել վճարովի հիմունքներով աշխատանքից, բացառությամբ գիտական, կրթական կամ ստեղծագործական աշխատանքի:

6. Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ իր պաշտոնն ստանձնելիս տալիս է հետեւյալ երդումը.

«Ստանձնելով կարգավորող պետական մարմնի անդամի պարտականությունները՝ երդվում եմ, հավատարիմ լինելով Սահմանադրությանը եւ օրենքներին, պաշտպանել մարդու իրավունքները եւ հիմնարար ազատությունները, աջակցել քաղաքացիական հասարակության ձեւավորմանը՝ կարծիքն ազատ արտահայտելու իրավունքի, տեղեկատվության ազատության եւ բազմակարծության ապահովման միջոցով:

Երդվում եմ, որ պարտականություններս կկատարեմ անաչառ, առավելագույն բարեխղճությամբ եւ ազնվությամբ, կգործեմ հրապարակայնության, անկողմնակալության եւ արդարության սկզբունքով՝ անկախ որեւէ քաղաքական կամ տնտեսական շահից:»:

7. Կարգավորող պետական մարմնի անդամների վարձատրության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքով:

Հոդված 35. Կարգավորող պետական մարմնի կազմավորման կարգը

1. Կարգավորող պետական մարմինը բաղկացած է յոթ անդամից: Կարգավորող պետական մարմնի անդամներին Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովի առաջարկությամբ ընտրում է Ազգային ժողովը՝ պատգամավորների

ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով, վեց տարի ժամկետով՝ սեռային ներկայացվածությամբ:

2. Կարգավորող պետական մարմնի անդամի լիազորությունների ավարտման օրվանից ոչ շուտ, քան մեկ ամիս առաջ եւ ոչ ուշ, քան մեկ շաբաթ առաջ, իսկ այլ հիմքով թափուր տեղ առաջանալու դեպքում թափուր տեղն առաջանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, կարգավորող պետական մարմնի նախագահը, իսկ կարգավորող պետական մարմնի նախագահի թափուր տեղ առաջանալու դեպքում կարգավորող պետական մարմնի նախագահին փոխարինող անդամը այդ մասին գրավոր տեղեկացնում է Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովին:

3. Ազգային ժողովը կարգավորող պետական մարմնի անդամի ընտրությունը կատարում է Սահմանադրությամբ եւ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով սահմանված կարգով:

4. Կարգավորող պետական մարմինն իր կազմից ընտրում է կարգավորող պետական մարմնի նախագահ: Կարգավորող պետական մարմնի անդամը կարող է առաջադրվել որպես կարգավորող պետական մարմնի նախագահ ինքնաառաջադրման կամ կարգավորող պետական մարմնի որեւէ այլ անդամի կողմից իր համաձայնությամբ առաջադրվելու եղանակով:

5. Կարգավորող պետական մարմնի նախագահի ընտրության համար գաղտնի քվեարկում են կարգավորող պետական մարմնի բոլոր անդամները:

6. Քվեարկության համար կազմվում է քվեաթերթիկ, որում ներառվում են բոլոր թեկնածուները:

7. Քվեարկելիս կարգավորող պետական մարմնի անդամն ունի մեկ ձայն: Եթե քվեարկության մասնակիցն ավելի ձայն է տվել, ապա այդ քվեաթերթիկը համարվում է անվավեր:

8. Եթե քվեարկության արդյունքով որեւէ թեկնածու չի ստացել ձայների կեսից ավելին, ապա ինքնաառաջադրվում են առավել ձայներ ստացած երկու թեկնածուները եւ անցկացվում է լրացուցիչ քվեարկություն:

9. Եթե երկրորդ առավել ձայներ ստացած թեկնածուները երկուսն են, ապա հավելյալ քվեարկությամբ որոշվում է, թե նրանցից ով կարող է ինքնաառաջադրվել:

10. Լրացուցիչ քվեարկության ժամանակ կարգավորող պետական մարմնի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայն: Լրացուցիչ քվեարկության ժամանակ ձայների թվի կեսից ավելին ստացած թեկնածուն համարվում է ընտրված: Եթե ոչ մեկը չի ստացել քվեարկության մասնակիցների առնվազն կեսից ավելի «կողմ» ձայներ, ապա անցկացվում է նոր ընտրություն:

11. Կարգավորող պետական մարմնի նախագահն ընտրվում է կարգավորող պետական մարմնի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Կարգավորող պետական մարմնի անդամն իրավունք չունի հրաժարվելու քվեարկությունից եւ քվեարկում է միայն «կողմ» կամ «դեմ»:

12. Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվել կարգավորող պետական մարմնի անդամ, ներառյալ՝ նախագահ:

13. Կարգավորող պետական մարմնի նախագահն ընտրվում է մինչեւ որպես կարգավորող պետական մարմնի անդամ իր պաշտոնավարման ժամկետի ավարտը:

14. Կարգավորող պետական մարմնի նոր նախագահի ընտրությունը կատարվում է Կարգավորող պետական մարմնի անդամների կազմը համալրվելուց հետո՝ տասնօրյա ժամկետում:

Հոդված 36. Կարգավորող պետական մարմնի նախագահը

1. Կարգավորող պետական մարմնի նախագահը՝

1) ապահովում է կարգավորող պետական մարմնի բնականոն գործունեության կազմակերպումը.

2) ներկայացնում է կարգավորող պետական մարմինն այլ մարմինների հետ հարաբերություններում.

3) ձեւավորում է նիստերի օրակարգը, հրավիրում եւ վարում է կարգավորող պետական մարմնի նիստերը, ընդ որում՝ կարգավորող պետական մարմնի անդամը մասնակցում է նիստերի օրակարգի ձեւավորմանը օրակարգի վերաբերյալ կարգավորող պետական մարմնի նախագահին առաջարկություններ ներկայացնելու միջոցով.

4) ստորագրում եւ հրապարակում է կարգավորող պետական մարմնի որոշումները, արձակում է հրամաններ.

5) վերահսկում է կարգավորող պետական մարմնի ընդունած որոշումների կատարումը.

6) կարգավորող պետական մարմնի նախորդ տարվա գործունեության մասին հաղորդումը ներկայացնում է Ազգային ժողով.

7) իրականացնում է կարգավորող պետական մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների ընդհանուր ղեկավարումը.

8) կարգավորող պետական մարմնի հաստատմանն է ներկայացնում կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրության նախագիծը, կառուցվածքը եւ հաստիքացուցակը.

9) օրենքով սահմանված կարգով նշանակում եւ ազատում է կարգավորող պետական մարմնի աշխատակիցներին:

2. Արձակուրդի կամ գործուղման կամ ժամանակավոր անաշխատունակության դեպքում կարգավորող պետական մարմնի նախագահի լիազորությունները ժամանակավորապես կատարում է նրա նշանակած կարգավորող պետական մարմնի անդամը:

3. Կարգավորող պետական մարմնի նախագահի կողմից արձակուրդի կամ գործուղման մեջ գտնվելու դեպքում իրեն փոխարինող չնշանակելու, ժամանակավոր անաշխատունակության, լիազորությունների դադարման կամ դադարեցման դեպքերում կարգավորող պետական մարմնի նախագահի պարտականությունները կատարում է կարգավորող պետական մարմնի տարիքով ավագ անդամը:

Հոդված 37. Կարգավորող պետական մարմնի անդամի լիազորությունների դադարումը եւ դադարեցումը

1. Կարգավորող պետական մարմնի անդամը չի կարող նախքան պաշտոնավարության ժամկետը լրանալը հետ կանչվել իր պաշտոնից:

2. կարգավորող պետական մարմնի անդամի լիազորությունները դադարեցվում են՝

1) անհամատեղելիության պահանջները խախտելու դեպքում.

3) ժամանակավոր անաշխատունակության հետեւանքով ավելի քան 4 ամիս անընդմեջ կամ ավելի քան 6 ամիս օրացուցային տարվա ընթացքում իր պաշտոնական պարտականությունները կատարելու անհնարինության, բացառությամբ մայրության, երեխայի ծննդյան կամ երեխայի որդեգրման դեպքում արձակուրդում լինելու հետ կապված պատճառներով, կամ ընտրվելուց հետո իր պաշտոնում նշանակվելուն խոչընդոտող ֆիզիկական արատ կամ հիվանդություն ձեռք բերելու դեպքում.

4) տարվա ընթացքում կարգավորող պետական մարմնի նիստերին անհարգելի պատճառով առնվազն երկու անգամ չմասնակցելու դեպքում.

5) մեկ անգամ քվեարկությունից հրաժարվելու կամ ձեռնպահ մնալու դեպքում, բացառությամբ սույն օրենքով նախատեսված՝ քվեարկությանը մասնակցությունը բացառող դեպքերի.

6) մեկ անգամ կարգավորող պետական մարմնի նիստին իր մասնակցությունը բացառող հանգամանքների մասին չհայտնելու դեպքում:

3. Կարգավորող պետական մարմնի անդամի լիազորությունների դադարման դեպքերն են՝

1) լիազորությունների ժամկետն ավարտվելը.

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կորցնելը կամ այլ պետության քաղաքացիություն ձեռք բերելը.

3) նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելը.

4) նրան անգործունակ, սահմանափակ գործունակ, անհայտ բացակայող կամ մահացած ճանաչելու վերաբերյալ դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելը.

5) նրա հրաժարականը.

6) նրա մահը:

4. Կարգավորող պետական մարմնի անդամի լիազորությունները սույն օրենքով սահմանված դեպքերում դադարեցնում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով:

5. Սույն հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետի հիմքով կարգավորող պետական մարմնի անդամի լիազորությունները դադարում են այդ հարցի համար հրավիրված նիստում կարգավորող պետական մարմնի անդամի կողմից իր հրաժարականը պնդելու կամ այդ նիստին չներկայանալու օրվանից:

6. Սույն հոդվածի 3-րդ մասի 6-րդ կետի հիմքով կարգավորող պետական մարմնի անդամի լիազորությունները դադարում են նրա մահվան օրը:

7. Սույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հիմքով կարգավորող պետական մարմնի անդամի լիազորությունները դադարում են նրա լիազորությունները դադարելու օրը:

8. Սույն հոդվածի 3-րդ մասի 5-րդ եւ 6-րդ կետերով նախատեսված հիմքերով կարգավորող պետական մարմնի անդամի լիազորությունները դադարելու դեպքում կարգավորող պետական մարմնի նախագահը անհապաղ հայտարարություն է տարածում կարգավորող պետական մարմնի պաշտոնական կայքում:

9. Սույն հոդվածի 3-րդ մասի 2-4-րդ կետերում նշված հիմքերով կարգավորող պետական մարմնի անդամի լիազորությունները դադարում են համապատասխան հիմքի առկայությունն արձանագրող կարգավորող պետական մարմնի որոշման ընդունման օրվանից:

Հոդված 38. Կարգավորող պետական մարմնի ծախսերի ֆինանսավորումը

1. Կարգավորող պետական մարմնի գործունեությունը ֆինանսավորվում է պետական բյուջեից:

2. Կարգավորող պետական մարմինը «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքով սահմանված կարգով առաջիկա տարվա բյուջետային գործընթացն սկսելու մասին վարչապետի որոշմամբ սահմանված ժամկետում յուրաքանչյուր տարի կազմում եւ Կառավարություն է ներկայացնում կարգավորող պետական մարմնի առաջիկա տարվա բյուջետային ֆինանսավորման հայտը (ծախսերի նախահաշիվը)՝ առաջիկա տարվա պետական բյուջեի նախագծում ներառելու համար: Ծախսերի նախահաշվին ավելացվում է այն ներկայացնելու պահին նախորդող տասներկու ամսվա ընթացքում գանձված տուգանքների, պետական տուրքերի եւ տույժերի 30 տոկոսը՝ սեփական տնօրինման նպատակով:

3. Կարգավորող պետական մարմնի բյուջետային ֆինանսավորման հայտը Կառավարության կողմից ընդունվելու դեպքում՝ անփոփոխ, իսկ առարկությունների դեպքում՝ փոփոխված, ընդգրկվում է պետական բյուջեի նախագծում: Կառավարությունը կարգավորող պետական մարմնի բյուջետային ֆինանսավորման հայտը պետական բյուջեի նախագծի հետ ներկայացնում է Ազգային ժողով:

Կառավարությունը Ազգային ժողով է ներկայացնում նաեւ բյուջետային հայտի փոփոխությունների վերաբերյալ իր հիմնավորումը եւ առկայության պարագայում հիմնավորման վերաբերյալ կարգավորող պետական մարմնի առարկությունները:

4. Կարգավորող պետական մարմնի ծախսերի նախահաշիվը պետք է ապահովի սույն օրենքով սահմանված խնդիրների եւ գործառույթների պատշաճ իրականացման հնարավորությունը, այդ թվում՝ միջազգային կազմակերպություններում ներկայացուցչության ապահովումը, ինչպես նաեւ կարգավորող պետական մարմնի անդամների աշխատավարձի վճարումը:

Հոդված 39. Կարգավորող պետական մարմնի տարեկան հաղորդումը

1. Կարգավորող պետական մարմինը մինչեւ յուրաքանչյուր տարվա ապրիլի 1-ը Ազգային ժողով է ներկայացնում իր նախորդ տարվա գործունեության եւ Հեռարձակողների ծրագրերում տեղեկատվության ազատության վիճակի մասին տարեկան հաղորդում:

2. Հաղորդումը ներառում է կարգավորող պետական մարմնի գործունեությանը եւ լիազորություններին համապատասխան իրականացված բոլոր բաղադրիչների վերաբերյալ ամբողջական տեղեկություններ եւ վիճակագրական տվյալներ (ներառյալ՝ հեղինակազորման, հայտարարված մրցույթների, տրված լիցենզիաների, ցանցային օպերատորների գործունեության լիցենզավորման համար ներկայացված ու մերժված դիմումների եւ դրանց հիմնավորման, տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորների կողմից ներկայացված տեսալսողական ծրագրերի, բացահայտված խախտումների եւ դրանց նկատմամբ կիրառված պատժամիջոցների եւ այլ լիազորությունների իրականացման մասին):

3. Հաղորդումը Ազգային ժողով է ներկայացնում կարգավորող պետական մարմնի նախագահը:

4. Հաղորդումն Ազգային ժողովում քննարկվում է «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով սահմանված կարգով:

5. Կարգավորող պետական մարմինն իր հաղորդումը հրապարակում է կարգավորող պետական մարմնի պաշտոնական կայքում:

Հոդված 40. Կարգավորող պետական մարմնի գործունեության կարգը

1. Կարգավորող պետական մարմինն իր գործունեությունը կազմակերպում է նիստերի եւ աշխատանքային քննարկումների միջոցով:

2. Կարգավորող պետական մարմնի նիստերը հրավիրում է կարգավորող պետական մարմնի նախագահը՝ իր նախաձեռնությամբ կամ առնվազն երեք անդամի պահանջով:

3. Կարգավորող պետական մարմնի նիստերը դռնբաց են, բացառությամբ օրենքով պահպանվող գաղտնիք պարունակող տեղեկատվության վերաբերյալ հարցերի քննարկման դեպքերի, երբ դրանք կարգավորող պետական մարմնի նիստին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ անցկացվում են դռնփակ:

4. Կարգավորող պետական մարմինն իր կայքում հրապարակում է նիստերի անցկացման տեղը, ժամանակաթիվը եւ օրակարգը:

5. Կարգավորող պետական մարմնի գլխավոր քարտուղարը նիստին կարող է մասնակցել խորհրդակցական ձայնի իրավունքով:

6. Կարգավորող պետական մարմնի նիստը վարում է կարգավորող պետական մարմնի նախագահը կամ նրան փոխարինող անձը: Նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա է կարգավորող պետական մարմնի անդամների կեսից ավելին:

7. Կարգավորող պետական մարմնի որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

8. Կարգավորող պետական մարմնի նիստում քննարկվող որեւէ հարցի վերաբերյալ շահերի բախում ունեցող կարգավորող պետական մարմնի անդամը պարտավոր է քննարկումից առաջ կարգավորող պետական մարմնի նախագահին եւ մյուս անդամներին տեղեկացնել շահերի բախման փաստի եւ բնույթի մասին, որը պետք է արձանագրվի նիստի արձանագրության մեջ:

9. Այդ տեղեկացումից հետո կարգավորող պետական մարմնի համապատասխան անդամը՝

1) պարտավոր է հրաժարվել տվյալ հարցի վերաբերյալ դիրքորոշում հայտնելուց եւ քվեարկությանը մասնակցելուց.

2) չպետք է հաշվառվի այդ նիստի իրավազորության ապահովման նպատակով:

10. Կարգավորող պետական մարմնի նիստը հետաձգվում է՝

1) քվորում չլինելու,

2) աշխատանքային օրն ավարտվելու,

3) հարցի քննությունը տվյալ նիստում անհնարին դարձնող այլ բացառիկ հանգամանքների առկայության դեպքերում:

11. Կարգավորող պետական մարմնի նիստերն արձանագրում է կարգավորող պետական մարմնի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումը: Նիստերի արձանագրություններն ստորագրում է նիստը նախագահողը: Նիստի արձանագրությունը կամ դրա մի մասը կարգավորող պետական մարմնի նախագահի հանձնարարությամբ կարող է հրապարակվել: Կարգավորող պետական մարմնի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումը վարում է կարգավորող պետական մարմնի որոշումների գրանցամատյան:

12. Կարգավորող պետական մարմինն ընդունում է աշխատակարգ, որով սահմանվում են կարգավորող պետական մարմնի լիազորությունների իրականացման ընթացակարգերը:

Հոդված 41. Կարգավորող պետական մարմնի կառուցվածքային ստորաբաժանումները

1. Կարգավորող պետական մարմինն իր աշխատանքները կազմակերպում է կառուցվածքային ստորաբաժանումների միջոցով:

2. Կարգավորող պետական մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների աշխատակիցների վարձատրությունն իրականացվում է «Պետական պաշտոններ եւ պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքին համապատասխան:

Հոդված 42. Հեռարձակողների եւ օպերատորների գործունեության մշտադիտարկումը

1. Հեռարձակողների գործունեության մշտադիտարկումն իրականացվում է ուղղակի դիտարկման, իսկ օպերատորի դեպքում նաեւ տեղում դիտարկում իրականացնելու միջոցով: Ուղղակի դիտարկման արդյունքները կարող են համադրվել տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանների տվյալների հետ:

2. Հանրային հեռարձակողների գործունեության մշտադիտարկումը ներառում է նաեւ տեղեկատվական, կրթական, մշակութային եւ ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանության ապահովման վերաբերյալ ուսումնասիրությունը, որն իրականացվում է սույն հոդվածի 1-ին մասով սահմանված եղանակներով:

3. Տեսալսողական մեդիայի մասին օրենդրության պահանջների խախտման վերաբերյալ տեղեկությունների տիրապետելու դեպքում օպերատորի գործունեության տեղում դիտարկումն իրականացվում է կարգավորող պետական մարմնի նախագահի հրամանի հիման վրա:

4. Տեղում դիտարկում իրականացնելու մասին հրամանում նշվում են՝

1) տեղում դիտարկում իրականացնող մարմնի անվանումը.

2) օպերատորի անվանումը եւ գտնվելու վայրը,

3) տեղում դիտարկում իրականացնող անձի անունը, ազգանունը եւ պաշտոնը.

4) տեղում դիտարկում իրականացնելու նպատակը, ժամանակահատվածը եւ իրավական հիմքերը.

5) Տեսալսողական մեդիայի մասին օրենդրության պահանջների խախտման նկարագրությունը:

5. Օպերատորի մոտ տեղում դիտարկումը սկսելուց առաջ հրամանի մեկ օրինակը հանձնվում է օպերատորի ղեկավարին կամ ղեկավարին փոխարինելու իրավունք ունեցող անձի:

6. Եթե սույն հոդվածի 5-րդ մասում նշված իրավասու անձինք օպերատորի գործունեության վայրում չեն կամ հրաժարվում են ստանալ տեղում դիտարկում իրականացնելու վերաբերյալ հրամանը եւ ստորագրությամբ հավաստել այն ստանալու փաստը, ապա անմիջապես կարող է իրականացվել դիտարկումը:

7. Օպերատորի մոտ տեղում դիտարկում իրականացնելու դեպքում վերջինս տեղում դիտարկում իրականացնող անձանց պետք է ապահովեն անհրաժեշտ աշխատանքային տարածքով եւ տեխնիկական միջոցներով:

8. Մշտադիտարկման արդյունքներով կարգավորող պետական մարմնի ներկայացուցիչը կազմում է մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրություն:

9. Մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրության մեջ նշվում են մշտադիտարկման արդյունքների համառոտ շարադրանքը, ինչպես նաեւ վարչական վարույթ հարուցելու կամ հարուցված վարչական վարույթի համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստական հանգամանքները, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները: Դիտարկման արդյունքների եւ տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանների տվյալների համադրման դեպքում մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրության մեջ նշվում են նաեւ դիտարկման արդյունքների եւ տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանների տվյալների միջեւ անհամապատասխանությունը, անհամապատասխանությունների քանակը եւ տեւողությունը:

10. Արձանագրությանը կցվում են մշտադիտարկման առարկային վերաբերող, իսկ օպերատորի մոտ տեղում դիտարկում իրականացնելու դեպքում՝ վերջիններիս տիրապետության տակ գտնվող ապացույցները, որի մասին նշում է կատարվում արձանագրության մեջ:

11. Մշտադիտարկման արդյունքների մասին արձանագրությունն ուղղակի դիտարկում իրականացնելու դեպքում ստորագրում է մշտադիտարկում իրականացրած անձը, իսկ օպերատորի մոտ տեղում դիտարկում իրականացնելու դեպքում՝ կարգավորող պետական մարմնի եւ օպերատորի ներկայացուցիչը:

12. Ուղղակի դիտարկման միջոցով իրականացված մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրությունը կազմելուց հետո՝ եռօրյա ժամկետում, ուղարկվում է Հեռարձակողին կամ օպերատորին:

13. Մշտադիտարկման արդյունքների մասին արձանագրության վերաբերյալ առարկություններ ունենալու դեպքում Հեռարձակողը կամ օպերատորը մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրությունը ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, կարող է դրանք ներկայացնել կարգավորող պետական մարմին:

14. Օպերատորի մոտ իրականացված տեղում դիտարկման արդյունքների մասին արձանագրության վերաբերյալ առարկություններ ունենալու դեպքում վերջիններիս ներկայացուցիչն այդ մասին նշում է կատարում արձանագրության մեջ եւ ստորագրում:

15. Եթե սույն հոդվածի 5-րդ մասում նշված անձը հրաժարվում է ստորագրել եւ ստանալ արձանագրության երկրորդ օրինակը կամ տեղում դիտարկման իրականացման վայրում չէ, ապա արձանագրության երկրորդ օրինակը փոստով առաքվում է:

16. Տեղում դիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրությունը օպերատորի ղեկավարին փոխարինելու իրավունք ունեցող անձի կողմից ստորագրվելու դեպքում դրա մասին համապատասխան նշում է կատարվում արձանագրության մեջ, եւ արձանագրությանը կցվում է այն իրավական փաստաթղթի պատճենը (կանոնադրություն, հրաման, որոշում, լիազորագիր կամ այլ փաստաթուղթ), որի հիման վրա տվյալ անձն իրավունք ունի փոխարինելու օպերատորի ղեկավարին:

17. Եթե օպերատորի ներկայացուցիչը հրաժարվում է արձանագրությունն ստորագրել կամ այլ կերպ խոչընդոտում է տեղում դիտարկման իրականացմանը, ապա կարգավորող պետական մարմնի ներկայացուցիչն այդ մասին նշում է կատարում արձանագրության մեջ, որում նշվում են նաեւ մշտադիտարկման իրականացմանը խոչընդոտած օպերատորի ներկայացուցչի անունը, ազգանունը եւ պաշտոնը:

18. Մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրությունը կարող է հիմք հանդիսանալ վարչական վարույթ հարուցելու համար, իսկ հարուցված վարչական վարույթի շրջանակներում ծառայել որպես վարչական վարույթի ապացույց:

19. Մշտադիտարկման իրականացման վերաբերյալ արձանագրության ձեւը հաստատում է կարգավորող պետական մարմինը:

ԳԼՈՒԽ 7

ՀԵՂԻՆԱԿԱԶՈՐՈՒՄԸ, ՀԱՆՐԱՅԻՆ ՄՈՒՏԻՊԼԵՔՍԻ ՍԼՈԹԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՈՒՄԸ

Հոդված 43. Հեղինակազորումը

1. Իրավաբանական կամ ֆիզիկական անձը Հեռարձակողի կարգավիճակ ստանալու համար կարգավորող պետական մարմին է ներկայացնում հեղինակազորման հայտ, որում նշվում է՝

1) հայտատուի անվանումը.

2) իրավաբանական անձի գրանցման համարը, իսկ ֆիզիկական անձի համար՝ հաշվառման համարը.

3) իրավաբանական անձի գտնվելու վայրը, իսկ ֆիզիկական անձի համար՝ հաշվառման վայրը.

4) հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն.

5) տեսալսողական ծրագրի անվանումը.

6) հայտի ներկայացման ամիսը, ամսաթիվը, տարեթիվը.

7) հայտատուի ստորագրությունը:

2. Հեղինակազորման հայտը բավարարվում է կարգավորող պետական մարմին այն ներկայացնելուց հետո տասնօրյա ժամկետում:

3. Սույն հոդվածի 1-ին մասի 1-5-րդ կետերով նախատեսված որևէ պայմանի փոփոխության դեպքում Հեռարձակողը եռօրյա ժամկետում ներկայացնում է դրանք կարգավորող պետական մարմին:

Հոդված 44. Հանրային եւ մասնավոր մուլտիպլեքսում գործող Հեռարձակողները

1. Կարգավորող պետական մարմնի կողմից հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման մրցույթները հայտարարվում են սլոթի օգտագործման լիցենզիայի ժամկետը լրանալու, նոր կամ ազատ սլոթ առաջանալու դեպքում:

2. Հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզիա կարող են ստանալ միայն Հայաստանի Հանրապետությունում գործող Հեռարձակողները, եթե այլ բան նախատեսված չէ մինչև սույն դրույթի ուժի մեջ մտնելը կնքված միջազգային պայմանագրով:

3. Հանրային մուլտիպլեքսում ներառված բոլոր տեսալսողական ծրագրերը իրենց վերգետնյա հաճախականությունների սփռման տարածքներին համապատասխան տարածման իրավունքով անվճար տրամադրվում են ցանցային օպերատորներին: Ցանցային օպերատորները պարտավոր են տարածել իրենց՝ անվճար տարածման իրավունքով տրամադրված տեսալսողական ծրագրերը: Ընդ որում ծրագրերի հերթականությունը պետք է սկսվի Հանրային հեռարձակողների ծրագրերից:

4. Սլոթի օգտագործման լիցենզիայի ժամկետը լրանալու հիմքով մրցույթը հայտարարվում է այդ լիցենզիայի գործողության ժամկետը լրանալուց 4 ամիս առաջ:

5. Հանրային մուլտիպլեքսում ազատ սլոթ առաջանալու դեպքում կարգավորող պետական մարմինը հայտարարում է մրցույթ մեկամսյա ժամկետում:

6. Հանրային մուլտիպլեքս ցանցում նոր սլոթ առաջանալու դեպքում Կառավարության լիազոր մարմինը այդ մասին տեղեկացնում է կարգավորող պետական մարմնին, որը մեկամսյա ժամկետում հայտարարում է սլոթի օգտագործման լիցենզավորման մրցույթ:

7. Թեմատիկ ուղղվածության չափորոշիչները, դրանց հասկացությունները սահմանվում են կարգավորող պետական մարմնի որոշմամբ:

8. Թվային հեռարձակման տեխնիկական հնարավորություն առաջանալու դեպքում Լսողական ծրագրեր հեռարձակողները կարող են ներառվել մուլտիպլեքսում՝ իրենց լիցենզիայի պայմաններին համապատասխան:

9. Մասնավոր մուլտիպլեքսում գործող Հեռարձակողները տեսալսողական ծրագրերի հեռարձակումն իրականացնում են մասնավոր մուլտիպլեքս օպերատորի կողմից տրամադրված սլոթի միջոցով:

Հոդված 45. Լիցենզիան

1. Լիցենզիան կարգավորող պետական մարմնի կողմից տրամադրվող փաստաթուղթ է, որը թույլ է տալիս.

1) Հեռարձակողին տեսալսողական տեղեկատվության հեռարձակում իրականացնելու համար օգտագործել հանրային մուլտիպլեքսի սլոթ.

2) ֆիզիկական կամ իրավաբանական անձին իրականացնել մուլտիպլեքս օպերատորի գործունեություն.

3) ցանցային օպերատորին վերահաղորդել Հայաստանի Հանրապետությունում գործող Հեռարձակողների եւ օտարերկրյա հեռարձակողների տեսալսողական ծրագրերը, բացառությամբ սույն օրենքով եւ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

2. Լիցենզիան չի կարող փոխանցվել կամ օտարվել այլ անձի:

3. Առանց լիցենզիայի հանրային մուլտիպլեքսում տեսալսողական ծրագրերի հեռարձակում իրականացնում են Հանրային հեռարձակողները, բացառությամբ սույն օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ մասում նշված դեպքի եւ միջպետական պայմանագրի հիման վրա Հեռարձակողները:

4. Սլոթի օգտագործման լիցենզիան տրվում է յոթ տարի ժամկետով, մուլտիպլեքս օպերատորի գործունեության լիցենզիան՝ անժամկետ, իսկ ցանցային օպերատորի գործունեության լիցենզիան՝ տասը տարի ժամկետով՝ երկարաձգման հնարավորությամբ:

5. Լիցենզիայի վերաձեւակերպումը, գործողության ժամկետի երկարաձգումը եւ կրկնօրինակի տրամադրումը իրականացվում է «Լիցենզավորման մասին» օրենքով սահմանված հիմքերով եւ կարգով:

Հոդված 46. Հանրային մուլտիպլքեսի սլոթի օգտագործման լիցենզավորման մրցույթը

1. Սլոթի օգտագործման լիցենզավորման մրցույթի հայտարարությունը պետք է պարունակի տեղեկություններ հանրապետական, մայրաքաղաքային եւ մարզային սփռում ապահովող ազատ սլոթերի քանակի մասին:

2. Սլոթի օգտագործման լիցենզավորման մրցույթին մասնակցելու համար ներկայացվում է հայտ, որի ձեւը սահմանվում է սլոթի օգտագործման լիցենզավորման մրցույթի անցկացման կարգով:

3. Հայտին կցվում են.

1) փաստաթուղթ՝ Հեռարձակողի նախանշված նպատակների իրագործման հիմնական ուղղությունների եւ միջոցառումների ընդհանրական նկարագրի վերաբերյալ, որոնք լիցենզիա ստանալու դեպքում կհանդիսանան լիցենզիայի պայմաններ.

2) ֆինանսական աղբյուրները հիմնավորող փաստաթղթեր.

3) տվյալներ օգտագործվելիք տեխնիկական միջոցների վերաբերյալ.

4) տեղեկություններ աշխատակազմի քանակի, նրանց կրթության եւ մասնագիտության վերաբերյալ.

5) էթիկայի կանոնագիրը, որը լիցենզիա ստանալու դեպքում կհանդիսանա լիցենզիայի պայման.

6) էթիկայի կանոնագրի դրույթների ապահովման ինքնակարգավորման միջոցները, որը լիցենզիա ստանալու դեպքում կհանդիսանա լիցենզիայի պայման.

7) լիցենզավորման մրցույթին մասնակցելու համար «Պետական տուրքի մասին» օրենքով սահմանված պետական տուրքի վճարումը հավաստող անդորրագիրը:

4. Հանրապետական սփռում ապահովող սլոթերի օգտագործման լիցենզավորման մրցույթի հայտատուն ըստ ցանկության կարող է մասնակցել նաեւ մայրաքաղաքային սփռում ապահովող սլոթերի օգտագործման լիցենզավորման մրցույթին՝ այդ մասին նշում կատարելով հայտում:

5. Հանրապետական եւ մայրաքաղաքային սփռում ապահովող սլոթերի օգտագործման լիցենզավորման մրցույթին հայտ ներկայացրած Հեռարձակողները չեն կարող մասնակցել մարզային սփռում ապահովող սլոթերի օգտագործման լիցենզավորման մրցույթին:

6. Հանրային մուլտիպլեքսի սլոթի օգտագործման լիցենզավորման մրցույթում հաղթողի ընտրությունն իրականացվում է կարգավորող պետական մարմնի անդամների վարկանիշային փակ քվեարկության միջոցով:

7. Վարկանիշային քվեարկության իրականացման ընթացակարգը սահմանվում է սլոթի օգտագործման լիցենզավորման մրցույթի անցկացման կարգով:

8. Կարգավորող պետական մարմինը մրցույթում հաղթող մասնակցի ընտրության ժամանակ հաշվի է առնում՝

1) սեփական արտադրության հաղորդումների գերակայությունը.

2) հայերեն հաղորդումների գերակայությունը.

3) բազմակարծությունը խթանելու կարողությունը.

4) հայտատուի տեխնիկական եւ ֆինանսական հնարավորությունները.

5) աշխատակազմի մասնագիտական պատրաստվածությունը.

6) ազգային, համամարդկային, հոգեւոր, մշակութային մնայուն արժեքների ճանաչողությանն ու ամրապնդմանն ուղղված հաղորդումների գերակայությունը.

7) գործող լիցենզավորված Հեռարձակողի դեպքում՝ գործունեության իրականացման ընթացքում սլոթի օգտագործման լիցենզավորման հայտով ստանձնած պարտավորություններին համապատասխանությունը:

9. Լիցենզավորման մրցույթի ժամանակ այլ հավասար պայմանների դեպքում նախապատվությունը տրվում է՝

1) գործող այն Հեռարձակողներին, որոնք իրենց գործունեության ընթացքում թույլ են տվել օրենսդրության նվազ քանակով կամ վտանգավորությամբ խախտումներ.

2) գործող այն Հեռարձակողներին, որոնք տեսալսողական հաղորդումների արտադրության եւ հեռարձակման բնագավառում ունեն առնվազն երեք տարվա փորձ:

10. Կարգավորող պետական մարմնի որոշումները պետք է լինեն պատշաճ հիմնավորված եւ պատճառաբանված: Կարգավորող պետական մարմինն ապահովում է իր որոշումների հրապարակայնությունը:

11. Մրցույթում հաղթող մասնակցի՝ լիցենզիա ստանալու իրավունքից հրաժարվելու կամ կարգավորող պետական մարմնի կողմից սույն օրենքի 51-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով լիցենզիա տալու մասին որոշումը ուժը կորցրած ճանաչելու դեպքում լիցենզիա ստանալու իրավունքն անցնում է հաջորդ առավելագույն միավոր ստացած մասնակցին:

12. Հանրապետական սփռում ապահովող սլոթի օգտագործման լիցենզիա ստացած Հեռարձակողի տեսալսողական ծրագիրը սփռման ամբողջ տարածքում որեւէ ձեւով չի կարող փոփոխվել:

Հոդված 47. Ցանցային օպերատորի գործունեության լիցենզավորման դիմումը

1. Ցանցային օպերատորի գործունեության լիցենզավորման համար դիմողը պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ կամ հաղորդագրության ձեւակերպումն ապահովող կապի այլ միջոցների օգտագործմամբ, կամ առձեռն՝ ստացականով, կարգավորող պետական մարմին է ներկայացնում դիմում, որի ձեւը սահմանվում է ցանցային օպերատորի գործունեության լիցենզավորման կարգով:

2. Դիմումին կցվում են.

1) դիմումատուի հիմնադիր փաստաթղթերի պատճենները.

2) տվյալներ օգտագործվելիք տեխնիկական միջոցների վերաբերյալ.

3) ֆինանսական աղբյուրները հիմնավորող փաստաթղթեր:

3. Դիմումին կից ներկայացված փաստաթղթերում սխալներ, ջնջումներ, վրիպակներ հայտնաբերելու դեպքում կարգավորող պետական մարմինը դրանք ստանալուց հետո՝ տասնօրյա ժամկետում, դիմողին պատշաճ կերպով տեղեկացնում է այդ մասին՝ դրանց շտկման նպատակով: Դիմողն իրավունք ունի սույն մասում նշված ծանուցումը ստանալուց հետո՝ տասնօրյա ժամկետում, կարգավորող պետական մարմին ներկայացնել փաստաթղթերը՝ առանց սույն մասում նշված թերությունների:

4. Ցանցային օպերատորի գործունեության լիցենզավորման կարգը սահմանում է կարգավորող պետական մարմինը:

Հոդված 48. Ցանցային օպերատորի գործունեության լիցենզավորման

դիմումի քննարկումը եւ որոշման ընդունումը

1. Ցանցային օպերատորին գործունեության լիցենզավորման դիմումը կարգավորող պետական մարմինն իր նիստում քննարկում եւ որոշում է ընդունում այն մուտքագրելուց հետո՝ 30 օրվա ընթացքում:

2. Լիցենզիա չի տրվում, եթե՝

1) սույն օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ մասում նշված փաստաթղթերը թերի, ակնհայտ կեղծ կամ խեղաթյուրված են.

2) չեն համապատասխանում սույն օրենքի եւ իրավական այլ ակտերի պահանջներին.

3) դիմողը չի վերացրել կարգավորող պետական մարմնի կողմից նշված թերությունները.

4) բացակայում են տեսալսողական տեղեկատվության հեռարձակման տեխնիկական հնարավորությունները:

Հոդված 49. Ցանցային օպերատորի գործունեության լիցենզիա ստացած անձի գործունեությունը

1. Հայաստանի Հանրապետության տարածքում եւ նրա սահմաններից դուրս գործող Հեռարձակողների տեսալսողական ծրագրերը ցանցային օպերատորի լիցենզիա ստացած անձի կողմից կարող են վերահաղորդվել տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորի կամ հեռարձակողի հետ պայմանագրի հիման վրա.

2. Վերահաղորդումը կատարվում է հեռարձակման հետ համաժամանակյա կամ գրեթե համաժամանակյա՝ տեսալսողական տեղեկատվության հեռարձակումից մինչեւ դրա ընդունումն ընկած կարճաժամկետ ընդհատումներով առաջացող տատանումների հետեւանքով՝ հեռարձակման գործընթացին ներհատուկ տեխնիկական պատճառներով պայմանավորված:

3. Ցանցային օպերատորի լիցենզիա ստացած անձը չի կարող լինել տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտոր:

4. Ցանցային օպերատորի լիցենզիա ստացած անձը սեփական տեսալսողական տեղեկատվություն չի կարող արտադրել եւ հեռարձակել:

5. Վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի յուրաքանչյուր փոփոխության վերաբերյալ ցանցային օպերատորը տեղեկացնում է կարգավորող պետական մարմնին:

Հոդված 50. Լիցենզիայի վավերապայմանները

1. Լիցենզիան պարունակում է հետեւյալ տեղեկությունները.

1) կարգավորող պետական մարմնի անվանումը.

2) լիցենզիայի սերիան եւ համարը.

3) լիցենզիան տալու ամսաթիվը.

4) գործունեության տեսակը, որի իրականացման համար տրվել է լիցենզիան.

5) իրավաբանական անձի անվանումը եւ գտնվելու վայրը, իսկ ֆիզիկական անձի համար՝ ազգանունը, անունը եւ հաշվառման վայրը.

6) սփռման տարածքը.

7) լիցենզիայի գործողության ժամկետը.

8) կարգավորող պետական մարմնի նախագահի ստորագրությունը.

9) կարգավորող պետական մարմնի կնիքի դրոշմը:

2. Մրցույթի արդյունքում հաղթած առաջարկը կցվում է լիցենզիային որպես պայման եւ համարվում դրա անբաժանելի մասը:

Հոդված 51. Լիցենզիայի տրամադրումը

1. Լիցենզավորման մրցույթում հաղթող ճանաչված, ինչպես նաեւ դիմումի հիման վրա կարգավորող պետական մարմնի որոշումը ստանալուց հետո՝ 20-օրյա ժամկետում, վճարում են «Պետական տուրքի մասին» օրենքով սահմանված չափով պետական տուրք:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված պետական տուրքի վճարումից հետո՝ տասնօրյա ժամկետում, կարգավորող պետական մարմինը նշված անձանց տալիս է համապատասխան լիցենզիաներ:

3. Սույն հոդվածով սահմանված ժամկետում պետական տուրքը չվճարելը հիմք է լիցենզիա տալու մասին եւ մրցույթում հաղթող ճանաչելու եւ լիցենզիա տրամադրելու մասին որոշումներն ուժը կորցրած ճանաչելու համար:

4. Մրցույթում հաղթող ճանաչելու մասին որոշումը սույն հոդվածով սահմանված հիմքով ուժը կորցրած ճանաչվելու դեպքում կարգավորող պետական մարմինը հայտարարում է մրցույթ եւ իրականացնում լիցենզավորում սույն օրենքով մրցույթի միջոցով իրականացվող լիցենզավորման համար սահմանված կարգով ու պայմաններով, բացառությամբ 46-րդ հոդվածի 11-րդ մասով սահմանված դեպքի:

Հոդված 52. Մասնավոր մուլտիպլեքս օպերատորի գործունեության լիցենզավորման մրցույթը

1. Կարգավորող պետական մարմինը իր կառավարմանը հանձնված ազատ հաճախականությունների առկայության դեպքում հայտարարում է մասնավոր մուլտիպլեքս օպերատորի գործունեության լիցենզավորման մրցույթ: Մրցույթը չկայանալու կամ մրցույթում հաղթող չլինելու դեպքում այն հայտարարելուց 10 օր հետո կարգավորող պետական մարմինը հայտարարում է նոր մրցույթ:

2. Մասնավոր մուլտիպլեքս օպերատորի գործունեության լիցենզավորման մրցույթը հայտարարելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում կարգավորող պետական մարմին է ներկայացվում՝

1) հայտ.

2) մուլտիպլեքս ցանցի ստեղծման նախագիծը, ներառյալ՝ ցանցի գործարկման ժամանակացույցը.

3) տվյալներ օգտագործվելիք տեխնիկական միջոցների եւ սարքավորումների մասին.

4) ֆինանսական աղբյուրները հիմնավորող փաստաթղթեր.

5) հայտատուի հիմնադիր փաստաթղթերի պատճենները:

3. Հայտի ձեւը սահմանվում է մասնավոր մուլտիպլեքս օպերատորի գործունեության լիցենզավորման մրցույթի անցկացման կարգով:

4.Մասնավոր մուլտիպլեքս օպերատորի գործունեության լիցենզավորման համար դիմումների ներկայացման ժամկետի ավարտից հետո կարգավորող պետական մարմինը ցանցի ստեղծման նախագիծը եւ ժամանակացույցը իր ընտրած փորձագիտական խմբին ներկայացնում է տեխնիկական փորձաքննության, որը պետք է իրականացվի առավելագույնը երկու ամսվա ընթացքում:

5. Եթե երկու ամսվա ընթացքում փորձագիտական խումբը չի տալիս տեխնիկական եզրակացությունը, ապա համարվում է, որ այն համապատասխանում է անհրաժեշտ պահանջներին:

6. Տեխնիկական փորձաքննության եզրակացությունը ստանալուց հետո՝ առավելագույնը մեկ ամսվա ընթացքում, հիմք ընդունելով փորձագիտական եզրակացությունը, կարգավորող պետական մարմինը որոշում է ընդունում լիցենզիա տրամադրելու կամ դիմումը մերժելու մասին:

7. Մասնավոր մուլտիպլեքս օպերատորի գործունեության լիցենզավորման մրցույթի անցկացման կարգը (ներառյալ՝ գնահատման չափանիշները) սահմանում է կարգավորող պետական մարմինը:

8.Կարգավորող պետական մարմինը մասնավոր մուլտիպլեքս օպերատորի գործունեության լիցենզավորման մրցույթը հայտարարում է չկայացած, եթե՝

1) սահմանված ժամկետում ոչ մի դիմում չի ներկայացվել, կամ ներկայացված դիմումներից ոչ մեկը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին.

2) մրցույթի միակ մասնակցի կամ բոլոր մասնակիցների մուլտիպլեքս ցանցի ստեղծման նախագծի եւ ժամանակացույցի տեխնիկական փորձաքննության արդյունքում տրվել է բացասական եզրակացություն.

3) մրցույթի միակ մասնակցի կամ բոլոր մասնակիցների մուլտիպլեքս ցանցի ստեղծման նախագծով ներկայացված հեռարձակման ցանցի առաջարկվող սփռման տարածքի չափը չի համապատասխանում սույն օրենքով սահմանված պահանջին:

ԳԼՈՒԽ 8
ԱՌԱՆՑ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Հոդված 53. Առանց լիցենզավորման տեսալսողական տեղեկատվության կազմակերպման պայմանները

1. Ցանցային հեռարձակման համար լիցենզիա չի պահանջվում, եթե սփռման եւ սպասարկման տարածքը սահմանափակվում է իրավաբանական կամ ֆիզիկական անձին պատկանող շենքերով ու տարածքներով:

2. Առանց լիցենզավորման տեսալսողական տեղեկատվությունների հեռարձակման կազմակերպումը չպետք է ազդի տվյալ շրջանում գործող Հեռարձակողների իրականացման որակի վրա, ինչպես նաեւ չպետք է խաթարի տեսալսողական տեղեկատվություն ընդունող եւ հեռարձակող հեռահաղորդակցության տեխնիկական միջոցների աշխատանքը:

3. Առանց լիցենզավորման տեսալսողական տեղեկատվության հեռարձակում են իրականացնում ոչ գծային Հեռարձակողները, որոնք գործունեություն են իրականացնում կարգավորող պետական մարմնի կողմից սահմանված կարգով գործունեությունը թույլատրող որոշումը ստանալուց հետո:

4. Կարգավորող պետական մարմնի՝ գործունեությունը թույլատրող որոշումը ստանալուց հետո, ոչ գծային Հեռարձակողները կարող են պայմանագրային հիմունքներով գործունեություն իրականացնել ցանցային օպերատորների եւ այլ հաղորդակցության ցանցերով:

Հոդված 54. Տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորի գործունեությունը

1. Տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորը գործում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն կարգավորող պետական մարմին ծանուցում ներկայացնելուց հետո:

2. Յուրաքանչյուր նոր տեսալսողական ծրագրի վերաբերյալ ներկայացվում է ծանուցում:

3. Ծանուցումը պետք է պարունակի հետեւյալ տեղեկությունները.

1) տեսալսողական ծրագրերի վերաբերյալ.

2) տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտոր հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձի վերաբերյալ.

3) տեսալսողական ծրագրի իրավատիրոջ հետ կնքված պայմանագրի պատճեն.

4) Հեռարձակողների եւ օպերատորի հիմնադիր կամ մասնակից հանդիսանալու վերաբերյալ:

4. Կարգավորող պետական մարմինը ծանուցումը հաստատում է 20-օրյա ժամկետում:

5. Ծանուցման մեջ թերի, ակնհայտ կեղծ կամ խեղաթյուրված տեղեկություններ լինելու կամ օտարերկրյա տեսալսողական ծրագրերում գովազդ ներառված լինելու դեպքում այն չի հաստատվում, բացառությամբ այն դեպքերի երբ հնարավոր չի եղել ձեռք բերել տվյալ տեսալսողական ծրագրի առանց գովազդ տարբերակը:

ԳԼՈՒԽ 9

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱՅԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԽԱԽՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Հոդված 55. Պատասխանատվությունը տեսալսողական մեդիայի մասին օրենսդրության պահանջները խախտելու համար

1. Կարգավորող պետական մարմնի կողմից տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու, ինչպես նաեւ պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտումների դեպքեր հայտնաբերելու եւ դրանց մասին կարգավորող պետական մարմին գրավոր տեղեկացնելու դեպքում կարգավորող պետական մարմինը կիրառում է հետեւյալ վարչական տույժերը.

1) գրավոր նախազգուշացում.

2) տուգանք.

3) հեղինակազրման կամ լիցենզիայի գործողության կասեցում.

4) հեղինակազրման կամ լիցենզիայի գործողության դադարեցում:

2. Վարչական տույժերի հասցեատերերն իրավունք ունեն դիմելու դատարան՝ կարգավորող պետական մարմնի որոշումներն անվավեր ճանաչելու կամ փոփոխելու պահանջով: Նշված պահանջով հայցը դատարան ներկայացնելը չի կասեցնում գործունեության կասեցման կիրառման մասին որոշման կատարումը:

3. Սույն հոդվածով նախատեսված վարչական տույժերը չեն կիրառվում Հանրային հեռարձակողի նկատմամբ:

Հոդված 56. Գրավոր նախազգուշացումը

Սույն օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով հայտնաբերված խախտումների առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենքով, կարգավորող պետական մարմինն

իրավախախտումը հայտնաբերելու օրվանից եւ (կամ) պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում հայտնաբերված իրավախախտումների դեպքերի մասին տեղեկացվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում գրավոր նախազգուշացնում է խախտում կատարած անձին՝ պահանջելով վերացնել խախտումը եւ սահմանելով խախտումը վերացնելու համար ողջամիտ ժամկետ:

Հոդված 57. Տուգանքը

1. Սույն հոդվածով սահմանված իրավախախտումներ կատարած անձի նկատմամբ տուգանք կարող է կիրառվել իրավախախտում կատարելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում, իսկ շարունակվող կամ տեւող իրավախախտման դեպքում՝ այն հայտնաբերելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում:

2. Սույն օրենքի 56-րդ հոդվածով սահմանված կարգով գրավոր նախազգուշացում ստացած անձի կողմից նախազգուշացմամբ նշված ժամկետում սահմանված պահանջը չկատարելը կամ նախազգուշացման համար հիմք դարձած նույն խախտումը սույն օրենքի 56-րդ հոդվածով սահմանված վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ Հասույթի 0.03 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

3. Հեռարձակողների եւ օպերատորի կողմից համապատասխան սփռման տարածքների համընկնման շրջաններում՝ օրինական հիմքով տարածվող այլ տեսալսողական տեղեկատվություն ընդունելու իրավունքը սահմանափակելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ Հասույթի 0.04 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով:

4. Հեռարձակողների անվանումները էկրանային ցուցադրման ժամանակ միայն օտար լեզուներով առանց հայերեն անընդհատ տառադարձության օգտագործելը

առաջացնում է տուգանքի նշանակում՝ Հասույթի 0.02 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապ1ատիկի չափով:

5. Հեռարձակողի կողմից հայերեն հաղորդումները ընդհանուր եթերաժամի 55 տոկոսից պակաս հեռարձակելը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ Հասույթի 0.05 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով:

6. Ցանցային օպերատորի կողմից, առանց պայմանագրի վերահաղորդում իրականացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ Հասույթի 0.04 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:

7. Ընտրությունների (հանրաքվեների) նախընտրական (հանրաքվեի դրված հարցի վերաբերյալ) քարոզչության իրականացման համար օրենքով սահմանված ժամանակահատվածում առանց էկրանի վրա պարտադիր անընդմեջ լուսագրով «Նախընտրական (հանրաքվեի դրված հարցի վերաբերյալ) քարոզչություն» հաղորդումներ սփռելը, իսկ լսողական հաղորդումների դեպքում՝ յուրաքանչյուր հաղորդման ընթացքում ոչ պակաս, քան 2 անգամ դրա մասին չհիշեցնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ Հասույթի 0.05 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:

8. Հեռարձակողների կողմից թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 եւ ավելի ծավալային տոկոս) խմիչքների գովազդի հեռարձակումը 06:00-ից մինչեւ 22:30-ն ընկած ժամանակահատվածում, ծխախոտի եւ ծխախոտային արտադրության գովազդի հեռարձակումը, ինչպես նաեւ մանկապատանեկան տեսալսողական հաղորդումներում ծխախոտի կամ ծխախոտային արտադրության ապրանքատեսակների ուղղակի կամ անուղղակի օգտագործումը կամ ցուցադրումը առաջացնում են տուգանքի նշանակում՝ Հասույթի 0.02 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

9. Լրատվական հաղորդումների գովազդային ընդհատումը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ Հասույթի 0.03 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով:

10. Հեռարձակողի կողմից ամեն օր եթերում իր ելքային տվյալները չներկայացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

11. Հեռարձակողի կողմից իր հաղորդումների հեռարձակման ժամանակ անընդմեջ իր խորհրդանիշը չհեռարձակելը, բացառությամբ գովազդի հաղորդման ժամանակ՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ Հասույթի 0.02 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով:

12. Էրոտիկ բնույթի տեսալսողական հաղորդումները եւ սարսափ ու ակնհայտ բռնություն պարունակող ֆիլմերը, ինչպես նաեւ անչափահասների առողջության, մտավոր եւ ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող տեսալսողական հաղորդումների եթեր հեռարձակման պահանջները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ Հասույթի 0.02 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի չափով:

13. Արբանյակային հեռարձակման մասին կարգավորող պետական մարմին ծանուցում չներկայացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ Հասույթի 0.02 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի չափով:

14. Սույն օրենքի 6-րդ հոդվածի պահանջները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ Հասույթի 0.03 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

15. Տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանի վարման սահմանված կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

16. Հեռարձակողի կողմից «Գովազդի մասին» օրենքի պահանջները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում Հասույթի 0.03 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:

17. Հեռարձակողի կողմից հեռարձակած հաղորդումների տեսագրությունները եւ ձայնագրությունները՝ սույն օրենքով սահմանված ժամկետով չպահպանելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ Հասույթի 0.02 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով:

18. Սույն օրենքի 7-րդ հոդվածի պահանջները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ Հասույթի 0.02 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:

19. Սույն օրենքի 42-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված պայմանները չապահովելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ Հասույթի 0.01 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

20. Սույն օրենքի 8-րդ հոդվածի պահանջները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ Հասույթի 0.02 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

21. Արգելված հովանավորություն իրականացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ Հասույթի 0.02 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

22. Պետության կողմից հայտարարված սգո եւ հիշատակի օրերին գովազդի եւ զվարճալի հաղորդումներ հեռարձակելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ Հասույթի 0.03 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի չափով:

23. Լիցենզիա ստացած Հեռարձակողի կողմից տեսալսողական ծրագրում մանկական, կրթական, մշակութային եւ սպորտային թեմատիկ ուղղվածության տեսալսողական հաղորդումների շաբաթական եթերաժամի առնվազն 20 տոկոսի պահանջը չպահպանելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ Հասույթի 0.02 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

24. Ծխելու տեսարաններ պարունակող տեսալսողական հաղորդման մեկնարկին, տեսանելի չափով, 5 վայրկյան տեւողությամբ «ծխելը վնասում է ձեր առողջությանը» գրառման ուղեկցման պահանջը չպահպանելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ Հասույթի 0.02 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

25. Առանց սույն օրենքի 54-րդ հոդվածով սահմանված ծանուցման գործունեություն իրականացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:

26. Հեռարձակողի, իսկ ոչ գծային տեղեկատվության դեպքում՝ օպերատորի, կողմից տեսալսողական ծրագիրը կամ դրա մասը, առանց դրանց իրավատերերի (հեղինակային կամ հարակից իրավունքի սուբյեկտ չհանդիսացող) համաձայնության տարածելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

27. Կարգավորող պետական մարմնի որոշմամբ կամ նախագահի գրությամբ կամ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր կամ այլ տեղեկատվություն

սահմանված ժամկետում չներկայացնելը կամ ոչ հավաստի կամ ոչ ամբողջական տեղեկություններ ներկայացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:

28. Կարգավորող պետական մարմին նախորդող տարվա հասույթի գոյացման բացվածքի եւ չափի վերաբերյալ տեղեկություն չներկայացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

29. Հեռարձակողի նախանշված նպատակների իրագործման հիմնական ուղղությունների եւ միջոցառումների ընդհանրական նկարագրին համապատասխան չգործելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

30. Էթիկայի կանոնագրի դրույթների ապահովման ինքնակարգավորման միջոցները չկիրառելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով:

31. Սույն հոդվածի 2-30-րդ մասերով սահմանված հիմքերով վարչական տույժի ենթարկված անձի կողմից մեկ տարվա ընթացքում նույն խախտումը կրկնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ կիրառված տույժի եռապատիկի չափով:

Հոդված 58. Հեղինակազորման կամ լիցենզիայի գործողության կասեցումն ու դադարեցումը

1. Հեռարձակողի հեղինակազորման կամ լիցենզիայի գործողությունը կասեցվում է, եթե՝

1) Հեռարձակողը սույն օրենքի 57-րդ հոդվածի 31-րդ մասով սահմանված հիմքով մեկ տարվա ընթացքում երեք անգամ ենթարկվել է վարչական տույժի (բացառությամբ սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի), որից հետո նույն տարվա ընթացքում կատարել է սույն օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված որեւէ վարչական տույժի նշանակման համար հիմք համարվող արարք.

2) Հեռարձակողը սույն օրենքի 57-րդ հոդվածի 31-րդ մասով սահմանված հիմքով սույն օրենքի 57-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ մեկ տարվա ընթացքում մեկ անգամ ենթարկվել է վարչական տույժի, որից հետո նույն տարվա ընթացքում կատարել է սույն օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված որեւէ վարչական տույժի նշանակման համար հիմք համարվող արարք.

3) Հեռարձակողի տեխնիկական միջոցները չեն համապատասխանում ընդունված ստանդարտներին, որի հետեւանքով վտանգ է սպառնում մարդկանց առողջությանը, արգելքներ են ստեղծվում այլ Հեռարձակողների եւ օպերատորների գործունեության համար, չի ապահովվում տեսալսողական հաղորդումների տեխնիկական որակը.

4) լիցենզիա ստացած Հեռարձակողն առանց որեւէ հիմնավոր պատճառի 24 ժամ շարունակ չի ապահովել տեսալսողական հաղորդումների հեռարձակում.

5) լիցենզիա ստացած Հեռարձակողը լիցենզիան ստանալու պահից վեց ամսվա ընթացքում չի հեռարձակել տեսալսողական հաղորդումներ.

6) այդ մասին կա Հեռարձակողի դիմումը.

7) խախտվել են օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները.

8) ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ վարչապետին կամ արտակարգ դրության ընթացքում ի պաշտոնե արտակարգ դրության տարածքի

պարետ հանդիսացող փոխվարչապետին պաշտոնական հաղորդագրություն կատարելու համար եթերաժամանակ չի հատկացվել.

2. Հեղինակազորման կամ լիցենզիայի գործողությունը կասեցնելուց հետո կարգավորող պետական մարմնի նշած ժամկետում սույն հոդվածի 1-ին մասում նշված խախտումները վերացնելու դեպքում կարգավորող պետական մարմինը վերացնում է կասեցումը:

Կասեցման ժամկետը չի կարող գերազանցել 30 օրը:

3. Հեղինակազորումը կամ լիցենզիայի գործողությունը դադարեցվում է, եթե՝

1) իրավաբանական անձը լուծարվել է.

2) տեղի է ունեցել լիցենզիայի փոխանցում ֆիզիկական կամ իրավաբանական այլ անձանց.

3) լիցենզավորման կամ հեղինակազորման համար ներկայացված փաստաթղթերում էական նշանակություն ունեցող կեղծ կամ խեղաթյուրված տեղեկատվություն է հայտնաբերվել.

4) սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված խախտումը չի վերացվել.

5) դիմումի հիման վրա.

4. Տեսալսողական հաղորդումների հեռարձակման ընթացքում կատարված տեխնիկական կանոնների խախտման, թերացումների կամ հաղորդումների հեռարձակումը չապահովելու համար անձն ազատվում է պատասխանատվությունից, եթե հիմնավորվում է, որ դրանք թույլ են տրվել՝

1) պետական լիազորված մարմինների կողմից տեխնիկական կանոնների կամ չափորոշիչների փոփոխության պատճառով.

2) տեխնիկական վերազինման նպատակով, որի մասին դրա իրականացումից առնվազն 30 օր առաջ գրավոր հիմնավորմամբ անձը տեղյակ է պահել կարգավորող պետական մարմնին եւ ստացել թույլտվություն.

3) անհաղթահարելի ուժի հետեւանքով:

5. Սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված դեպքերում Հեռարձակողները ողջամիտ ժամկետում վերականգնում են տեսալսողական հաղորդումների հեռարձակումը:

7. Սույն հոդվածի դրույթները տարածվում են նաեւ ցանցային օպերատորների վրա այնքանով, որքանով կիրառելի են:

Հոդված 59. Մասնավոր մուլտիպլեքս օպերատորի գործունեության լիցենզիայի դադարեցումը

1. Մասնավոր մուլտիպլեքս օպերատորի գործունեության լիցենզիան դադարեցվում է «Լիցենզավորման մասին» օրենքով նախատեսված դեպքերում, ինչպես նաեւ եթե՝

1) մուլտիպլեքս օպերատորը կարգավորող պետական մարմնի սահմանած ժամկետում չի ձեռք բերել օրենքով պահանջվող թվային հեռարձակման ցանց.

2) տեխնիկական պատճառներով նրա գործունեության խափանումը տեւում է երեք ամսից ավելի:

Գ Լ Ո Ւ Խ 9

ԵԶՐԱՓԱԿԻՉ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 60. Եզրափակիչ մաս եւ անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:
2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» 2000 թվականի հոկտեմբերի 9-ի ՀՕ-97 օրենքը ճանաչել ուժը կորցրած:
3. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո Հեռարձակողները եւ օպերատորները շարունակում են իրենց գործունեությունը լիցենզիայի ժամկետներին համապատասխան:
4. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահին նոր լիցենզիա ստացած հեռուստառադիոընկերությունները սույն օրենքի իմաստով համարվում են հեղինակազորված եւ լիցենզիա ստացած Հեռարձակողներ:
5. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահին լիցենզավորման հայտ ներկայացրած հեռուստառադիոընկերությունները սույն օրենքի իմաստով համարվում են հեղինակազորված:
6. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեցամսյա ժամկետում սեփական տեսալսողական հաղորդում հեռարձակող մալուխային հեռուստառադիոընկերությունները դադարեցնում են սեփական հաղորդման հեռարձակումը:
7. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո մալուխային հեռուստառադիոընկերությունները համարվում են ցանցային օպերատորներ եւ շարունակում են իրենց գործունեությունը լիցենզիայի ժամկետով:
8. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ցանցային օպերատորները կարգավորող պետական մարմին ներկայացնում են տեղեկություն՝ իրենց ցանցում վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի մասին:
9. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո կարգավորող պետական մարմնի նախագահը, անդամները, Խորհրդի նախագահը եւ անդամները շարունակում են պաշտոնավարել մինչեւ իրենց լիազորությունների ավարտը:
10. Սույն օրենքի 44-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված չափորոշիչները և հասկացությունները կարգավորող պետական մարմինը հաստատում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում:
11. Ոչ գծային տեսալսողական տեղեկատվության վերաբերյալ գործունեությունը թույլատրող որոշում ստանալու համար հայտերը ներկայացվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց 6 ամիս հետո:
12. Մրցութային հանձնաժողովի ձևավորման կարգը կարգավորող պետական մարմինը հաստատում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո 6 ամսյա ժամկետում:
13. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահին լիցենզավորման հայտ ներկայացրած Հեռարձակողները լիցենզիան ստանում են սույն օրենքով սահմանված կարգով եւ պայմաններին համապատասխան:
14. Լսողական ծրագիր հեռարձակողների համար անալոգային հաճախականությունների վրա տարածվում են սույն օրենքով սլոթի վերաբերյալ նախատեսված կարգավորումները:
15. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո վեց ամսվա ընթացքում սույն օրենքով նախատեսված տուգանքները կիրառվում են 50 տոկոսի չափով:
16. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո վեց ամսվա ընթացքում սույն օրենքի 6-րդ եւ 7-րդ հոդվածներով արգելված արարքներ կատարելու համար կիրառվում են գրավոր նախազգուշացում:
17. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո Հեռուստատեսության եւ ռադիոյի հանձնաժողովի կողմից ձեւավորված Մրցութային հանձնաժողովի կազմը լուծարվում է:

18. Թվային ռադիոհեռարձակման անցման ժամանակ լիցենզիա ստացած Լսողական ծրագիր հեռարձակողները պարտավոր են իրենց տեխնիկական միջոցները համապատասխանեցնել թվային հեռարձակման ցանցով հեռարձակվելու համար նախատեսված միջոցներին:

19. Սույն օրենքի 49-րդ հոդվածի 3-րդ մասը չի տարածվում սույն օրենքը ուժի մեջ մտնելու պահին առկա պայմանագրային հարաբերությունների վրա մինչեւ պայմանագրերի գործողության ժամկետի ավարտը:

20. Սույն օրենքը ուժի մեջ մտնելուց հետո սույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթը կինոմատոգրաֆիական ստեղծագործությունների ցուցադրության դեպքում գործում է մեկ տարի հետո:

21. Սույն օրենքի 44-րդ հոդվածի 2-րդ մասը ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի մեկից:

22. 2020 թվականին հայտարարվելիք լիցենզիաների գործողության ժամկետը լրանալու հիմքով սլոթի օգտագործման լիցենզավորման մրցույթների հետ միաժամանակ հայտարարվում են նաեւ բոլոր ազատ սլոթերի օգտագործման լիցենզավորման մրցույթները:

23. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահին հանրային մուլտիպլեքսի սլոթի օգտագործման լիցենզիայի մրցույթը հայտարարված լինելու, բայց հայտերի քվեարկությունը կայացած չլինելու դեպքում, այն չեղարկվում է, և մրցույթ է հայտարարվում սույն օրենքով սահմանված կարգով: Չեղարկված մրցույթի մասնակցության համար վճարված պետական տուրքը համարվում է վավեր Հեռարձակողի կողմից նոր մրցույթին մասնակցելու հայտ ներկայացնելու դեպքում: Նոր մրցույթին մասնակցելու համար Հեռարձկողի կողմից հայտ չներկայացնելու դեպքում վճարված պետական տուրքը վերադարձվում է ամբողջությամբ:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի, ««Լիցենզավորման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծերի վերաբերյալ

Կարգավորման ենթակա հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենքը տեսալսողական մեդիա ոլորտը կարգավորելու համար այլևս ոչ արդիական նորմատիվ իրավական ակտ է, որը պարունակում է այնպիսի դրույթներ, որոնք չեն համապատասխանում առկա համայնապատկերի բնութագրիչներին: «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենքն ուժի մեջ է մտել դեռևս այն ժամանակ, երբ ավանդական անալոգային ռադիոն և հեռուստատեսությունը հիմնականում համարվել են տեսալսողական ծառայությունների միակ տեսակը, որը կարող էր հասանելի լինել քաղաքացիների մեծամասնության համար: Նորմատիվ իրավական ակտը փոփոխություններ է կրել մասնակիորեն վերգետնյա թվային հեռուստատեսությանը՝ անցում կատարելու գործընթացի համար: Տեսալսողական մեդիա ծառայությունների մատուցման եղանակների, ինչպես նաև ոչ վերգետնյա բաշխման համակարգերի (մալուխային, արբանյակային) ընդլայնումը բերել է տվյալ ոլորտում ծագող բազմաթիվ այլ հասարակակն հարաբերությունների առաջացմանը, ինչի արդյունքում գործող կարգավորումները վերածվել են մի օրենսդրական ակտի, որով կարգավորվում է ներկայումս Հայաստանում մատուցվող ծառայությունների միայն մի մասը:

Ոլորտը կարգավորող օրենքի շրջանակներում պետք է կարգավորվեն տեսալսողական հաղորդակցության այն բոլոր տեսակները, որոնք գտնվում են ծառայություն մատուցողի խմբագրական անձնակազմի, դիստրիբյուտորի և տեսալսողական արտադրանքն օգտատերերին հասցնողների պատասխանատվության ներքո:

Սա ներառում է ոչ միայն ռադիոն և հեռուստատեսությունը, այլ նաեւ ըստ պահանջի ծառայությունները (անկախ նրանից, թե ինչ հատուկ տեխնոլոգիա և հարթակ է օգտագործվել դրանք բաշխելու համար): Այն ընդհուպ պետք է ընդգրկի նաև տեսագրությունների տարածման հարթակների գործունեության որոշ հայեցակետեր, ինչպիսիք են համացանցում տարածվող սակայն ցանցային օպերատորի կողմից հեռարձակման ընթացքում ծագող հասարակական հարաբերությունները: Գործող կարգավորմամբ՝ ելնելով սկզբունքներից, պետք է նախատեսված լիներ ծառայության տեսակներ, բովանդակություն, այլ ոչ թե կենտրոնացում այն տեխնոլոգիայի վրա, որը ապահովում է դրա տարածումը կամ բաշխումը, քանի որ այն այլ նորմատիվ իրավական ակտի կարգավորման առարկան պետք է հանդիսանա: Բացի այդ, կենտրոնանալով տեխնոլոգիաների վրա՝ կորսվում է ճկունությունը, քանի որ տեխնոլոգիաներն արագ են զարգանում, իսկ օրենսդրի՝ քննարկվող իրավահարաբերությունները կարգավորող նորմատիվ իրավական ակտը պետք է լինի հարատև:

Ներկայումս տեսալսողական մեդիայի վերաբերյալ օրենքի դերը պետք է ուղղված լինի արդեն իսկ գոյություն ունեցող տարբեր մեդիա սուբյեկտների գործունեությունը հեշտացնելուն և հանրային ոլորտի շրջանակներում նրանց դերին և դիրքին համաչափ և համապատասխան իրավունքների և պարտականությունների համակարգ ստեղծելուն՝ այդպիսով խուսափելով ավելորդ կամ անհամաչափ

սահմանափակումներից, բայց նաև բաց չթողնել կարգավորման համար անհրաժեշտ որևէ հարաբերություն: Դրանով պետք է դյուրացվի նաև նոր սուբյեկտների մուտքը տեսալսողական շուկա, մասնավորապես՝ թվայնացմամբ և մասնավոր մուլտիպլեքս օպերատորի ներգրավմամբ պայմանավորված, և ապահովվի տարբեր տեսակի մեդիաների միջև հավասարակշռված մրցակցային միջավայր:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» գործող օրենքը դրույթներ չի պարունակում տեսալսողական արտադրանքի որակի հետ կապված, սակայն դրույթներ է պարունակում բիզնես ծրագրերի վերաբերյալ :Տեսալսողական մեդիայի վերաբերյալ օրենքի դերակատարությունը ֆիզիկական անձնաց կամ մասնավոր ընկերությունների բիզնես և ֆինանսական հնարավոր մոդելները սահմանելը չէ: Ներկայումս մեդիա հարթակների համար կան հնարավոր տարբեր եղանակներ՝ հաջող գործունեություն ծավալելու համար, ինչը կախված է նաև նրանց կողմից մատուցվող ծառայությունների տեսակից և սպառողներով ձևավորվող այն լսարանից, որին նրանք նպատակ ունեն թիրախավորելու: Այդ պատճառով այդ խնդիրների հետ կապված ցանկացած իրավական կարգավորում ավելորդ է և միջամտողական: Օրենքը նաեւ պարունակում է ոչ բավարար դրույթներ՝ ուղղված բազմակարծությունն ու բազմազանությունը երաշխավորելուն:

Գործող օրենքը չի պարունակում հանրային շահը սպասարկող մեդիայի առաքելության և նպատակների վերաբերյալ պատշաճ և նյութաիրավական կարգավորում, որը թույլ կտար կարգավորող պետական մարմնին սահմանել իր գործողությունները և դրանք համապատասխանեցնել թվայնացված նոր միջավայրին: Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն օրենքով պաշտոնապես բնութագրվում է որպես մի մարմին, որը գործում է անկողմնակալ, անկախ և թափանցիկ կերպով՝ հիմք ընդունելով օրենքը: Այնուամենայնիվ, «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» օրենքը ներառում է նաև մի քանի այնպիսի տարրեր, որոնք չեն համապատասխանում հռչակված այս ընդհանուր պահանջներին, և այդ մասով նույնպես անհրաժեշտ է պատշաճ փոփոխություններ կատարել իրավական բարեփոխումների գործընթացի համատեքստում: Գործող օրենքը ներառում է լիցենզավորման կարգի վերաբերյալ մի շարք մանրամասն դրույթներ: Լիցենզիա ստանալն օրենքով սահմանված է որպես ռադիո և հեռուստատեսային ծառայություններ մատուցելու միակ հնարավոր եղանակ, այնինչ լիցենզիան տեսալսողական արտադրանք կազմողների ու հանրության ներկայացնողների համար պետք է հանդիսանա միմիայն հանրային մուլտիպլեքսի սլոթն օգտագործելու թույլտվություն, ինչն արդեն պետական սահմանափակ ռեսուրս է և այդ պարագայում է միայն հասկանալի լիցենզիայի տրամադրման իմաստը: Այն կարող էր հիմնավորվել վերգետնյա հեռարձակման համակարգի և ավանդական մեդիայի գերակայության համատեքստում, բայց ոչ երբեք համաչափ՝ թվային միջոցների ներկայիս տարատեսակության համատեքստում: Արդյունքում ունենք բազմաթիվ նմանատիպ կազմակերպություններ, որոնք իրենց և՝ ուղղվածությամբ, և՝ լսարանով, և՝ տեխնիակակն ու ֆինանսական միջոցներով, և՝ արտադրանքով ամբողջությամբ տեղավորվում են տեսալսողական մեդիածառայության տրամաբանության մեջ, մասնավորապես՝ ունեն տեսալսողական արտադրանք, այնինչ այնպիսի միջոցների օգտագործմամբ են արտադրանքի ազդանշաններն հասցվում օգտատերերին, որ դուրս են մնում գործող օրենքի կարգավորման դաշտից:

Գործող կարգավորմամբ պատասխանատվության միջոցները անարդար անհավասարության սկզբունքով են և ոչ թե արդար անհավասարության, քանի որ առկա սանկցիաները անհատական պատասխանատվության սկզբունք չեն ենթադրում որքան էլ որ ունեն հարաբերական որոշակի տեսք: Օրենքով արգելված հանրորեն վտանգավոր միևնույն արարքի համար ֆինանսական շրջանառությամբ էականորեն տարբերվող երկու ընկերություններ կարող են պատասխանատվության ենթարկվել միևնույն ձևով և չափով, ինչը տուժամիջոցի նպատակները չի արդարացնում, քանի որ իրավախախտում կատարող սուբյեկտը, ունենալով մեծ միջոցներ և վճարելով իր հասույթի համեմատ չնչին չափ կազմող տուգանքը չի ուղղվում, դա չի նպաստում սոցիալական արդարության վերականգնմանը և չի հանդիսանում նաև կանխարգելում, քանի որ նմանատիպ հասույթ ունեցող այլ սուբյեկտների պարագայում ևս պետական հարկադրանքի այդ ձևը և չափը պարզապես երաշխիք չէ նոր արարքների ընդհանուր կանխման համար:

Իրավական ակտի ընդունման և կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը

ա)հանրային հեռարձակողների տեսալսողական արտադրանքի որակի բարձրացում.
բ) իրավական բարենպաստ և հեռանկարանային դաշտի ստեղծում.
գ) մեդիա ոլորտում հավասար մրցակցային միջավայրի ստեղծում.
դ)բարձրորակ լրագրության ստեղծում.
ե) մեդիագրագիտության բարձրացում.
զ) ատելության խոսքի նվազում.
է) մեդիայի արդյունավետ կառավարում.
ը) մեդիա ոլորտում սեփականության իրավունքների թափանցիկություն.
թ) հավաստի և բովանդակալից մեդիա արտադրանքի ապահովում.
ժ) պատասխանատվության անհատականացման ապահովում.

Իրավական ակտի ընդունման անհրաժեշտության մեկնաբանությունը.

- Նախագծի կարգավորումների համաձայն՝ տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող մարմին ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն է: Տեսալսողական տեղեկատվության սփռման հետ կապված հարաբերությունները հնարավոր չէ կարգավորել առանց դրանում դերակատար սուբյեկտների ոլորտին փոխկապակցված գործունեության վերահսկողության: Այսինքն, սահմանադիրը, ամրագրելով Սահմանադրության 196-րդ հոդվածում հետևյալը. «Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն անկախ պետական մարմին է, որն ապահովում է հեռարձակվող լրատվության միջոցների ազատությունը, անկախությունը և բազմազանությունը, **վերահսկում է հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների գործունեությունը**» ֆիքսել է նպատակը այսկերպ կարգավորելու հեռուստատեսության և ռադիոյի, այլ կերպ՝ տեսալսողական մեդիայի բնագավառը: Սահմանադրությունը ամրագրում է վերահսկողությունը որպես միջոց՝ իրականացնելու սահմանադրի՝ այդ բնագավառը կարգավորելու նպատակը: Այսինքն, սահմանադրի նպատակի իրագործումը հնարավոր է միայն վերահսկողական գործառույթները տարածելով տեսալսողական մեդիայի ողջ ոլորտի նկատմամբ: Սամանադրաիրավական «**վերահսկում է հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների գործունեությունը**» ձևակերպումը չպետք է մեկնաբանվի պարզապես գործունեությունը վերահսկելու գործառույթ նախատեսող կարգավորում:

- Առաջարկվող նախագծով մանրամասն առկա է օրենքի նպատակն՝ ի տարբերություն գործող կարգավորման և այն առանձնացված է մասով, որը թույլ կտա Նախագծի այլ կարգավորումների հետ համադրելիս մեկնաբանել յուրաքանչյուրդ դրույթ: Գործող օրենքի 1-ին հոդվածով սահմանվում է, որ օրենքի կարգավորման առարկան ընդգրկում է «հեռուստառադիոընկերությունների (հեռուստաընկերությունների եւ ռադիոընկերությունների) կարգավիճակը, կանոնակարգում է դրանց հիմնադրման, հեռուստաընկերությունների լիցենզավորման և ղեկավարման կարգը, իրավունքների ու պարտականությունների առաջացման հիմքերը, հեռուստառադիոընկերությունների ստեղծման ու գործունեության ընթացքում ծագող հարաբերությունները»: Այս կարգավորումը շատ սահմանափակ է և դրանից նաև բխում է, որ պետք է լինի առևտրային մեդիա հարթակների հետ կապված չափազանց միջամտողական մտադրություն: Տեսալսողական մեդիա ծառայությունների վերաբերյալ օրենքի շրջանակներում պետք է կարգավորվեն տեսալսողական հաղորդակցության տեսակները, որոնք գտնվում են ծառայություն մատուցողի խմբագրական պատասխանատվության ներքո: Սա ներառում է ոչ միայն ռադիոն եւ հեռուստատեսությունը, այլ նաեւ ըստ պահանջի ծառայությունները (անկախ նրանից, թե ինչ հատուկ տեխնոլոգիա եւ հարթակ է օգտագործվել դրանք բաշխելու համար):Նախագծով առաջարկվում է կարգավորել մեդիա ոլորտում առաջացող հասարակական հարաբերությունների ավելի լայն հարթակ՝ բացառելով միայն համացանցը: Համացանցի վրա տարածվում է այնքանով, որ դրանում տարածվող տեսալսողական արտադրանքը կարող է հեռարձակվել ցանցային օպերատորների կողմից, իսկ նման պարագայում տեսալսողական արտադրանք տվողը ոչ այլ ինչ է, քան տեսալսողական մեդիածառայություն մատուցող՝ անկախ այն հանգամանքից իր կազմած տեսալսողական տեղեկատվությունը սեփական ցանցով է տարածվում, թե օպերատորի կողմից: Արդյունքում, ըստ էության, տարածվում է ոչ թե համացանցի վրա, այլ ցանցային օպերատորի միջոցով տեսալսողական տեղեկատվությունն օգտատերերին տրամադրելու նպատակ ունեցող սուբյեկտների գործունեության վրա: օպերատոր հասկացության մեջ են ներառվել նաև տեսալսողական արտադրանքին զուգահեռ կամ տեսալսողական արտադրանքի կազմում հաղորդվող կամ տեսալսողական արտադրանքի միջոցով հասանելիություն ստացող լրացուցիչ տեսալսողական կամ տեքստային տեղեկատվությունը (ինտերակտիվ հեռուստատեսության) և ցանցային օպերատորների ենթակառուցվածքների կամ համացանցի միջոցով տեսալսողական տեղեկատվություն տարածողները (OTT օպերատոր): Վերջիններիս որպես ցանցային օպերատոր համարելը միտված է պաշտպանելու այսպես ասած՝ դասական ցանցային օպերատորների շահերը: Ցանց կառուցելով, աշխատատեղեր ստեղծելով և այլ մեծ ներդրումներով դասական ցանցային օպերատորները օրինական ճանապարհով սպառողներին են հասցնում տեսալսողական արտադրանքը, իսկ OTT ծառայությունները, ակնհայտ ոչ մրցակցային պայմաններով, ցածր գնով հենց ցանցային օպերատորի ինտերնետ-կապն օգտագործելով սպառողին են տրամադրում ծառայություններ: Համացանցի վրա չի կարող տարածվել, քանի որ այդ միջոցները ստեղծված չեն Հայաստանի Հանրապետությունում, դրանց գործունեությունը ծավալվում է այլ երկրներում և կարգավորվում է տվյալ երկրների օրենսդրությամբ և միջազգային պայմանագրերով:Նախագծով ներկայացված են պահանջները, որոնք անհրաժեշտ են սուբյեկտին համարվելու Հայաստանի Հանրապետությունում

գործող տեսալսողական մեդիածառայություն՝ նպատակ ունենալով հստակ տարանջատել օտարերկրյա տեսալսողական մեդիածառայություններին մեր երկրում գործողներից:

- Նախագծում ներառվել են հիմնական հասկացություններ և տրվել են հնարավոր հասկանալի ձևակերպումներ: Հիմնական հասկացություններում չեն ներառվել հանրածանոթ հասկացություններ: Տեսլասողական մեդիածառայություն մատուցող հասկացությունը ֆիքսվել է որպես սուբյեկտ և այն հիմնական սուբյեկտը, որը կրելու խմբագրական պատասխանատվություն: Նախագծում օգտագործվում է տեսլասողական մեդիածառայություն մատուցողի կարճ տարբերակը՝ Հեռարձակող: Հստակ տարանջատվել են տեսալսողական մեդիածառայություններ մատուցողները տեսալսողական տեղեկատվություն տարածողներից: Տեսալսողական արտադրանքն ընդհանրապես՝ ներառվող գովազդով, ելքային տվյալներով, ենթագրերով ֆիքսվել է որպես առավելագույն կատեգորիա: Մյուս բոլոր տերմինները՝ արտադրանք, նյութ, տեղեկություն, լուր և այլն ունեն առավել շեշտված կենցաղային երանգ և պակաս պիտանի են բնութագրման համար և չեն կարող օգտագործվել ինֆորմացիայի փոխարեն: Տեսալսողական տեղեկատվություն տարածողներ հասկացությանը ֆիքսվել է **օպերատոր** հասկացությամբ և դրա մեջ ընդգրկվել են ցանցային և մուլտիպլեքս օպերատորները և մեկ հասկացությամբ՝ **օպերատոր** են օգտագործվում այն դեպքերում, երբ դրույթը վերաբերելի է երկուսին: Ցանցային օպերատոր է նշվել՝ պահպանելով տեխնոլոգիական չեզոքություն, քանի որ ընդհանրապես բացակայում է անհրաժեշտությունը ֆիքսելու միջոցները, այսինքն, ֆիքսելու դրանք մալուխային են կամ այլ: **Տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտոր** հասկացությունում ֆիքսվել է Հեռարձակողի հետ պայմանագրի հիման վրա օպերատորին տարածման նպատակով տեսալսողական ծրագրեր տրամադրող, որպեսզի շփոթմունք չառաջանա տեսալողական մեդիածառայություն մատուցողի հետ, բացի այդ այն նոր՝ արդյունավետ կարգավորման նպատակով է սահմանվել, որին անդրադարձ կլինի ստորև:

- Սպառողների համար տրվել են տեսալսողական տեղեկատվության ազատ ընտրության երաշխիքը, իսկ պայմանագրային կարգով տեսալսողական տեղեկատվություն ստացողների համար նախատեսվել է վճարման պարտադիր եղանակ, որը անկախիկն է՝ նպատակ ունենալով այդ սուբյեկտների ստվերային գործունեությունը և ստեղծել հավասար պայմաններ:

- Հեռարձակողների ներկայացվող ընդհանուր պահանջներում ֆիքսվել է, որ տեսալսողական տեղեկատվության լեզուն հայերենն է և այդ նպատակի իրագործման համար առաջարկվում է, որ այլ լեզուներով ուղեկցվող տեսալսողական տեղեկատվությունը պետք է ուղեկցվի հայերեն լեզվով ընկալման միջոցներով: Այդ ընկալման միջոցները սպառիչ չեն թվարկվել, քանի որ էական չեն այդ եղանակները, այլ էական են դրույթի իրագործման նպատակներն՝ անկախ միջոցներից: Տեսալսողական արտադրանքի բնական որակի պահպանման նպատակով առաջարկվում է, որ հայերեն միջոցներով ուղեկցումը պետք է կիրառվի բնօրինակ լեզվով տեսալսողական տեղեկատվության վրա: Եվ դրույթից բացառություններ են կազմել միայն ձայնի միջոցով տարածվող տեղեկատվությունը, ազգային փոքրամասնությունների մշակույթը ներկայացնող հաղորդումները, օտար լեզվի ուսուցման նպատակով հաղորդումները, երաժշտական ստեղծագործությունները՝ ընդ որում հաղորդում կամ դրա մաս հանդիսացող ստեղծագործությունները, քանի որ կարող են լինել երաժշտի կյանքի վերաբերյալ վավերագրական ֆիլեր, որտեղ առկա են երաժշտական ստեղծագործություններ, ինչպես նաև բացառություն են կազմել միայն արտերկրում սփռվող տեսալսողական

հաղորդումները: Այդ նպատակին է ուղղված նաև Հեռարձակողների անվանումները էկրանային ցուցադրումների ժամանակ հայերեն տառադարձությամբ ապահովելու պահանջը: Տեղեկատվության ընկալման մատչելիության նպատակով նախատեսվել է պահանջ, որ մանկական և լրատվական հաղորդումներ Հեռարձակողները ապահովեն լսողական խնդիրներ ունեցող սպառողների համար կարգավորող պետական մարմնի կողմից սահմանված ժամերին ժեստերի լեզվով թարգմանություններով կամ ենթագրերով հաղորդումներ: Ժամանակի ընտրությունը ճկունության համար է թողնվել կարգավորող պետական մարմնի ակտով կարգավորմանը և նախատեսվել է նվազագույն քանակ, իսկ առավելագույնի համար սահմանափակումներ չկան: Հստակեցման համար նշվել է, որ այս դրույթները տարածվում են միան Հայաստանի Հանրապետությունում հիմնական գրանցում ունեցող և սփռվող տեսալսողական հաղորդումների վրա, որպեսզի ակնհայտ լինի միջպետական պայմանագրի հիման վրա գործող Հեռարձակողների նկատմամբ բացառությունը:

- Կարևորագույն դրույթներից մեկը տեսալսողական հաղորդումներում հավաստի տեղեկատվության ապահովումն է: Առաջարկվող արգելող նորմերը պայմանավորված են ոչ հավաստի տեղեկություններ տարածելու հանրորեն վտանգավորությամբ՝ այն էլ մեդիայում գերիշխող դիրք ունեցող տեսալսողական մեդիա սուբյեկտների համար. ոչ հավաստի տեղեկությունների ներազդումն անմիջականորեն ուղղված է մարդկանց մտածողության մոդելների ձևափոխմանը՝ ի շահ ներազդող կողմին անհրաժեշտ ուղղվածության, որը հանգեցնում է ներազդման ենթակա հանրույթի ապակայունացմանը, նրա ամբողջության, բարոյական դրվածքների, վստահության խախտմանը, մասնատմանը, նրա ներսում բաժանման, պառակտման, փոխադարձ օտարացվածության ներմուծմանը, թշնամության հրահրմանը: Ապատեղեկատվության տարածումն իրականացվում է ամենատարբեր ձևերով, կախված նպատակներից՝ հաջորդականությամբ, կրկնությամբ, ժամանակի ընտրությամբ:Մարդկանց պատկերացումների փոփոխման նպատակը դառնում է ապատեղեկատվություն տարածողի մասին իրականության խեղաթյուրումը:

Ապատեղեկատվության տարածումը՝ սոցիալական, հոգեբանական ներգործություն է, որն ուղղված է փոխելու անհատի, խմբի կամ հանրության ընկալումը՝ թաքնված, կեղծ գործելակերպով: Ապատեղեկատվության տարածման անմիջական հետևանքը անհատի մոտ կարող է լինել մեղքի զգացման, վախի, կասկածի ներշնչումը: Խնդիրն արդիական է Հայաստանում:Ոչ հավաստի լուրեր տարածելը դարձել է քաղաքական պայքարի բաղկացուցիչ մաս և կարող է լուրջ ազդեցություն գործել նաև ընտրական գործընթացների վրա:Այս դրույթի նախատեսումը ազատության դեմ հարձակում չէ, այլ՝ երաշխիք:Նախատեսվող նորմերն ուղղված են հստակ տարանջատելու կարծիքը հավաստի հաղորդագրությունից:Ոչ հավաստի տեղեկատվություն հասկացությունը բազմիմաստ չէ և նոր չէ, հասկացությունը ամենօրյա կիրառելի է և չի կարող տարակարծություն առաջացնել: Այն ներառում է իր մեջ բազմաթիվ հասկացություններ և առաջարկվող դրույթի և օրենքի նպատակի համադրված վերլուծությամբ հնարավորություն է տալիս կիրառողներին ընկալել տարանջատումը: Մասնավորապես տեղեկություն հասկացությունը եզրեր չունի կարծիք հասկացության հետ: Վերջին հասկացությունը եզրեր ունի տեսակետ, տեսանկյուն, վարկած և նմանատիպ այլ հասկացությունների հետ, ուստի չեն մասնավորեցվել դրանք անհրաժեշտության բացակայությամբ պայմանավորված, սակայն անհրաժեշտությունը կա հիմնավորմամբ ներկայացման:Պատճառահետևանքային կապը, որ բերում է կարծիքի ձևավորմանը,

իր մեջ ներառում է տվյալ մարդու էմոցիաները, զգացմունքները, համոզմունքները, նրա տեսակետը, ըմբռնումը և ցանկությունները: Կարծիքը, ի տարբերություն իմացության, կարող է հիմնվել չապացուցված (չհաստատված), սխալ կամ կեղծ տեղեկատվության վրա: Այսինքն, կարծիքի եզրերն այնքանով են կեղծ տեղեկության հետ, որ կարող են միայն հանդիսանալ ելակետ, որում էլ կայանում է խնդիրը և որը պարունակում է սխալ կարծիքի ձևավորման խնդիրը:Կարծիքը կարող է լինել պաշտոնական, հասարակական, անհատական, խմբային՝ օրինակ կուսակցական և այն պաշտպանված է սահմանադրաիրավական նորմերով, ուստի այն ենթակա չէ որևէ կերպ սահմանափակման: Տեղեկությունն այլ կերպ ասած հարցերի պատասխան է, որը կապված է փաստական տվյալների հետ և որը, հետևաբար, կարող է համադրվել փաստական տվյալների հետ և նույնացվել կամ լինել տրամագծորեն հակառակ կամ էականորեն տարբերվող: Վերջին դեպքում տեղեկությունը դառնում է ոչ հավաստի:Դրույթը բավականին մեծ հասարակական հարաբերություններ է կարգավորում և էական փոփոխություն է մտցնում տեսալսողական մեդիա ոլորտում:Կարևոր իրադարձությունների մասին տեղեկություն ստանալու իրավունքը նույնպես շարադրված է առանձին՝ սուբյեկտների դերերի, իրավունքների և պարտականությունների հստակ բաշխմամբ:

- Սահմանվել են տեսալսողական հաղորդումների չարաշահման արգելքներ՝ ուղղված տեսալսողական մեդիա ոլորտում ատելության խոսքի վերացմանը, անչափահասների վրա վատ ազդեցություն թողնող տեսալսողական արտադրանքի այնպիսի սահմանափակմանը, որը կբացառի այդ ազդեցությունը: Որոշակի բացառություններ են կազմել այն տեսալսողական արտադրանքները, որոնց հասանելիության նկատմամբ սպառողը կարող է դնել արգելքներ, օրինակ, սահմանել կոդեր, որոնց հաղթահարմամբ միայն կարելի ունենալ հասանելիություն: Սահմանափակում է նախատեսվել այնպիսի հաղորդումների կազմակերպման համար, որոնց ընթացքում իրենց բնույթով պայմանավորված կարող են կատարվել իրավախախտումներ, ինչպես օրինակ, մարդու առողջության կամ հասարակական կարգի և բարոյականության պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերությունների դեմ մեծ վտանգավորություն ունեցող ոտնձգություններ: Նորմում հստակ նախատեսված է շարժառիթ, այն է՝ կենցաղային հողի վրա նախկինում առաջացած վիճաբանություն, որը հանգեցնում է վրեժի, խանդի կամ այլ վտանգավոր շարժառիթի, ինչը որևէ կերպ վերաբերելի չէ քաղաքական հակասություններին:
- Տեսալսողական հաղորդումների կազմակերպանն ուղղված կարգավորումներում հատկանշական է հատկապես հանրային հեռարձակողի վրա դրված պարտականությունն առ այն, որ առաջին ամրագրման կրթական, մշակութային, մանկական հաղորդումները՝ այդ թվում ֆիլմերը, որոնց իրավատերն է հանդիսանում, այսինքն՝ սեփական արտադրության են կամ ձեռք են բերվել այլ անձինց, սակայն առկա է օտարելու իրավունքը, պետք ոչ ուշ, քան երեք տարի անց դրվի ազատ շրջանառության մեջ լիցենզիա ստացած մարզային սփռում իրականացնող տեսալսողական մեդիածառայություններ մատուցողների համար: Հանրային հեռարձակողն, այլ կերպ ասած, տեսալսողական արտադրանքը տալիս է պետական բյուջեի շնորհիվ, ուստի, ստացվում է՝ Հայաստանի Հանրապետությունում օգտատերերն, ովքեր նաև հարկ վճարողներն են, սահմանափակ են օգտվում այդ արտադրանքից, քանի որ հանրային հեռարձակողն, ըստ էության, իր վարած քաղաքականության մեջ չի ընդգրկի միևնույն հաղորդումը՝ մասնավորապես ֆիլմը, մեկ տարվա ընթացքում բազմիցս ցուցադրելը: Բացի այդ

հնարավորություն կտրվի մարզային տեսալսողական մեդիածառայություններ մատուցողներին ցուցադրել բարձր որակի արտադրանք: Լիցենզիա ստացած Հեռարձակողների համար սահմանվել է նաև լրացուցիչ պարտականություն՝ տեսալսողական ծրագրերում շաբաթական ընդհանուրն առնվազն 30 տոկոս մանկական, կրթական և մշակութային պարտադիր թեմատիկ ուղղվածությունների ընդգրկումը: Այն նույնպես նախատեսվել է բազմազանությունը ապահովելու և նշված ոլորտները մեծապես զարգացնելու նպատակով: Տեսալսողական հաղորդումների կազմակերպմանը վերաբերող մյուս դրույթներն առավել, քան հասկանալի են նախագծից:

- Հանրային մուլտիպլեքսում գործող հեռարձակողների համար պարտադիր են հեռարձակման օրվանից սկսած 45 օր ժամանակով պահպանել տեսալսողական հաղորդումները: Այն պատշաճ վերահսկողության ապահովման նպատակով է: Գործող կարգավորմամբ տեսալսողական հաղորդումները հաշվառվում են այդ նպատակով ստեղծված թղթային մատյանում: Նախագծով առաջարկվում է վարել կարգավորող պետական մարմնի կողմից հաստատված ձևի տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյան: Առաջին հերթին էլեկտրոնային եղանակին անցումը 21-րդ դարի հրամայականն է, երկրորդ հերթին կարգավորող պետական մարմնի աշխատակիցները մշտադիտարկումներ իրականացնելիս զերծ կմնան ֆիզիկապես մուտք գործելուց հեռարձակողների գործունեության տարածք՝ մատյանները զննելու նպատակով, այլ կունենան հասանելիություն մատյանների տվյալներն արտացոլող միասնական էկեկտրոնային հարթակի նկատմամբ և անհրաժեշտության դեպքում համապատասխան գործողությունները կկատարեն մուտք գործելով էլեկտրոնային հարթակ, ինչը ոչ այլ ինչ է, քան մի շարք ռեսուրսների խնայում:

- Տեսալսողական հաղորդումների հովանավորության որոշակի արգելքներ են սահմանվել: Հատկանշական է քաղաքական կուսակցությունների, քաղաքական կուսակցությունների ղեկավար մարմինների անդամների մասնակցությամբ հիմնադրված կամ կառավարվող հիմնադրամների, հասարակական կազմակերպությունների, նախընտրական հիմնադրամների և կրոնական կազմակերպությունների կողմից կամ դրանց միջոցներից հովանավորությունը : Այսչափ խիստ պայմանները ուղղված են հենց ապահովելու այս դրույթները նախատեսող 14-րդ հոդվածով տրված՝ հովանավորված հաղորդումների բովանդակության նկատմամբ միջամտությունը բացառելու դեպքերը: Հովանավորության համար սահմանվել է ժամային ահմանափակում՝ մասնավորապես հովանավորության մասին տեսալսողական հաղորդման մեկ ժամվա ընթացքում երեք անգամից ավել չի կարող նշվել այդ մասին՝ յուրաքանչյուրը 15 վայրկյան տևողությամբ: Մեկ ժամ է նշվել, քանի որ կարող են լինել 4 ժամ տևողությամբ հաղորդումներ:

- Հեռարձակողների և օպերատորների տեսակներին վերաբերելի հոդվածում հիմնադրվող Հանրային հեռարձակողների թվաքանակի համար սահմանափակում է նախատեսվել: Դա նույնպես հակամենաշնորհային երաշխիք է: Հանրային հեռարձակողները հիմնադրվում և գործում են առանց մրցույթի, հեղինակազորման և լիցենզավորման և 4-րդՀանրային հեռարձակողը հիմնադրելու դեպքում այն այլևս պետք է մասնակի լիցենզավորման մրցույթի, ինչպես մասնավոր Հեռարձակողները: Մեդիայի ազատության և անկախության համար մասնավոր հեռարձակողների հիմնադրման սահմանափակումներ կան մի շարք ինստիտուտների և պաշտոնատար անձանց համար:

- Բավականին պարզեցվել է մասնավոր մուլտիպլեքս օպերատրի հիմնադրումը: Գործող կարգավորումներով խիստ պահանջներ են դրված մուլտիպլեքս օպերատորի համար: Այն պահանջում է մեծ ներդրում, քանի որ իմպերատիվ սահմանված է, որ մուլտիպլեքս օպերատորը պետք է ապահովի հանրապետական սփռում: Նախագծով առաջարկվում է, որ մուլտիպլեքս օպերատորը կարող է հիմնադրվել առնվազն մեկ մարզում սփռում ապահովելու համար: Մասնավոր մուլտիպլեքս օպերատորի հիմնումը կենսական է այս բնագավառի համար: Հաշվի առնելով նաև առկա տեխնիկական հնարավորությունները՝ սահմանափակ ռեսուրսի առկայությունը, պարզեցվել է մուլտիպեքս օպերատորի մուտքը տեսալսողական շուկա: Վերացվել են հանրային քննարկման պարտադիր պահանջը, կրճատվել են մրցույթի ընթացքում սահմանված ժամկետները:
- Հակամենաշնորհային երաշխիքի ապահովման համար արգելքները սահմանված են միայն հանրային մուլտիպլեքսում գործող Հեռարձակողների համար, քանի որ նրանք օգտագործում են սահմանափակ ռեսուրս հանդիսացող հանրային մուլտիպլեքսի սլոթը և Հայաստանյան իրականությունում դեռևս սլոթի օգտագործմամբ սփռումը դեռևս գերիշխող դիրք է զբաղեցնում: Սահմանափակ ռեսուրսի պայմաններում, եթե թույլ տրվի Հեռարձակողին միաժամանակ օգտագործել մի քանի սլոթ, ապա առաջատարները կմնան միայն հանրային մուլտիպլեքսում, քանի որ մրցույթում դուրս կմղվեն մարզային և սկսնակ հեռարձակողները:
- Արդյունավետ կառավարման նպատակով հանրային հեռարձակողի խորհուրդի անդամների քանակն առաջարկվում է ավելացնել երկուսով՝ 6 անդամ և նախագահ: Սահմանափակում է նախատեսվել պաշտոնավարման ժամկետի հետ կապված, այն է՝ խորհրդի անդամը չի կարող երկու անգամ անընդմեջ ընդգրկվել խորհրդի կազմում: Հանրային հեռարձակողի խորհրդի անդամներին առաջադրելու մեխանիզմը գործող օրենքով էլ բավականին բարդ է: Անդամները նշանակվում են վարչապետի կողմից՝ հատուկ մրցութային հանձնաժողովի առաջադրմամբ, որն ընտրվում է Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի կողմից սահմանված կանոններին համապատասխան: Խորհրդի անդամների նշանակման այս բարդ ընթացակարգը որոշակի առումով երաշխավորում է դրանց անկախությունը քաղաքական ղեկավարությունից: Նոր նախագծով մշտական մրցութային հանձնաժողովի փոխարեն առաջարկվում է ստեղծել ժամանակավոր հանձնաժողով, որը կգործի մինչև Խորհրդի անդամի թափուր պաշտոնը համալրելը և դա հավելյալ երաշխիք է խորհրդի անկախության համար: Նոր մոդելով առաջարկվում է, որ խորհրդի նախագահին Խորհուրդն ընտրի իր կազմից 4 տարի ժամկետով՝ այդկերպ հնարավորություն տալով խորհրդի այլ անդամներին ևս իրենց պաշտոնավարման ընթացքում դրսևորվել և ընտրվել նախագահի պաշտոնում: Խորհրդի անդամներ չեն կարող լինել նաև մի շարք պաշտոնատար անձինք, կուսակցությունների ղեկավար մարմինների անդամներ, մասնավոր Հեռարձակողների ղկավարներ, հիմնադիրներ և նրանց փոխկապակցված անձինք, այլ Հեռարձակողների հետ աշխատանքային պայմանագրեր ունեցող անձինք: Սա նույնպես կհանդիսան խորհրդի անկախության երաշխիքներից մեկը: Մի շարք նորմատիվ իրավական այլ ակտերի հետ կապված հակասությունների արդյունքում խորհուրդը չի ստանում պետական մարմնի կարգավիճակ, սակայն, կարևորելով խորհրդի դերը տեսլասողական մեդիայի բնագավառում՝ նախատեսվել են գործող կարգավորումից ավելի բարձր գործակիցներ՝ խորհրդի աշխատավարձերի հետ կապված, մասնավորապես, առաջարկվում է խորհրդի նախագահինը դարձնել 10 գործակից, իսկ անդամինը՝ 7.5,

որը համապատասխանում է համանման այլ պետական մարմինների պաշտոնյաների աշխատավարձերի չափին: Ներդրվել է բոլոր անհրաժեշտ գործիքակազմը, որը հնարավորություն կտա խորհրդին կառավարելու Հանրային հեռարձակողին:Խորհրդի նախագահին պաշտոնանկ անելու միջնորդությամբ հանդես գալու իրավասություն է տրվել Հանրային հեռարձակողի հիմնադրին՝ տվյալ դեպքում՝ կառավարությանը: Այդ որոշումը, Խորհուրդը, ձայների մեծամասնությամբ, փակ գաղտնի քվեարկությամբ, երկշաբաթյա ժամկետում որոշում է կայացնում պաշտոնանկ անելու կամ միջնորդությունը մերժելու մասին: Դրա հիմքում կարող են դրվել այն բոլոր հանգամանքները, որոնք, օրինակ, հիմք են հանդիսացել խորհրդի անդամների համար նախագահ ընտրելու համար, այս պարագայում էլ դրանք կարող են լինել դրան հակառակ հիմքերը: Ո՞չ կարգավորող մարմնի, ո՞չ Հանրային հեռարձակողների որոշումները Խորհրդի համար պարտադիր կատարման ենթակա չեն, սակայն ենթակա են քննարկման: Խորհրդի որոշումները պետք է լինեն պատճառաբանված:

- Կարգավորող պետական մարմնին նույնպես տրվում է անհրաժեշտ գործիքակազմը՝ առաջարկվող սկզբունքներին համապատասխան իրագործելու սահմանադրի նպատակը: Առաջարկվող Նախագծով երաշխավորվում է կարգավորող պետական մարմնի բացարձակ անկախությունը: Առավել ճկուն կարգավորումներ ունենալու նպատակով, առաջարկվող նախագծով, բացի հիմնական լիազորություններից, կարգավորող պետական մարմնին տրվում են նաև օրենքից բխող որոշումներ կայացնելու լիազորություն: Նախատեսվում են լիազորություններ ոլորտին վերաբերելի քաղաքականության մշակման, նորմատիվ իրավական ակտերի նախագծերին եզրակացություններ տալու: Դրանք ոչ այլ ինչ են, քան ոլորտն առավել ճկուն կարգավորող և կարգավորող մարմնին ինքնուրույնության ու անկախության երաշխիք տվող դրույթներ: Մշտադիտարկման հետ կապված գործողություններում մտցվել է առանձնահատկություն՝ նախատեսելով, որ մշտադիտարկման տեսակ համարվող տեղում դիտարկումը կարող է իրականացվել միայն կարգավորող պետական մարմնի նախագահի հրամանով և միայն օպերատորների մոտ: Այլ պարագաներում տեղում դիտարկում չի կարող իրականացվել: Այն նպատակ է հետապնդում հայտնաբերել իրավախախտումներ, երբ օպերատորի ազդանշանը կարգավորող պետական մարմնի համար հասանելիություն չունի և օրենսդրության պահանջների խախտմամբ սփռման փաստը կարող է հաստատվել միայն տեղում դիտարկման միջոցով:
- Բոլորովին նոր մոդել է Հեռարձակողների հեղինակազորումը, դրա ընթացակարգը բավականին պարզ է, դյուրին՝ ի տարբերություն լիցենզավորման: Մոդելը նախատեսվել ոլորտը ամբողջությամբ կարգավորելու նպատակով, քանի որ, ինչպես վերը նշվեց, կան կազմակերպություններ կամ անհատներ, որոնք իրենց բնույթով մատուցում են տեսալսողական բնագավառի ծառայություններ և մրցակից են լիցենզիա ստացած կազմակերպություններին և տարբերությունը կայանում է նրանում, որ չեն օգտագործում հանրային մուլտիպլեքսի սլոթ, սակայն իրենց կազմած տեսալսողական ծրագիրը հեռարձակում են ցանցային օպերատորի միջոցով: Եվ դրա չնախատեսումը պարզապես անհավասարություն է առաջ բերում բնագավառում: Ուստի բոլոր տեսալսողական մեդիածառայություններ մատուցողները նախ պետք է հեղինակազորվեն և որպեսզի չհամարվի այն ավելորդ վարչարարություն, լիցենզիա ստանալու պարագայում չեն ներկայացնում այնպիսի տեղեկություններ, որոնք ներկայացվել են հեղինակազորման ընթացքում և չեն ենթարկվել փոփոխության:

- Այսկերպ, հստակ տարանջատվում են տեսալսողական տեղեկատվություն տարածողները, քանի որ նրանք ընդամենը ազդանշանը օգտատերերին հասցնողն են՝ օպերատորները, և տեսալսողական արտադրանքի բովանդակության համար պատասխանատվություն չեն կարող կրել: Օրենքում կիրառվող կանոններում, եթե չկան նշված լիցենզիա ստացած Հեռարձակող բառերը, նշանակում է, որ դրանք կիրառելի են բոլորի վրա: Ցանցային օպերատորների վրա դրվել է պարտականություն՝ հեռարձակելու Հանրային հեռարձակողի տեսալսողական ծրագրերը՝ իրենց սփռման գոտիներին համապատասխան:Ցանցային օպերատորները չեն կարող արտադրել սեփական տեսալսողական հաղորդումներ, հակառակ պարագայում կհամարվեն տեսալսողական մեդիածառայություններ մատուցող: Մեկ այլ կարգավորում առավել նվազեցրել է վարչարարությունը ցանցային օպերատորների մասով և արդյունավետ դարձրել վերահսկողությունը դիստրիբյուտորների կողմից տրամադրված ծրարգրերի հեռարձակման մասով: Նոր կարգավորմամբ առաջարկվում է վերացնել վերահեռարձակման թույլտվությունը, որը տրվում էր ցանցային օպերատորներին, փոխարենը, դիստրիբյուտորից ստանալ ծանուցում տրմադարվելիք ծրարգրերի վերաբերյալ: Որպես օրինակ, հարկավոր է նշել հետևյալը. դիստրիբյուտորը կարող է լինել մեկը, իսկ օպերատորները բազմաթիվ, որոնց կփոխանցվեն վերահեռարձակման իրավունքը և առավել է հեշտ է վերահսկողությունը սկսել մինչև հեռարձակումը մեկ սուբյեկտի նկատմամբ, քան մի քանի ցանցային օպերատորների: Դիստրիբյուտորը չի կարող ներկայացնել տեսալսողական տեղեկատվության ծրագիր, որում ներառված է օտարերկրյա գովազդ, եթե, իհարկե հնարավոր է եղել ձեռք բերել այդ ծրագրի առանց գովազդ տարբերակը: Այսինքն դրա պատասխանատվությունը բացառապես կրում է դիստրիբյուտորը:
- Ներդրվել է Հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման մրցույթի վարկանիշային մոդելը: Հեռարձակողները կարող են միաժամանակ մասնակցել ինչպես հանրապետական, այնպես էլ մայրաքաղաքային սփռում ապահովող ազատ սլոթերի օգտագործման լիցենզիայի մրցույթին: Տվյալ պարագայում հայտում նշում են առաջնային և երկրորդային նախապատվությունները: Մրցույթի ժամանակ այլ հավասար պայմանների առկայության դեպքում հաշվի են առնվում իրենց գործունեության ընթացքում օրենսդրության խախտումների քանակը և այդ արարքների վտանգավորությունը, քանի որ արարքները թվով կարող են շատ լինել, բայց անգամ քանակի շատ լինելու պարագայում չզիջել մրցող այլ հեռարձակողի կատարած արարքի վտանգավորությանը:
- Պատասխանատվության միջոցներում նունպես կատարվել են մոդելային փոփոխություններ: գործող կարգավորմամբ պատասխանատվության անհատականացումը կատարվում է միայն մի քանի հարաբերական որոշակի սանկցիաների միջոցով, որոնք ռիսկեր են պարունակում և արդարության սկզբունքին չեն համապատասխանում: Չի կարող կիրառվել միևնույն պատասխանատվության միջոցը մեծ շրջանառություն ունեցող սուբյեկտի նկատմամբ և փոքր կամ շրջանառություն ընդհանրապես չունեցող սուբյեկտի նկատմամբ: Ուստի ներդրվել են այնպիսի միջոցներ, որոնցով առաջին հերթին վրա են հասնում սուբյեկտի նախորդող տարվա հասույթի տոկոսների չափով տուգանքներ, այդպիսիք չլինելու պարագայում բացարձակ որոշակի, սակայն բավականաչափ նվազեցված սանկցիաներ, որոնք նպատակ ունեն կիրառվել սկզբնական փուլում, երբ դեռ բացակայում է նախորդող տարվա հասույթը, ինչպես նաև պակաս հասույթ ունեցող կամ չունեցող սուբյեկտների նկատմամբ:

- Եզրափակիչ և անցումային դրույթներում նշվել են այն բացառությունները, որոնցով չեն խախտվի տվյալ տեսալսողական մեդիայի ոլորտում գործող սուբյեկտների իրավունքները:

ՏԵՂԵԿԱՆՔ
Նախագծում կատարված փոփոխությունների վերաբերյալ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱՅԻ ՄԱՍԻՆ

Գ Լ Ո Ւ Խ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի նպատակը, կարգավորման առարկան եւ գործողության ոլորտը

1. Սույն օրենքի նպատակն է՝
   1) ապահովել հավաստի տեղեկատվություն ստանալու յուրաքանչյուրի իրավունքը՝ ~~ստանալու հավաստի տեղեկատվություն~~.
   2) երաշխավորել ~~խմբագրական անկախության եւ~~ կարծիքների արտահայտման ~~ազատության~~ իրավունքը.
   3) երաշխավորել տեսալսողական մեդիածառայություններ մատուցողների խմբագրական անկախությունը.
   ~~3) ապահովել հանրային տեսալսողական մեդիածառայություններ մատուցողի գործունեության նկատմամբ կառավարումն ապահովող եւ հսկողություն իրականացնող մարմնի անկախությունը.~~
   4) ~~ապահովել~~ երաշխավորել կարգավորող պետական մարմնի անկախությունը.
   5) ~~ապահովել, օժանդակել եւ զարգացնել~~ նպաստել տեսալսողական հաղորդումների բազմազանության զարգացմանը:

2. Սույն օրենքը սահմանում է տեսալսողական մեդիածառայություն մատուցողների եւ օպերատորների կարգավիճակը, կանոնակարգում է հեղինակազորման, լիցենզավորման, ծանուցումների ներկայացման կարգը, սույն օրենքի կարգավորման առարկա հանդիսացող ~~սահմանված~~ սուբյեկտների իրավունքների ու պարտականությունների առաջացման հիմքերը, գործունեության ընթացքում ծագող հարաբերությունները:
3. Սույն օրենքը չի տարածվում համացանցի, բացառությամբ ցանցային օպերատորների գործունեության, տեսալսողական արտադրանքին զուգահեռ կամ տեսալսողական արտադրանքի կազմում հաղորդվող կամ տեսալսողական արտադրանքի միջոցով հասանելիություն ստացող լրացուցիչ տեսալսողական կամ տեքստային տեղեկատվության (ինտերակտիվ հեռուստատեսության) վրա:
4. Սույն օրենքի գործողությունը տարածվում է Հայաստանի Հանրապետությունում՝
   1) տեսալսողական մեդիածառայություն մատուցողների վրա.
   2) օպերատորների վրա.
   3) տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորների վրա.
   4) կարգավորող պետական մարմնի վրա.

5) հանրային տեսալսողական մեդիածառայություն մատուցողի գործունեության կառավարումն ապահովող եւ հսկողություն իրականացնող մարմնի վրա.

5. Սույն օրենքի իմաստով տեսալսողական մեդիածառայություն մատուցողը համարվում է Հայաստանի Հանրապետությունում գործող, եթե համապատասխանում է հետեւյալ պահանջներից մեկին.

1) գրանցումը եւ տեսալսողական տեղեկատվության սփռումը Հայաստանի Հանրապետության տարածքում է.

2) օգտագործում է Հայաստանի Հանրապետության լիազոր մարմնի տրամադրած ~~հաճախությունը~~ հաճախականությունը.

3) օգտագործում է Հայաստանի Հանրապետության լիազոր մարմնի տրամադրած սլոթը հանրային մուլտիպլեքսում.

4) օգտագործում է Հայաստանի Հանրապետությունում գործող մասնավոր մուլտիպլեքսի կողմից տրամադրած սլոթը.

6. Սույն օրենքի իմաստով օպերատորը համարվում է Հայաստանի Հանրապետությունում գործող, եթե օգտագործում է Հայաստանի Հանրապետության տարածքում տեղակայված կայանը արբանյակային ազդանշանի համար, Հայաստանի Հանրապետության տնօրինման տակ գտնվող հաճախականությունները կամ Հայաստանի Հանրապետության տարածքում տրամադրվող ինտերնետ-կապը:

Սույն օրենքի իմաստով ցանցային օպերատոր են համարվում նաեւ ցանցային օպերատորների ենթակառուցվածքների կամ համացանցի միջոցով տեսալսողական տեղեկատվություն տարածողները (OTT օպերատոր):

Հոդված 2. Հայաստանի Հանրապետության տեսալսողական մեդիայի մասին օրենսդրությունը

1. Հայաստանի Հանրապետության տեսալսողական մեդիայի մասին օրենսդրությունը ներառում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, սույն օրենքը, «Զանգվածային լրատվության մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների մասին», «Լեզվի մասին», «Գովազդի մասին» օրենքները, Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրքը, կարգավորող պետական մարմնի իրավական ակտերը, տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող այլ իրավական ակտերը եւ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը:

2. Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են սույն օրենքով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:

Հոդված 3. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքում օգտագործվում են հետեւյալ հիմնական հասկացությունները.

1) ***տեսալսողական մեդիածառայություն մատուցող*** *(այսուհետ՝ Հեռարձակող, լսողական մեդիածառայություն մատուցողը՝ Լսողական ծրագրեր հեռարձակող)* Հայաստանի Հանրապետության կողմից հիմնադրված կազմակերպություն կամ կարգավորող պետական մարմնի կողմից հեղինակազորված ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը կազմում եւ սպառողին է ներկայացնում տեսալսողական

տեղեկատվություն եւ խմբագրական պատասխանատվություն է կրում տեսալսողական արտադրանքի բովանդակության համար.

2) ***կարգավորող պետական մարմին***՝ ~~տեսալսողական մեդիայի մասին օրենսդրության պահանջների կատարման նպատակով Հեռարձակողների, օպերատորների եւ տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորների գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնող անկախ պետական մարմին~~.

անկախ պետական մարմին, որն ապահովում է հեռարձակվող լրատվության միջոցների ազատությունը, անկախությունը եւ բազմազանությունը, վերահսկում է Հեռարձակողների, օպերատորների եւ տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորների գործունեությունը.

3) ***օպերատոր***՝ ցանցային կամ մուլտիպլեքս օպերատոր, որն առաջարկում է հաղորդակցային ծառայություն (ցանցեր, տեսալսողական համակարգեր, սլոթ եւ այլն) եւ պատասխանատվություն է կրում տեխնիկական ենթակառուցվածքի շահագործման միջոցով տեսալսողական ազդանշան սպառողներին հասցնելու համար.

4) ***մուլտիպլեքս օպերատոր***՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը բացառապես ապահովում է մուլտիպլեքսի տարածման եւ ենթակառուցվածքի տեխնիկական շահագործումը եւ օգտագործում է հաճախականային սահմանափակ ռեսուրսը.

5) ***ցանցային օպերատոր***՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը սեփականության կամ այլ իրավունքով ունի մալուխային կամ այլ ցանց (բացառությամբ հաճախականային սահմանափակ ռեսուրս օգտագործելու դեպքերի) եւ ապահովում է տվյալ ենթակառուցվածքի տեխնիկական շահագործումը.

6) ***հանրային հեռարձակող***՝ ~~Հայաստանի Հանրապետության կամ~~ Հայաստանի Հանրապետությանը 100 տոկոս պատկանող ընկերության սեփականությունը հանդիսացող Հեռարձակող.

7) ***թեմատիկ ուղղվածություն***՝ տեսալսողական հաղորդումների ուղղվածությունն ըստ բովանդակային առանձնահատկությունների.

8) ***սպառող***՝ առնվազն մեկ Հեռարձակողի տեղեկատվությունն ընդունող (դիտող եւ (կամ) լսող) անձ.

9) ***փոխկապակցված անձ***՝ ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր~~, ամուսնու ծնող, զավակ, եղբայր եւ քույր~~.

10) ***տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտոր***՝Հեռարձակողի հետ պայմանագրի հիման վրա օպերատորին տարածման նպատակող տեսալսողական ծրագրեր տրամադրող ֆիզիկական կամ իրավաբանական անձ.

11) ***մուլտիպլեքս***՝ տվյալների մի քանի հոսքերի միավորմամբ միասնական մեկ հոսքի (թվային ցանց) ստացումը, որը հետագայում կրկին կարող է մասնատվել.

12) ***հանրային մուլտիպլեքս***՝ ~~Հայաստանի Հանրապետության կամ~~ Հայաստանի Հանրապետությանը 100 տոկոս պատկանող ընկերության սեփականությունը հանդիսացող հեռարձակման թվային ցանց.

13) ***սլոթ***՝ մուլտիպլեքսում թվային հոսքի մի մասը, որը բավարար է ոչ ավելի, քան մեկ ծրագիր հեռարձակելու համար.

14) ***սփռում***՝ որոշակի տարածքի սահմաններում տեսալսողական տեղեկատվության տարածում.

15) ***տեսալսողական տեղեկատվություն***՝ հաճախականություններով եւ հնարավոր այլ տեխնիկական միջոցներով (հաղորդիչ, արբանյակ, մալուխային ցանց եւ այլն) սպառողներին տրամադրվող տեսալսողական նյութ՝ ներառյալ տեսալսողական արտադրանքին զուգահեռ կամ տեսալսողական արտադրանքի կազմում հաղորդվող կամ տեսալսողական արտադրանքի միջոցով հասանելիություն ստացող լրացուցիչ տեսալսողական կամ տեքստային տեղեկատվությունը (ինտերակտիվ հեռուստատեսություն).

16) ***գծային տեսալսողական տեղեկատվություն***՝ Հեռարձակողի կամ օպերատորի կողմից սպառողներին համաժամանակյա դիտելու եւ (կամ) լսելու նպատակով, նախապես կարգավորված հաջորդականությամբ տրամադրվող տեսալսողական նյութ.

17) ***ոչ գծային տեսալսողական տեղեկատվություն***՝ Հեռարձակողի կամ օպերատորի կողմից անհատ սպառողի պահանջով, իր կողմից ընտրված պահին դիտելու եւ (կամ) լսելու նպատակով տրամադրվող տեսալսողական նյութ՝ ըստ տեսացանկի (կատալոգ).

18) ***տեսալսողական ծրագիր***՝ Հեռարձակողի կողմից նախապես կարգավորված հաջորդականությամբ տեսալսողական նյութեր.

19) ***տեսալսողական հաղորդում***՝ տարածվող պատկերներ եւ (կամ) հնչյուններ սահմանափակ տեւողությամբ նյութ, որը կազմակերպական իմաստով ինքնուրույն եւ ավարտուն է եւ համարվում է հեղինակային եւ (կամ) հարակից իրավունքի օբյեկտ.

20) ***առաջին ամրագրման հաղորդում***՝ առաջին անգամ հեռարձակվող տեսալսողական հաղորդում.

21) ***հայերեն տեսալսողական հաղորդում*** հայերեն ընկալման որեւէ միջոցով (կրկնօրինակում, հնչյունավորում եւ (կամ) ենթագիր) ուղեկցվող տեսալսողականհաղորդում.

22) ***տեսալսողական գովազդ***՝ իրավաբանական կամ ֆիզիկական անձանց, ապրանքների, գաղափարների կամ նախաձեռնությունների մասին տեղեկությունների տարածումը Հեռարձակողի միջոցով, որը կոչված է ձեւավորելու կամ պահպանելու հետաքրքրությունը տվյալ ֆիզիկական կամ իրավաբանական անձի, ապրանքների, ծառայությունների, գաղափարների կամ նախաձեռնությունների նկատմամբ՝ շահույթ ստանալու նպատակով.

23) ***հեղինակազրկում***՝ կարգավորող պետական մարմնի կողմից ֆիզիկական կամ իրավաբանական անձին Հեռարձակողի կարգավիճակ տվող փաստաթղթի տրամադրում.

24) ***բացառիկ իրավունք***՝ այլ անձանց մտավոր սեփականություն հանդիսացող տեսալսողական տեղեկատվությունը որոշակի աշխարհագրական տարածքում տարածման բացառիկ իրավունք.

25) ***կարևոր իրադարձություն***՝ պետական կամ համազգային նշանակության քաղաքական, մշակութային, կրոնական, մարզական կամ դրանց իրենց նշանակությամբ համարժեք իրադարձություն.

26) ***մշտադիտարկում*** կարգավորող պետական մարմնի կողմից Հեռարձակողների եւ օպերատորների գործունեության՝ տեսալսողական մեդիայի մասին օրենսդրության պահանջներին համապատասխանությունը գնահատելու նպատակով իրականացվող դիտարկում:

27) ***վերահաղորդում***՝ այլ Հեռարձակողի կամ ցանցային օպերատորի կողմից տեսալսողական ծրագրի համաժամանակյա կամ գրեթե համաժամանակյա՝

տեսալսողական տեղեկատվության հեռարձակումից մինչեւ դրա ընդունումն ընկած կարճաժամկետ ընդհատումներով առաջացող տատանումների հետեւանքով՝ հեռարձակման գործընթացին ներհատուկ տեխնիկական պատճառներով պայմանավորված եւ ամրագրված (ձայնագրված եւ (կամ) տեսագրված) տեսալսողական հաղորդման հետագա հեռարձակումը.

28) *էթիկայի կանոնագիր*՝ Հեռարձակողի կողմից միջազգային չափանիշների համաձայն ինքնուրույն կազմված փաստաթուղթ՝ սեփական էթիկական նորմերի վերաբերյալ:

Հոդված 4. Տեսալսողական տեղեկատվության ազատ ընտրությունը

1. Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում է տեսալսողական տեղեկատվության ազատ ընտրության, արտադրության ու տարածման իրավունքը: Տեսալսողական տեղեկատվության գրաքննությունն արգելվում է:

2. Յուրաքանչյուր ոք ունի տեսալսողական տեղեկատվության ազատ ընտրության իրավունք:

3. Պետությունն անհրաժեշտ պայմաններ է ստեղծում եւ միջոցներ է ձեռնարկում Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում Հանրային Հեռարձակողի (առնվազն 1 տեսալսողական եւ 1 լսողական) տեսալսողական ծրագրերի ընդունման համար:

4. Օպերատորը եւ Հեռարձակողը համապատասխան սփռման տարածքների համընկնման շրջաններում չպետք է ~~սահմանափակեն~~ խոչընդոտեն սպառողների՝ օրինական հիմքով տարածվող այլ տեսալսողական տեղեկատվություն ընդունելու իրավունքը:

Հոդված 5. Մարդու իրավունքները տեսալսողական տեղեկատվության հասանելիության նկատմամբ

1. Եթե Հեռարձակողը կամ օպերատորը տեսալսողական տեղեկատվությունը հեռարձակում է անորոշ թվով անձանց համար եւ անվճար ~~տեղեկատվություն տալու պայմանով~~ հիմունքներով, ապա յուրաքանչյուր ոք իրավունք ունի նման ծառայությունից սպառողական նպատակով օգտվելու անհատույց եւ առանց տվյալ Հեռարձակողին կամ օպերատորին տեղեկացնելու:

2. Այլ դեպքերում Հեռարձակողի կամ օպերատորի մատուցելիք տեղեկատվության գինը եւ պայմանները սահմանվում են պայմանագրային կարգով:

~~3. Պայմանագրային կարգով տեսալսողական տեղեկատվություն ստացող սպառողներից մատուցված ծառայությունների համար վճարումների գանձումն իրականացվում է անկանխիկ:~~

Գ Լ Ո Ւ Խ 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՀԵՌԱՐՁԱԿՈՂՆԵՐԻ ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ

Հոդված 6. Տեսալսողական տեղեկատվության լեզուն

1. Տեսալսողական տեղեկատվության լեզուն հայերենն է, բացառությամբ սույն օրենքով սահմանված դեպքերի:

2. Օտար լեզուներով հեռարձակվող տեսալսողական տեղեկատվությունը պետք է ուղեկցվի հայերեն լեզվով ընկալման միջոցներով (կրկնօրինակում, հնչյունավորում եւ (կամ) ենթագիր): Հայերեն ընկալման միջոցներով ուղեկցումը պետք է կիրառվի բացառապես բնօրինակ լեզվով տեսալսողական տեղեկատվության նկատմամբ:

Սույն դրույթը չի տարածվում.

6) միայն ձայնի միջոցով տարածվող տեսալսողական տեղեկատվության վրա.
7) Կարգավորող պետական մարմնի սահմանած կարգով Հեռարձակողների կողմից ~~սփռվող~~ Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների մշակույթը ներկայացնող ~~եւ այլ Հեռարձակողների կողմից ազգային փոքրամասնությունների մշակույթը ներկայացնող~~ տեսալսողական հաղորդումների վրա.
8) օտար լեզվի ուսուցման նպատակով արտադրված տեսալսողական հաղորդումների վրա.
9) տեսալսողական հաղորդում կամ դրա մաս հանդիսացող երաժշտական ստեղծագործությունների վրա.
10) միայն արտերկրում սփռվող տեսալսողական հաղորդումների վրա:

3. Հեռարձակողների անվանումները էկրանային ցուցադրման ժամանակ օտար լեզուներով օգտագործելու դեպքում հայերեն անընդհատ տառադարձությունը պարտադիր է:

4. Հեռարձակողները, որոնք արտադրում են նաեւ մանկական եւ (կամ) լրատվական տեսալսողական հաղորդումներ, պարտավոր են իրենց ծրագրերում ապահովել լսողական խնդիրներ ունեցող սպառողների համար տեղեկատվության ընկալման մատչելիությունը՝ օրվա ընթացքում՝ կարգավորող պետական մարմնի կողմից սահմանված ժամերին, համապատասխանաբար առնվազն մեկական մանկական եւ լրատվական տեսալսողական հաղորդում ներկայացնելով ժեստերի լեզվով թարգմանությամբ կամ հայերեն ենթագրով:

~~5. Սույն գլխի դրույթները տարածվում են միայն այն հեռարձակողների վրա, որոնց գրանցման վայրը եւ տեսալսողական տեղեկատվության սփռումը Հայաստանի Հանրապետության տարածքում է:~~

Հոդված 7. Տեսալսողական հաղորդումներում հավաստի տեղեկատվության ապահովումը

1. Հեռարձակողները պետք է ապահովեն.

1) որեւէ անձի անվանական ուղղված խոսքի պատասխանի իրավունքը.

2) ներկայացված տեղեկություններում սխալների առկայության դեպքում, սեղմ ժամկետում միեւնույն հաղորդման, իսկ հնարավորության բացակայության դեպքում՝ այլ հաղորդման ժամանակ այդ մասին իրազեկումը.

3) իրազեկումը՝ ներկայացված փաստերի անանուն կամ հավաստիությունը բավականաչափ չստուգված աղբյուրների վերաբերյալ.

2. Տեսալսողական հաղորդումների ընթացքում Հեռարձակողը պետք է պահպանի հետեւյալ պահանջները.

1) ուղիղ եթերը պետք է ուղեկցվի «Ուղիղ եթեր» գրառմամբ.

2) տեսալսողական հաղորդումների կրկնությունը ողջ ընթացքում պետք է ուղեկցվի «Կրկնություն» գրառմամբ, բացառությամբ կինեմատոգրաֆիական եւ երաժշտական ստեղծագործությունների.

3) արխիվային տեսագրությունները կամ ձայնագրությունները պետք է թվագրվեն կամ ուղեկցվեն «Արխիվ» գրառմամբ:

Հոդված 8. Կարեւոր իրադարձությունների մասին տեղեկություն ստանալու իրավունքը

1. Յուրաքանչյուր ոք ունի Հեռարձակողների միջոցով կարեւոր իրադարձությունների մասին տեղեկություն ստանալու իրավունք՝ առանց նախապես անհատական թույլտվության:

2. Հեռարձակողները, որոնց ծրագրերում առկա են լրատվական բնույթի տեսալսողական հաղորդումներ, պարտավոր են լուսաբանել կարեւոր իրադարձությունները:

3. Կարեւոր իրադարձությունների շրջանակը հաստատում է կարգավորող պետական մարմինը:

4. Եթե կարեւոր իրադարձությունը տեւում է մի քանի օր, ստեղծվում է առնվազն մեկ տեսանյութ իրադարձության ամեն օրվա մասին:

5. Մեկ տեսանյութի տեւողությունը չի կարող կարճ լինել 60 վայրկյանից:

6. Հայաստանի Հանրապետության մարզական հավաքականների մասնակցությամբ կարևոր իրադարձությունների ամբողջական տարածման բացառիկ իրավունքը պատկանում է Հանրային հեռարձակողին:

Հոդված 9. Տեսալսողական հաղորդումների չարաշահման արգելքը

1. Արգելվում է տեսալսողական հաղորդումներում օրենսդրությամբ արգելված արարքների կոչեր տարածելը: Ուղիղ եթերի ժամանակ նման կոչեր հնչելու դեպքում Հեռարձակողը պատասխանատվության չի ենթարկվում, եթե կոչի հեղինակը ուղիղ եթերում զգուշացվել է իրավախախտման մասին, իսկ կրկնակի կոչի դեպքում՝ ուղիղ եթերը դադարեցվել է:

2. Կարգավորող պետական մարմինը օրենքով իրեն վերապահված վերահսկողական գործառույթների իրականացման ընթացքում վարչական իրավախախտման կամ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով արգելված արարքի հատկանիշներ հայտնաբերելու դեպքում դիմում է իրավասու մարմիններին:

3. Էրոտիկ բնույթի տեսալսողական հաղորդումները եւ սարսափ ու ակնհայտ բռնություն պարունակող ֆիլմերը, ինչպես նաեւ անչափահասների առողջության, մտավոր եւ ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող հաղորդումները կարող են եթեր հեռարձակվել ժամը 24:00-6:00-ն: Նման հաղորդումների որոշման չափորոշիչները սահմանում է կարգավորող պետական մարմինը:

4. Պետության կողմից հայտարարված սգո եւ հիշատակի օրերին գովազդի եւ զվարճալի հաղորդումների հեռարձակումը Հեռարձակողների կողմից արգելվում է:

5. Հեռարձակողները կամ օպերատորները սույն հոդվածի 3-րդ մասում նշված հաղորդումները՝ առանց ժամային սահմանափակումների կարող են տարածել սպառողների կողմից այդ հաղորդումների հասանելիության արհեստական արգելքի (կոդ) ներդրման տեխնիկական հնարավորության առկայության դեպքում:

6. Արգելվում են տեսալսողական հաղորդումները, որոնց մասնակիցները Հեռարձակողին նախապես հայտնի՝ կենցաղային հողի վրա առաջացած վիճաբանության, երկարատեւ ժամանակահատվածի ընթացքում ձեւավորված հակակրանքի արդյունքում հաղորդման բնույթով պայմանավորված՝ եթերում կարող են կատարել օրենքներով արգելված գործողություններ:

7. Արգելվում են տեսալսողական հաղորդումները, որոնք հետապնդում են ~~կանանց եւ տղամարդկանց~~ ազգային, ռասայական, սեռային և կրոնական

հատկանիշով խտրականություն քարոզելու նպատակ կամ պարունակում են նման նպատակ հետապնդող տեղեկատվություն:

8. Արգելվում են Հեռարձակողի, իսկ ոչ գծային տեղեկատվության դեպքում՝ օպերատորի կողմից տեսալսողական ծրագիրը կամ դրա մասը առանց դրանց հեղինակային կամ հարակից իրավունքի սուբյեկտ չհանդիսացող իրավատերերի համաձայնության տարածելը:

Գ Լ Ո Ւ Խ 3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՀԵՌԱՐՁԱԿՈՂՆԵՐԻ ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Հոդված 10. Տեսալսողական հաղորդումները ~~եւ դրանց գործունեությունը~~

1. Հանրային մուլտիպլեքսում Հեռարձակողները տեսալսողական ծրագրերի հեռարձակումն իրականացնում են կարգավորող պետական մարմնի, իսկ մասնավոր մուլտիպլեքսում՝ մասնավոր մուլտիպլեքս օպերատորի կողմից տրամադրված սլոթի միջոցով:

~~2. Այլ զանգվածային լրատվության միջոցների կողմից Հեռարձակողների տեսալսողական ծրագրերի տարածման դեպքում հղումն այդ լրատվամիջոցներին պարտադիր է:~~

2. Մասնավոր Հեռարձակողը Հանրային հեռարձակողի սույն օրենքի 22-րդ հոդվածի 6-րդ մասի 3-րդ կետի «զ» ենթակետով նախատեսված հաղորդումները հեռարձակում է առանց փոփոխությունների՝ այդ թվում նույն ելքային տվյալներով եւ առանց գովազդի:

3. Ոչ սեփական տեսալսողական հաղորդումները կարող են հեռարձակվել միայն դրանց հեռարձակման իրավունքը հավաստող փաստաթղթերի առկայության դեպքում:

4. Տեսալսողական հաղորդման եւ հեղինակի մասին տեղեկատվության (ենթագիր, ձայնային ներկայացում) ամբողջական հեռարձակումը պարտադիր է, բացառությամբ Լսողական ծրագիր հեռարձակողի երաժշտական ստեղծագործությունների:

5. Լիցենզիա ստացած Հեռարձակողի ծրագրում մանկական, կրթական, մշակութային եւ սպորտային թեմատիկ ուղղվածության տեսալսողական հաղորդումները պետք է կազմեն շաբաթական եթերաժամի առնվազն ~~30~~ 20 տոկոսը:

Սույն մասի պահանջը չի տարածվում լսողական ծրագրեր հեռարձակողների վրա:

6. Հայերեն տեսալսողական հաղորդումները մեկ Հեռարձակողի հեռարձակմամբ չի կարող պակաս լինել ամսական ընդհանուր ժամաքանակի 55 տոկոսից :

7. Հեռարձակողի լրատվական հաղորդումներում նույն թեմայի վերաբերյալ լուսաբանումը չպետք է գերազանցի հաղորդման եթերաժամի 25 տոկոսը:

8. Ծխելու տեսարաններ պարունակող տեսալսողական հաղորդումը՝ դրա մեկնարկին, տեսանելի չափով, 5 վայրկյան տեւողությամբ պետք է ուղեկցվի «ծխելը վնասում է ձեր առողջությանը» գրառմամբ:

Հոդված 11. Տեսալսողական հաղորդումներն ընտրությունների (հանրաքվեների) նախընտրական (հանրաքվեի դրված հարցի վերաբերյալ) քարոզչության ժամանակահատվածում

1. Ընտրությունների (հանրաքվեների) նախընտրական (հանրաքվեի դրված հարցի վերաբերյալ) քարոզչության իրականացման համար օրենքով սահմանված ժամանակահատվածում՝

1) տեսալսողական հաղորդումները հեռարձակվում են ընտրությունների (հանրաքվեների) մասին օրենսդրությանը համապատասխան.

2) Հեռարձակողները պարտավոր են հավասար պայմաններ ապահովել թեկնածուների եւ մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների (հանրաքվեի քարոզչության կողմերի) համար՝ հրապարակավ հայտնելով վճարովի տեսալսողական հաղորդումների իրենց եթերաժամի գինը եւ հեռարձակման պայմանագրի էական այլ պայմաններ.

3) Հեռարձակողի լրատվական հաղորդումներում թեկնածուների, կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների (հանրաքվեի քարոզչության կողմերի) նախընտրական (հանրաքվեի դրված հարցի վերաբերյալ) քարոզչության վերաբերյալ պետք է ներկայացվի անկողմնակալ եւ գնահատականներից զերծ տեղեկատվություն՝ պահպանելով ~~ապահովելով~~ լուսաբանման համար հավասար հնարավորություններ ապահովող ~~պայմանների տրամադրումը~~ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով և Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումներով սահմանված կարգերը ~~պահպանմամբ~~.

4) թեկնածուներին, կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին (հանրաքվեի քարոզչության կողմերին) նախընտրական հիմնադրամի միջոցների հաշվին տրամադրվող նախընտրական քարոզչական տեսալսողական հաղորդումները (Հանրային հեռարձակողի դեպքում՝ նաեւ օրենքով սահմանված անվճար եթերաժամը) պետք է ուղեկցվեն էկրանի վրա պարտադիր անընդմեջ լուսագրով՝ «Նախընտրական (հանրաքվեի դրված հարցի վերաբերյալ) քարոզչություն», իսկ լսողական հաղորդումների դեպքում յուրաքանչյուր հաղորդման ընթացքում ոչ պակաս, քան երկու անգամ պետք է հիշեցվի դրա մասին:

2. Ընտրությունների (հանրաքվեների) քվեարկության օրը եւ դրան նախորդող օրն արգելվում է հեռարձակել քարոզչական կամ քարոզչությանը նպաստող նյութ՝ տեղեկատվական, խմբագրական, փաստավավերագրական, հեղինակային կամ այլ հաղորդումների տեսքով կամ ցանկացած այլ ձեւով նախընտրական (հանրաքվեի դրված հարցի վերաբերյալ) քարոզչություն իրականացնելը:

3. Ընտրությունների (հանրաքվեների) քվեարկության օրը եւ դրան նախորդող օրը ուղիղ եթերի ժամանակ քարոզչություն հնչելու դեպքում Հեռարձակողը պատասխանատվության չի ենթարկվում, եթե քարոզչության հեղինակը ուղիղ եթերում զգուշացվել է իրավախախտման մասին, իսկ կրկնակի քարոզչության դեպքում՝ ուղիղ եթերը դադարեցվել է:

Հոդված 12. Տեսալսողական հաղորդումները ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ

1. Հեռարձակողները պարտավոր են ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ վարչապետին կամ արտակարգ դրության ընթացքում ի պաշտոնե արտակարգ դրության տարածքի պարետ հանդիսացող պաշտոնյային ~~փոխվարչապետին~~ հատկացնել եթերաժամանակ՝ պաշտոնական հաղորդագրություն կատարելու համար:

2. Հեռարձակողների կողմից եթերաժամանակի հատկացման կարգը եւ պայմանները սահմանում է կարգավորող պետական մարմինը:

3. Ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ Հեռարձակողների տեղեկատվության սահմանափակումները կիրառվում են «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» եւ «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» օրենքներով սահմանված շրջանակներում:

Հոդված 13. Հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզիա ստացած Հեռարձակողի տեսալսողական հաղորդումների պահպանման կարգը

1. Լիցենզիա ստացած Հեռարձակողները պարտավոր են վարել տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյան եւ պահպանել իրենց հեռարձակած տեսալսողական հաղորդումների տեսագրություններն ու ձայնագրությունները՝ հեռարձակման օրվանից սկսած 45 օր ժամկետով, բացառությամբ սույն օրենքի 22-րդ հոդվածի 6-րդ մասի 3-րդ կետի «զ» ենթակետով նախատեսված դեպքերի:

2. Տեսալսողական հաղորդումները պետք է գրանցվեն կարգավորող պետական մարմնի համար հասանելիություն ունեցող տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանում, որի ձեւը եւ վարման կարգը սահմանում է կարգավորող պետական մարմինը:

3. Տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանի տվյալների հիման վրա կարգավորող պետական մարմինը վերահսկում է Հեռարձակողների գործունեության համապատասխանությունը օրենսդրության պահանջներին: Կարգավորող պետական մարմինը ընտրանքային սկզբունքով իրականացնում է Հեռարձակողների կողմից հեռարձակվող տեսալսողական տեղեկատվության մշտադիտարկումներ ~~ուղղակի դիտարկումներ~~ յուրաքանչյուր Հեռարձակողի համար ամսվա ընթացքում առնվազն հինգ օր: Մշտադիտարկման արդյունքները կարող են համադրվել հաշվառման էլեկտրոնային մատյանների տվյալների հետ:

4. 45 օրը լրանալուց հետո տեսալսողական հաղորդումների տեսագրությունները եւ ձայնագրությունները կարող են ջնջվել, եթե այդ ընթացքում հաղորդումներում տեղ գտած տեղեկությունների հերքման, ուղղման կամ դատական վեճերի առկայության վերաբերյալ Հեռարձակողը պատշաճ չի ծանուցվել: Նշված ձայնագրություններն ու տեսագրությունները կարող են չպահպանվել վիճելի հարցերի լուծումից հետո:

Հոդված 14. Հովանավորությունը Հեռարձակողների տեսալսողական հաղորդումներում

1. Հովանավորությունը Հեռարձակող չհանդիսացող կամ տեսալսողական ծրագրերի ստեղծման գործում չներգրավված ֆիզիկական կամ իրավաբանական անձի մասնակցությունն է տեսալսողական հաղորդման ուղղակի կամ անուղղակի ֆինանսավորմանը՝ այդ անձի անունը, ապրանքանիշը, համբավը կամ գործունեությունը գովազդելու նպատակով:

2. Տեսալսողական հաղորդումների հովանավորության նկատմամբ կիրառվում են «Գովազդի մասին» օրենքի զանգվածային տեղեկատվության էլեկտրոնային միջոցներում գովազդը կարգավորող դրույթները:

3. Հովանավորված տեսալսողական հաղորդման բովանդակությունը եւ ուղղվածությունը չպետք է կրեն հովանավորի միջամտությունը եւ այլ բնույթի ազդեցություն:

4. Արգելվում է հովանավորությունը՝

1) ~~քաղաքական~~ կուսակցությունների, ~~քաղաքական~~ կուսակցությունների ղեկավար մարմինների անդամների մասնակցությամբ հիմնադրված կամ կառավարվող հիմնադրամների, ~~հասարակական կազմակերպությունների,~~ նախընտրական հիմնադրամների եւ կրոնական կազմակերպությունների կողմից կամ դրանց միջոցներից.

2) լրատվական թողարկումների, պաշտոնական հաղորդագրությունների եւ քաղաքական հաղորդումների.

3) դեղատոմսով տրամադրվող դեղերի անունների հիշատակումով, արտադրությամբ եւ վաճառքով, ինչպես նաեւ օրենսդրությամբ արգելված գործունեությամբ զբաղվող ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից:

5. Ալկոհոլային խմիչքների, ~~եւ~~ ծխախոտի, դեղերի, բուժտեխնիկայի, զենքի եւ զինամթերքի արտադրությամբ զբաղվող ֆիզիկական կամ իրավաբանական անձանց, ինչպես նաև բուժական մեթոդների, վիճակախաղի, շահումով խաղի, խաղատան կազմակերպման գործունեությամբ զբաղվող անձանց կողմից հովանավորության դեպքում կիրառվում են «Գովազդի մասին» օրենքով նախատեսված սահմանափակումները:

6. Հովանավորվող տեսալսողական հաղորդման մեջ պետք է հստակ նշվի հովանավորին համապատասխանող անվանումը կամ ցանկացած այլ խորհրդանիշ, ինչպես նաեւ նշվի իր ապրանքների եւ ծառայությունների համար օգտագործվող ապրանքային նշանը, որոնք կարող են ներկայացվել հաղորդման ընթացքում, սակայն ոչ ավելի, քան մեկ ժամվա ընթացքում երեք անգամ՝ յուրաքանչյուրը 15 վայրկյան տեւողությամբ:

7. Հեռարձակողների կողմից գովազդի հեռարձակումն իրականացվում է սույն օրենքի եւ «Գովազդի մասին» օրենքի պահանջներին համապատասխան

Գ Լ Ո Ւ Խ 4

ՀԵՌԱՐՁԱԿՈՂՆԵՐԸ ԵՎ ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐԸ

~~Հոդված 15. Հեռարձակողների եւ օպերատորների տեսակները~~

~~1. Հայաստանի Հանրապետությունում կարող են գործել սույն օրենքով թույլատրված տեխնիկական հնարավորություններով Հեռարձակողներ եւ օպերատորներ:~~

~~2. Հանրային հեռարձակողները հիմնադրվում են Կառավարության որոշմամբ՝ առանց հեղինակագործման եւ լիցենզավորման: Երեքից ավելի թվով Հանրային հեռարձակող հիմնադրելու դեպքում, նոր հիմնադրված Հանրային հեռարձակողը հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման համար մասնակցում է մրցույթին սույն օրենքի 47-րդ հոդվածով սահմանված կարգով:~~

~~3. Հանրային հեռարձակողները կարող են հիմնադրվել բաժնետիրական ընկերության ձեւով:~~

~~4. «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի իմաստով լիազոր մարմինը Հանրային հեռարձակողի համար Հանրային հեռարձակողի խորհուրդն է (այսուհետ՝ Խորհուրդ):~~

~~5. Կառավարության որոշմամբ Խորհրդի կառավարմանը կարող են հանձնվել այլ բաժնետիրական ընկերություններ:~~

~~6. Մասնավոր են այն Հեռարձակողները, որոնց հիմնադիրները (մասնակիցները) ֆիզիկական կամ իրավաբանական անձինք են:~~

~~7. Հայաստանի Հանրապետությունում գործող մասնավոր Հեռարձակողներն եւ օպերատորները օգտվում են հավասար իրավունքներից եւ օրենքի առջեւ պատասխանատու են հավասարապես:~~

Հոդված 15. Մասնավոր Հեռարձակողների հիմնադրումը

1. Հեռարձակողների հիմնադրման (ստեղծման) ժամանակ կամ դրանից հետո օտարերկրյա կապիտալի մասնակցության բաժինը չպետք է տվյալ

կազմակերպության որոշումների ընդունման համար անհրաժեշտ բաժնեմասերի հիսուն տոկոսին հավասար կամ հիսուն տոկոսից ավելի լինի, եթե այլ բան նախատեսված չէ միջազգային պայմանագրով ~~Ավելի մեծ բաժնեմաս կարող է սահմանվել միջպետական պայմանագրերով~~:

2. Մասնավոր Հեռարձակողների հիմնադիրներ (մասնակիցներ) չեն կարող լինել՝

1) Հանրապետության նախագահը եւ նրան փոխկապակցված անձինք.

2) պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմինները.

3) Կառավարության անդամները եւ նրանց փոխկապակցված անձինք.

4) Ազգային ժողովի պատգամավորները եւ նրանց փոխկապակցված անձինք.

5) դատավորները եւ նրանց փոխկապակցված անձինք.

6) համայնքների ղեկավարները եւ նրանց փոխկապակցված անձինք.

7) կարգավորող պետական մարմնի անդամները, աշխատակիցները եւ փոխկապակցված անձինք.

8) կուսակցությունները՝ այդ թվում կուսակցության ղեկավար մարմնի անդամները եւ նրանց փոխկապակցված անձինք.

9) կուսակցությունների հիմնադրամները

10) կրոնական կազմակերպությունները.

~~11) դատարանի վճռով անգործունակ ճանաչված, օրինական ուժի մեջ մտած դատավճռով ազատազրկման դատապարտված եւ պատիժը կրող անձինք, ինչպես նաեւ օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված անձինք, որոնց դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ.~~

11) 18 տարին չլրացած քաղաքացիները:

Հոդված 16. Մասնավոր մուլտիպլեքս օպերատորի հիմնադրումը

1. Մասնավոր մուլտիպլեքս օպերատորի գործունեությունն իրականացվում է օրենքով սահմանված կարգով կարգավորող պետական մարմնի կողմից տրամադրված լիցենզիայի հիման վրա Հայաստանի Հանրապետությունում ~~հիմնադրված~~ գրանցված իրավաբանական կամ ֆիզիկական անձի կողմից, որի հիմնադրման (ստեղծման) ժամանակ կամ դրանից հետո իրավաբանական անձի օտարերկրյա կապիտալի մասնակցության բաժինը չպետք է հավասար կամ ավելի լինի մուլտիպլեքս օպերատորի որոշումների ընդունման համար անհրաժեշտ բաժնեմասերի 50 տոկոսից, եթե այլ բան նախատեսված չէ միջազգային պայմանագրով ~~Ավելի մեծ բաժնեմաս կարող է սահմանվել միջպետական պայմանագրերով~~:

2. Մասնավոր մուլտիպլեքսի սփռման տարածքը չպետք է լինի ավելի փոքր, քան մեկ մարզի կամ Երեւան քաղաքի տարածքը:

Հոդված 17. Հեռարձակողների եւ օպերատորների ինքնուրույնության երաշխիքը

1. Արգելվում է ~~պետական իշխանության մարմինների, պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնյաների, կուսակցությունների, հասարակական կազմակերպությունների եւ այլ իրավաբանական ու ֆիզիկական անձանց կողմից~~ Հեռարձակողների եւ օպերատորների գործունեությանը միջամտելը:

2. Պետական իշխանության մարմինները կարող են Հեռարձակողների եւ օպերատորների գործունեությանը միջամտել միայն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում:

~~3. Պետությունը երաշխավորում է տեղեկատվական, կրթական, մշակութային եւ ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանություն առաջարկող անկախ Հանրային հեռարձակողի առկայությունը եւ գործունեությունը:~~

Հոդված 18. Հակամենաշնորհային երաշխիքը

~~1. Հեռարձակողը կարող է օգտագործել մուլտիպլեքսում ներառված միայն մեկ պլոթ:~~

1. Իրավաբանական ~~անձինք~~ եւ ֆիզիկական անձինք միաժամանակ կարող են դառնալ ոչ ավելի, քան լիցենզիա ստացած երկու (մեկ հանրապետական եւ մեկ մայրաքաղաքային, մեկ հանրապետական և մեկ մարզային կամ մեկ մայրաքաղաքային և մեկ մարզային սփռման) Հեռարձակողի հիմնադիր եւ (կամ) մասնակից:

2. Սույն հոդվածի դրույթները չեն տարածվում Հեռարձակողների կողմից սփռվող լսողական ծրագրերի վրա:

Հոդված 19. Հեռարձակողների եւ օպերատորների եկամուտների աղբյուրները եւ դրանց հրապարակայնացումը

1. Հեռարձակողների եկամուտները գոյանում են գովազդից, վճարովի եթերաժամից, հովանավորությունից, սեփական արտադրության տեսաշարային, ձայնաշարային եւ տեսաձայնաշարային նյութերի վաճառքից, բաժանորդային մուծումներից, հիմնադիրների ներդրումներից եւ օրենքով չարգելված այլ աղբյուրներից ստացված ֆինանսական միջոցներից: Հանրային Հեռարձակողի եկամուտները կանոնակարգվում են նաեւ սույն օրենքի 29-րդ հոդվածով:

2. Հեռարձակողները եւ օպերատորները պարտավոր են ապահովել իրենց աղբյուրների թափանցիկությունը, մինչեւ հաշվետու տարվան հաջորդող մայիսի 1-ը հրապարակել իրենց տարեկան ֆինանսական հաշվետվությունները եւ տեղեկատվություն տարեկան եկամուտների մասին՝ ըստ սույն հոդվածի 1-ին մասում նշված եկամուտների աղբյուրների, ինչպես նաեւ տեղեկություններ՝ հիմնադիրների եւ մասնակիցների մասին:

3. Հեռարձակողները եւ օպերատորները պարտավոր են յուրաքանչյուր տարի մինչեւ ~~հունվարի 20-ը~~ ապրիլի 1-ը կարգավորող պետական մարմին ներկայացնել նախորդող տարվա հասույթի (այսուհետ՝ Հասույթ) գոյացման բացվածքը եւ չափի վերաբերյալ տեղեկություն:

Հոդված 20. Ելքային տվյալները

1. Հեռարձակողները պարտավոր են ամեն օր եթերում ներկայացնել իրենց անվանումները, խորհրդանիշերը, իսկ Լսողական ծրագրեր հեռարձակողը՝ ազդանշանները:

2. Հեռարձակողները պարտավոր են՝

1) տեսալսողական հաղորդումների հեռարձակման ժամանակ անընդմեջ հեռարձակել տվյալ ընկերության խորհրդանիշը, բացառությամբ գովազդային հաղորդումների.

2) յուրաքանչյուր հեռարձակվող հաղորդման ավարտին նշել (հայտարարել) տվյալ տեսալսողական հաղորդման արտադրողի մասին տեղեկություններ.

3) հանդես գալ հեղինակազորման հայտում նշված անվանմամբ:

3. Արգելվում է քաղաքական նախաձեռնության, կուսակցության կամ կուսակցության հիմնադրամի անվանումն օգտագործել որպես Հեռարձակողի անվանում:

Հոդված 21. Արբանյակային տեսալսողական հեռարձակումը

Հեռարձակողները արբանյակային հեռարձակում կարող են իրականացնել համապատասխան արբանյակային գործակալության հետ պայմանագիր կնքելուց եւ կարգավորող պետական մարմնին ծանուցում ներկայացնելուց հետո:

ԳԼՈՒԽ 5
ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂՆԵՐԸ

Հոդված 22. Հանրային հեռարձակողների կարգավիճակը եւ գործունեության սկզբունքները

1. Հանրային հեռարձակողները հիմնադրվում են Կառավարության կողմից փակ բաժնետիրական ընկերությունների ձևով:

2. Հանրային հեռարձակողների թիվը չի կարող պակաս լինել երեքից՝ երկու ընդհանուր և մեկ կրթական-մշակութային ուղղվածության ծրագրերով:

3. Հանրային հեռարձակողը առանց հեղինակազորման և սլոթի օգտագործման լիցենզիայի հանրային մուլտիպլեքսի միջոցով կարող է սփռել միայն մեկ ծրագիր: Հանրային հեռարձակողը, հավելյալ ծրագիր սփռելու ցանկության դեպքում, հանրային մուլտիպլեքսի սլոթի օգտագործման համար մասնակցում է մրցույթի սույն օրենքի 45-րդ հոդվածով սահմանված կարգով:

4. «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի իմաստով լիազոր մարմինը Հանրային հեռարձակողի համար Հանրային հեռարձակողի խորհուրդն է (այսուհետ՝ Խորհուրդ):

5. Հանրային հեռարձակողները ղեկավարվում են օբյեկտիվության, ժողովրդավարության, անկողմնակալության, բազմազանության, բազմակարծության սկզբունքներով եւ ապահովում են կարծիքն ազատ արտահայտելու իրավունքի, խղճի, մտքի եւ կրոնի, ինչպես նաեւ ստեղծագործական ազատությունը:

6. Հանրային հեռարձակողները պարտավոր են՝

1) ապահովել հեռարձակվող տեղեկատվական, կրթական, մշակութային եւ ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանությունը.

2) օրվա եթերաժամը հատկացնել հայերեն տեսալսողական հաղորդումներին, բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի.

3) մշակել եւ իրականացնել ծրագրային քաղաքականություն՝

ա. հասարակական առավել հնչեղություն ունեցող տեղեկատվության հեռարձակման համար օգտագործել ամենադիտելի եթերային ժամանակը՝ ներկայացնելով խնդրի կամ հարցի վերաբերյալ պաշտոնական հաղորդագրությունը (տեղեկատվությունը), կարծիքների բազմազանությունը.

բ. սպառողներին մատուցել հաղորդումներ, որոնցում ներկայացվում են Հայաստանի Հանրապետության տարբեր տարածաշրջանների, ազգային փոքրամասնությունների, հասարակության տարբեր շերտերի ու սոցիալական խմբերի շահերը.

գ. սպառողներին մատուցել հաղորդումներ, որոնք ուղղված են ազգային, ռասայական, կրոնական և սեռային ~~կանանց եւ տղամարդկանց փաստացի հավասարության խթանմանը եւ սեռի~~ հատկանիշով խտրականություն պարունակող կարծրատիպերի հաղթահարմանը.

դ. սպառողներին մատուցել հաղորդումներ, որոնք ուղղված են բնակչության իրավագիտակցության, սոցիալական պատասխանատվության եւ մեդիագրագիտության բարձրացմանը, հասարակական-քաղաքական , միջազգային ~~աշխարհաքաղաքական~~ իրադարձությունների մասին բնակչությանը համալիր

տեղեկատվության տրամադրմանը, Հայաստանի Հանրապետությունում աղետների կառավարմանը եւ նվազեցմանը.

ե. եթերային ժամանակ տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների կյանքի և մշակույթի~~, այդ թվում՝ իրենց լեզուների~~ մասին հաղորդումների հեռարձակման ~~համար~~ նպատակով, ոչ գիշերային ժամերին ազգային փոքրամասնությունների համար նվազագույնը շաբաթական 30 րոպե հանրային տեսալսողական Հեռարձակողների և 2 ժամ՝ հանրային Լսողական հեռարձակողի եթերով.

զ. ~~եթե հանդիսանում է~~ իրավատեր հանդիսանալու դեպքում, ապահովել կրթական, մշակութային եւ մանկական տեսալսողական հաղորդումների՝ այդ թվում ֆիլմերի եւ դրանց կրկնօրինակումների շրջանառությունը մարզային սփռում իրականացնող Հեռարձակողների համար, ոչ ուշ, քան դրանց առաջին ամրագրումից 3 տարի անց~~, ապահովել դրանց վճարովի շրջանառությունը մարզային սփռում իրականացնող Հեռարձակողների համար~~:

7. Հանրային հեռարձակողների տեսալսողական հաղորդումներում թույլատրվում է ցուցադրել մեկ եթերային ժամվա ընթացքում մինչեւ 5 րոպե տեւողությամբ գովազդ, ինչպես նաեւ մշակութային, ուսումնական, գիտակրթական եւ սպորտային տեսալսողական հաղորդումների ցուցադրման ժամանակ հովանավորների մասին սույն օրենքին համապատասխան նշել տեղեկություններ (հովանավորություն):

8. Մշակութային, ուսումնական, գիտակրթական եւ սպորտային տեսալսողական հաղորդումների ցուցադրման ժամանակ հովանավորների մասին սույն օրենքին համապատասխան տեղեկություններ նշելու դեպքերի (հովանավորություն) վրա չի տարածվում Հանրային հեռարձակողի գովազդի հեռարձակման համար սույն օրենքով սահմանված ժամանակային սահմանափակումը: Մշակութային, ուսումնական, գիտակրթական եւ սպորտային հաղորդումների ցուցադրման ժամանակ հովանավորի մասին տեղեկությունների հիշատակումը չպետք է գերազանցի տվյալ հաղորդման ընդհանուր տեւողության 2,5 տոկոսը:

9. Հանրային հեռարձակողին թույլատրվում է ցուցադրել սոցիալական գովազդ՝ «Գովազդի մասին» օրենքով սահմանված կարգով: Ժամը 00:00-ից մինչեւ 18.00-ն ընկած ժամանակահատվածում սոցիալական գովազդը հեռարձակվում է անհատույց հիմունքներով: Ժամը 18:00-ից մինչեւ 00:00-ն ընկած ժամանակահատվածում սոցիալական գովազդը հեռարձակվում է վճարովի հիմունքներով՝ «Գովազդի մասին» օրենքով սահմանված կարգով:

10. Հանրային հեռարձակողների կանոնադրությունները հաստատում է Խորհուրդը:

11. Հանրային հեռարձակողները գործում են սույն օրենքին, իրենց կանոնադրությանը եւ այլ իրավական ակտերին համապատասխան:

12. Հանրային հեռարձակողների հեռարձակման ենթակա պաշտոնական հաղորդագրության (տեղեկատվության) արտադրությունն իրականացնում է այդ հաղորդագրությունը (տեղեկատվությունը) ներկայացնող մարմնի աշխատակազմը (ստորաբաժանումը) կամ այդ մարմնի համաձայնությամբ՝ Հանրային հեռարձակողները կամ այլ Հեռարձակողներ:

Հոդված 23. Հանրային հեռարձակողի խորհուրդը

1. Հանրային հեռարձակողի կառավարումն ապահովող եւ հսկողություն իրականացնող մարմինը Խորհուրդն է:

2. Խորհուրդը բաղկացած է յոթ անդամից՝ Խորհրդի նախագահ եւ Խորհրդի 6 անդամ: Խորհրդում պետք է ապահովվի սեռային ներկայացվածությունը:

3. Խորհրդի անդամները նշանակվում են մրցութային կարգով վարչապետի կողմից՝ վեց տարի ժամկետով:Նույն անձը չի կարող անընդմեջ երկու անգամից ավել ընդգրկվել Խորհրդի կազմում:

4. ~~Խորհրդի անդամները կարող են լինել ինչպես տեսալսողական բնագավառի, այնպես էլ գիտության կրթության, մշակույթի եւ լրագրության ոլորտի գործիչներ, ունենան բարձրագույն կրթության եւ տիրապետեն հայոց լեզվին:~~

Խորհրդի անդամ կարող են լինել Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, հայերենին տիրապետող եւ բարձրագույն կրթություն ունեցող, տեսալսողական բնագավառի, ինչպես նաև գիտության, կրթության, մշակույթի և լրագրության ոլորտի գործիչներ:

5. Որպես Խորհրդի անդամի թեկնածու չեն կարող առաջադրվել ~~լինել~~՝

~~1) օտարերկրյա քաղաքացին եւ քաղաքացիություն չունեցող անձը.~~

1) դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված անձը.

2) անձը, որը դատապարտվել է հանցագործության համար, եւ դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ.

3) կուսակցությունների ղեկավար մարմինների անդամները և նրանց փոխկապակցված անձինք.

~~5) այլ Հեռարձակողների հետ աշխատանքային պայմանագիր ունեցող անձինք.~~

4) մասնավոր Հեռարձակողների ~~ղեկավարները,~~ հիմնադիրները ~~եւ նրանց հետ փոխկապակցված անձինք~~.

5) Հանրապետության նախագահը եւ նրա հետ փոխկապակցված անձինք.

6) Կառավարության անդամները եւ նրանց հետ փոխկապակցված անձինք.

7) Ազգային ժողովի նախագահը եւ նրա հետ փոխկապակցված անձինք:

6. Խորհրդի անդամ նշանակվելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, Խորհրդի անդամը պարտավոր է՝

1) դադարեցնել ձեռնարկատիրական կամ քաղաքական գործունեությամբ զբաղվելը.

~~2) ազատվել պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում, կուսակցության ղեկավար մարմնում, ինչպես նաեւ առեւտրային կազմակերպություններում զբաղեցրած պաշտոններից.~~

2) ազատվել վճարովի հիմունքներով աշխատանքից, բացառությամբ գիտական, կրթական կամ ստեղծագործական աշխատանքի:

Հոդված 24. Խորհրդի գործունեության կարգը

1. Խորհուրդը գործում է սույն օրենքի, այլ օրենքների եւ իր հաստատած կանոնակարգի համաձայն:

2. Խորհուրդն իր աշխատանքներն իրականացնում է ամենօրյա գործունեության եւ ~~հրավիրվող հերթական ու արտահերթ~~ նիստերի միջոցով: Խորհրդի ~~հերթական~~ նիստերը գումարվում են Խորհրդի նախագահի նախաձեռնությամբ կամ խորհրդի առնվազն երեք անդամի պահանջով ~~ըստ անհրաժեշտության~~, բայց ոչ պակաս, քան ամիսը մեկ անգամ:

3. Խորհրդի նախագահի բացակայության, ինչպես նաեւ նրա կողմից իր պարտականությունները կատարելու անհնարինության դեպքում նիստը վարում է նրան փոխարինող Խորհրդի անդամը, իսկ նրա բացակայության դեպքում՝ Խորհրդի տարիքով ավագ անդամը:

~~4. Խորհրդի արտահերթ նիստը հրավիրում է Խորհրդի նախագահը՝~~

~~1) իր նախաձեռնությամբ.~~

~~2) Խորհրդի առնվազն երեք անդամի պահանջով:~~

4. Խորհրդի նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա է Խորհրդի անդամների կեսից ավելին:

5. Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող Խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

6. Խորհրդի նիստերն արձանագրվում են:

7. Խորհուրդն ապահովում է իր գործունեության հրապարակայնությունը: Խորհուրդն իր գործունեության, ընդունած որոշումների եւ ծրագրերի մասին պարբերաբար տեղեկատվություն է տրամադրում զանգվածային լրատվության միջոցներին եւ հրապարակում իր պաշտոնական կայքում:

8. Խորհրդի նախագահի հիմնական աշխատավարձի հաշվարկման գործակիցը 10 է, իսկ Խորհրդի անդամներինը՝ 7.5: Խորհրդի նախագահի եւ Խորհրդի անդամների աշխատավարձը որոշվում է «Պետական պաշտոններ եւ պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքով սահմանված բազային աշխատավարձը սույն մասում նշված գործակիցներով բազմապատկելու միջոցով:

Հոդված 25. Խորհրդի անդամների նշանակման կարգը եւ լիազորությունների դադարումը

1. Խորհրդի անդամի թափուր տեղի համալրման մրցույթն անցկացնելու նպատակով կարգավորող պետական մարմինը ձեւավորում է ժամանակավոր մրցութային հանձնաժողով (այսուհետ՝ Մրցութային հանձնաժողով):

2. Մրցութային հանձնաժողովը բաղկացած է 5 անդամից, ներառյալ՝ նախագահը, որը բաց քվեարկությամբ ընտրվում է Մրցութային հանձնաժողովի անդամների կողմից առաջին նիստի ժամանակ:

3. Մրցութային հանձնաժողովի նախագահը եւ անդամները պաշտոնավարում են մինչեւ Խորհրդի անդամի թափուր տեղի համալրումը:

4. Մրցութային հանձնաժողովի անդամ կարող են լինել լրագրության, Հեռարձակողի կառավարման բնագավառի, գիտության, մշակույթի եւ արվեստի գործիչներ, ինչպես նաեւ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

5. Մրցութային հանձնաժողովի ձեւավորման կարգը սահմանում է ~~Կառավարությունը~~ կարգավորող պետական մարմինը:

6. Մրցութային հանձնաժողովի ընթացիկ գործունեությունը սպասարկում է կարգավորող պետական մարմինը:

7. Մրցութային հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով: Մրցութային հանձնաժողովի նիստերը հրավիրում եւ վարում է Մրցութային հանձնաժողովի նախագահը, իսկ դրա անհնարինության դեպքում՝ Մրցութային հանձնաժողովի տարիքով ավագ անդամը:

~~7. Մրցութային հանձնաժողովի նիստերն իրավազոր են, եթե դրանց մասնակցում է նրա անդամների կեսից ավելին:~~

8. Մրցութային հանձնաժողովի անդամները գործում են հասարակական հիմունքներով:

9. Խորհրդի անդամի թափուր տեղի առկայության դեպքում Խորհրդի նախագահը, իսկ Խորհրդի նախագահի թափուր տեղի առկայության դեպքում Խորհրդի տարիքով ավագ անդամը թափուր տեղն առաջանալուց հետո՝ Մրցութային հանձնաժողով ձեւավորելու համար 3-օրյա ժամկետում այդ մասին գրավոր տեղեկացնում է կարգավորող պետական մարմնին:

10. Մրցութային հանձնաժողովը, ձեւավորվելուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում, ինչպես նաեւ Կառավարության եւ կարգավորող պետական մարմնի պաշտոնական կայքում հայտարարություն է տարածում Խորհրդի անդամի թափուր տեղի համալրման համար մրցույթի անցկացման վերաբերյալ:

11. Հայտարարության մեջ նշվում են՝

~~1) թափուր պաշտոնի անվանումը.~~

1) թափուր պաշտոնի թեկնածուին ներկայացվող պահանջները.

2) մրցույթին մասնակցելու համար ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, դրանք ներկայացնելու վայրը, ժամկետը, մրցույթի անցկացման օրը եւ ժամը:1

12. Մրցույթն անցկացվում է նաեւ այն դեպքում, երբ դրան մասնակցելու համար դիմել է մեկ մասնակից:

13. Եթե մրցույթին մասնակցելու համար ոչ մի դիմում չի ներկայացվել կամ մրցույթի արդյունքով հաղթող չի ճանաչվել, ապա մրցույթը համարվում է չկայացած եւ անցկացվում է ~~կրկնակի~~ նոր մրցույթ:

14. ~~Կրկնակի~~ Նոր մրցույթն անցկացվում է ընդհանուր հիմունքներով՝ սույն հոդվածով սահմանված կարգով:

15. Փաստաթղթերը ներկայացվում են ~~Կառավարության աշխատակազմ~~ կարգավորող պետական մարմին մրցույթի անցկացման մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող 10 օրվա ընթացքում: Նշված ժամկետից հետո ներկայացված փաստաթղթերը Մրցութային հանձնաժողովը չի քննարկում:

16. Մրցույթի արդյունքներով հաղթողին որոշելու նպատակով Մրցութային հանձնաժողովի նիստը հրավիրվում է փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետի ավարտից հետո՝ 10 օրվա ընթացքում:

~~17. Մրցութային հանձնաժողովի նիստի մասին Մրցութային հանձնաժողովի անդամներին նիստից առնվազն մեկ օր առաջ ծանուցում է Կառավարության աշխատակազմը~~ ~~կարգավորող պետական մարմինը~~:

17. Մրցութային հանձնաժողովը, ուսումնասիրելով մրցույթի մասնակիցների վերաբերյալ փաստաթղթերը, որոշում է մրցույթի հաղթողին: Անհրաժեշտության դեպքում մինչեւ մրցույթի հաղթողի վերաբերյալ որոշում կայացնելը Մրցութային հանձնաժողովը կարող է թեկնածուի հետ անցկացնել հարցազրույց:

18. Մրցութային հանձնաժողովի նախագահի հրավերով նիստերին կարող են մասնակցել Հեռարձակման ոլորտի մասնագետներ:

19. Մրցութային հանձնաժողովի որոշումներն ընդունվում են նրա անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Մրցութային հանձնաժողովի անդամները քվեարկում են «կողմ» կամ «դեմ»:

20. Մրցույթի արդյունքով Մրցութային հանձնաժողովն ընդունում է հետեւյալ որոշումներից մեկը.

1) մրցույթը չկայացած համարելու եւ ~~կրկնակի~~ նոր մրցույթ անցկացնելու մասին.

2) մրցույթում հաղթող ճանաչելու մասին:

21. Մրցութային հանձնաժողովը մրցույթում հաղթող է ճանաչում մեկ մասնակցի:

22. Մրցութային հանձնաժողովի կողմից մրցույթում հաղթող ճանաչվելու մասին որոշումն ընդունելուց հետո՝ եռօրյա ժամկետում, վարչապետը Խորհրդի անդամ է նշանակում մրցույթում հաղթած մասնակցին:

~~24. Առաջին կրկնակի մրցույթը չկայացած համարվելու դեպքում մինչեւ Մրցութային հանձնաժողովի կողմից կրկնակի մրցույթների արդյունքում հաղթող ճանաչելը վարչապետը տասնօրյա ժամկետում նշանակում է Խորհրդի անդամի ժամանակավոր պաշտոնակատար, որը պետք է բավարարի Խորհրդի անդամին սույն օրենքով ներկայացվող պահանջներին:~~

23. Մրցույթի համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը եւ դրանց ներկայացման կարգը սահմանում է Կառավարությունը:

~~26. Մրցութային հանձնաժողովի նիստերի նախապատրաստումը, արձանագրումը, ինչպես նաեւ ընդունված որոշումների առաքումն ապահովում է Կառավարության աշխատակազմը:~~

24. Խորհրդի անդամները նախքան պաշտոնավարման ժամկետը լրանալը չեն կարող հետ կանչվել իրենց պաշտոններից, բացառությամբ այն դեպքերի, երբ Խորհրդի անդամը՝

1) հրաժարական է տվել.

2) ընտրվել կամ նշանակվել է այլ պաշտոնում.

3) վերջին մեկ տարվա ընթացքում անհարգելի պատճառով չի մասնակցել Խորհրդի՝ երկու անընդմեջ կամ ընդհանուր առմամբ երեք նիստերին.

4) նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռը մտել է օրինական ուժի մեջ.

5) կորցրել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը ~~կամ ձեռք է բերել այլ պետության քաղաքացիություն~~.

6) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

7) չի կատարել սույն օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված պարտականությունները.

8) հրաժարվել է մասնակցել Խորհրդի նախագահի ընտրության քվեարկությունը.

9) մահացել է:

Հոդված 26. Խորհրդի նախագահը

2. Խորհրդի նախագահի ընտրությունը կատարվում է հետեւյալ կարգով.

1) Խորհուրդը իր կազմից, գաղտնի քվեարկությամբ ընտրում է Խորհրդի նախագահ 4 տարի ժամկետով.

2) Խորհրդի նախագահ չի կարող ընտրվել Խորհրդի անդամի թափուր պաշտոն լինելու դեպքում: Խորհրդի անդամը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվել Խորհրդի նախագահ.

3) Խորհրդի նախագահի ընտրության ընթացակարգը սահմանվում է կարգավորող պետական մարմնի որոշմամբ.

4) երեք անգամ անընդմեջ Խորհրդի նախագահ չընտրելու դեպքում Խորհուրդն արձակվում է.

5) արձակված խորհուրդը շարունակում է իր գործունեությունը մինչեւ նոր Խորհրդի ամբողջական ձեւավորումը:

2. Խորհրդի նախագահը՝

1) կազմակերպում է Խորհրդի եւ նրա աշխատակազմի գործունեությունը.

2) գումարում է Խորհրդի նիստերը եւ նախագահում է դրանք, ստորագրում է Խորհրդի ընդունած որոշումները եւ նիստերի արձանագրությունները, բացառությամբ խորհրդի նախագահին պաշտոնանկ անելու մասին արձանագրությունը եւ որոշումը, որոնք ստորագրում է խորհրդի ավագ անդամը.

3) վերահսկում է Խորհրդի որոշումների կատարումը.

4) ընդունում եւ ազատում է Խորհրդի աշխատակազմի աշխատողներին.

5) համակարգում եւ ապահովում է Խորհրդի բնականոն աշխատանքը:

6) Հայաստանի Հանրապետությունում, օտարերկրյա պետություններում եւ միջազգային կազմակերպություններում ներկայացնում է Խորհուրդը.

7) իր իրավասության սահմաններում առանց լիազորագրի հանդես է գալիս Խորհրդի անունից եւ ներկայացնում են նրանց շահերը.

3. Խորհրդի նախագահի բացակայության կամ պաշտոնեական պարտականությունները կատարելու անհնարինության դեպքում նրան փոխարինում է Խորհրդի նախագահի կողմից որպես փոխարինող նշանակված Խորհրդի անդամը, իսկ եթե Խորհրդի նախագահը փոխարինող չի նշանակել, ապա Խորհրդի տարիքով ավագ անդամը:

Հոդված 27. Խորհրդի իրավասությունները

1. Խորհուրդը՝

1) սահմանում է հանրային Հեռարձակողի տեսալսողական հաղորդումների ընդհանուր ծավալը եւ տեսալսողական ծրագրերի թիվը~~:, որը չի կարող պակաս լինել~~

~~երեքից՝ երկու տեսալսողական եւ մեկ լսողական ծրագիր, առնվազն մեկ տեսալսողականը եւ մեկ լսողականը՝ ընդհանուր, մյուսը՝ կրթական-մշակութային ուղղվածության:~~

2) սահմանում է Հանրային հեռարձակողի ֆինանսական միջոցների օգտագործման կարգը եւ ուղղությունները.

3) հաստատում է Հանրային հեռարձակողի աշխատողների հաստիքացուցակը, պաշտոնները, նրանց հետ կնքվող պայմանագրերի ձեւերը, պայմանները եւ վարձատրման կարգը.

4) սահմանում է Հանրային հեռարձակողի այն պաշտոնների ցանկը, որոնք զբաղեցնողներն իրավունք չունեն աշխատելու այլ Հեռարձակողներում կամ զանգվածային լրատվության այլ միջոցներում.

5) սահմանում է Հանրային հեռարձակողի գործադիր տնօրենների թափուր տեղերի համալրման համար մրցույթի անցկացման կարգը.

6) նշանակում է Հանրային հեռարձակողների՝ մրցույթում հաղթող ճանաչված գործադիր տնօրեններին ~~մինչեւ 5 տարի ժամկետով~~.

7) Հանրային հեռարձակողների գործադիր տնօրենների ներկայացմամբ նշանակում և ազատում է գործադիր տնօրենների տեղակալներին.

8) յուրաքանչյուր տարի մինչեւ հունվարի 20-ը լսում է Հանրային հեռարձակողների նախորդ տարվա գործունեության մասին գործադիր տնօրենների հաշվետվությունները.

9) Հանրային հեռարձակողների տնօրենների ներկայացմամբ պարբերաբար հաստատում է ծրագրային քաղաքականությունը.

10) հաստատում է իր կանոնադրությունը եւ Հանրային հեռարձակողի կառուցվածքը.

11) հաստատում է Խորհրդի աշխատակազմի կառուցվածքը եւ հաստիքացուցակը.

12) հաստատում է Հանրային հեռարձակողի լրագրողների մասնագիտական վարքագծի կանոնները.

13) ստացված բողոքների հիման վրա կամ իր նախաձեռնությամբ ուսումնասիրում է լրագրողների մասնագիտական վարքագծի կանոնների խախտման դեպքերը եւ ընդունում է խորհրդատվական բնույթի եզրակացություն.

14) առնվազն տարին ~~երկու~~ մեկ անգամ կազմակերպում է Հանրային հեռարձակողների գործունեության վերաբերյալ հասարակական կարծիքի ուսումնասիրություններ ու հրապարակում դրանց արդյունքները.

15) իրականացնում է «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքով իրեն վերապահված այլ իրավասություններ.

16) Հանրային հեռարձակողի կողմից տեղեկատվական, կրթական, մշակութային եւ ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանության ապահովման վիճակի վերաբերյալ հաշվետվություն է ներկայացնում կարգավորող պետական մարմին.

17 հայտարարում է Հանրային հեռարձակողի ֆինանսատնտեսական գործունեության անկախ աուդիտ անցկացնելու վերաբերյալ մրցույթ.

18) գործադիր տնօրենների եւ նրանց տեղակալների նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ եւ նշանակում կարգապահական տույժեր.

19) անդամների ձայների մեծամասությամբ, փակ գաղտնի քվեարկությամբ, երկշաբաթյա ժամկետում որոշում է կայացնում խորհրդի նախագահին պաշտոնանկ անելու վերաբերյալ Հանրային հեռարձակողների հիմնադրի միջնորդությունը բավարարելու կամ մերժելու մասին:

2. Խորհրդի որոշումները պետք է լինեն պատճառաբանված:

3. Խորհրդի որոշումներն իրենց իրավասության շրջանակներում կատարում են Հանրային հեռարձակողների գործադիր տնօրենները:

4. Խորհուրդն իր աշխատանքները կազմակերպում է աշխատակազմի միջոցով: Խորհրդի աշխատակազմը «Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմ» պետական հիմնարկն է:

Հոդված 28. Հանրային հեռարձակողների գործադիր տնօրենների իրավասությունները

1. Հանրային հեռարձակողների գործադիր տնօրենները՝

1) ղեկավարում են Հանրային հեռարձակողների ընթացիկ գործունեությունը.

2) Խորհրդի հաստատմանն են ներկայացնում ծրագրերի կառուցվածքը, դրանց առանձին բաժինների համամասնությունները, հաղորդացանցը.

3) ~~ընդունում~~ արձակում են հրամաններ.

4) կնքում են պայմանագրեր եւ վերահսկում դրանց կատարումը.

5) մասնակցում են Խորհրդի աշխատանքներին խորհրդակցական ձայնի իրավունքով.

6) Հայաստանի Հանրապետությունում, օտարերկրյա պետություններում եւ միջազգային կազմակերպություններում ներկայացնում են Հանրային հեռարձակողին.

7) իրենց իրավասության սահմաններում առանց լիազորագրի հանդես են գալիս Հանրային հեռարձակողի անունից եւ ներկայացնում են նրանց շահերը.

8) օրենքով, այլ իրավական ակտերով եւ Հանրային հեռարձակողների կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում են Հանրային հեռարձակողին պատկանող գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

9) տալիս են Հանրային հեռարձակողների անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

10) նշանակում եւ ազատում են Հանրային հեռարձակողների աշխատողներին, բացառությամբ գործադիր տնօրենների տեղակալներին, նրանց նկատմամբ կիրառում են խրախուսման միջոցներ եւ նշանակում կարգապահական տույժեր.

11) Խորհրդի հաստատմանն են ներկայացնում Հանրային հեռարձակողների տարեկան հաշվետվությունները.

12) ապահովում են աշխատողների մասնագիտական կատարելագործումը.

13) իրականացնում են օրենքով, իրավական այլ ակտերով եւ Հանրային հեռարձակողների կանոնադրությամբ նախատեսված այլ իրավասություններ:

2. Հանրային հեռարձակողների գործադիր տնօրենների բացակայության կամ պաշտոնեական պարտականությունները կատարելու անհնարինության դեպքերում նրանց փոխարինում եւ նրանց լիազորություններն իրականացնում են Հանրային հեռարձակողների գործադիր տնօրենների տեղակալները:

Հոդված 29. Հանրային հեռարձակողների ֆինանսավորումը

1. Խորհուրդը «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքով սահմանված կարգով առաջիկա տարվա բյուջետային գործընթացն սկսելու մասին վարչապետի որոշմամբ սահմանված ժամկետում յուրաքանչյուր տարի կազմում եւ պետական ֆինանսների կառավարման բնագավառում Հայաստանի Հանրապետության լիազորված պետական կառավարման համակարգի մարմին է ներկայացնում Հանրային հեռարձակողների առաջիկա տարվա բյուջետային ֆինանսավորման հայտերը՝ առանձին նշելով Խորհրդին, Հանրային հեռարձակողներին հատկացվելիք գումարները առաջիկա տարվա պետական բյուջեի նախագծում ներառելու համար:

2. Հանրային հեռարձակողների ֆինանսավորումը չի կարող պակաս լինել նախորդ տարվա բյուջետային ֆինանսավորման չափից: Հանրային

հեռարձակողների բյուջետային ֆինանսավորման չափը կարող է համամասնորեն փոփոխվել՝ կախված պետական բյուջեի համամասնության փոփոխության հետ:

3. Հանրային հեռարձակողների հաջորդ տարվա ծախսերի նախահաշիվը հաստատում է Խորհուրդը՝ Հանրային հեռարձակողների գործադիր տնօրենների ներկայացմամբ:

Հոդված 30. Հանրային հեռարձակողների տարեկան հաղորդումը

1. Խորհուրդը մինչեւ յուրաքանչյուր տարվա ապրիլի 1-ը ~~հրապարակում է Հանրային հեռարձակողների նախորդ տարվա գործունեության վերաբերյալ հաղորդում~~ Ազգային ժողով է ներկայացնում Հանրային հեռարձակողների նախորդ տարվա գործունեության (ներառյալ՝ ծրագրային և ֆինանսական), ինչպես նաև սույն օրենքի 22-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված դրույթների կատարման վերաբերյալ հաղորդում:

2. Հանրային հեռարձակողների նախորդ տարվա գործունեության վերաբերյալ հաղորդումը հրապարակվում է ~~զանգվածային լրատվության միջոցներում, ինչպես նաեւ տեղադրվում է~~ Խորհրդի պաշտոնական կայքում:

Գ Լ Ո Ւ Խ 6
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆԸ

Հոդված 31. Կարգավորող պետական մարմինը

1. Կարգավորող պետական մարմինը Հեռուստատեսության եւ ռադիոյի հանձնաժողովն է:

2. Կարգավորող պետական մարմինն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանով եւ իր անվանմամբ կնիք, դրոշմակնիք, ձեւաթուղթ եւ անհատականացման այլ միջոցներ:

3. Կարգավորող պետական մարմինն օրենքով իրեն վերապահված իրավասության շրջանակներում կամ հատուկ լիազորությունների առկայության դեպքում ներկայացնում է Հայաստանի Հանրապետությունն այլ պետություններում եւ միջազգային կազմակերպություններում: Կարգավորող պետական մարմինը կարող է համագործակցել այլ պետությունների համապատասխան կառույցների եւ միջազգային կազմակերպությունների հետ:

4. Կարգավորող պետական մարմնի նստավայրը Երեւան քաղաքն է: Իր որոշմամբ կարգավորող պետական մարմինը կարող է արտագնա նիստեր գումարել նաեւ այլ համայնքներում:

Հոդված 32. Կարգավորող պետական մարմնի լիազորությունները

1. Կարգավորող պետական մարմինը՝

1) հրապարակային եւ մրցութային կարգով հատկացնում է սլոթ.

2) իրականացնում է ~~Հեռարձակողների~~ իրավաբանական կամ ֆիզիկական անձի հեղինակազորումը.

3) իրականացնում է սլոթի օգտագործման լիցենզավորման մրցույթը.

4) իրականացնում է ցանցային օպերատորի գործունեության լիցենզավորումը.

5) իրականացնում է մասնավոր մուլտիպլեքս օպերատորի գործունեության լիցենզավորման մրցույթը.

6) սահմանում է սլոթի օգտագործման, մուլտիպլեքս օպերատորի գործունեության լիցենզավորման մրցույթի անցկացման կարգը, մրցույթի

մասնակցության հայտերի ձեւերը, ցանցային օպերատորի գործունեության լիցենզավորման կարգը եւ դիմումի ձեւը.

7) հաստատում է լիցենզիայի ձեւերը.

8) կազմում եւ հրապարակում է լիցենզիա ստացած անձանց ցուցակը, հսկողություն է իրականացնում լիցենզիայում նշված պայմանների եւ սույն օրենքի պահանջների կատարման նկատմամբ.

9) տեսալսողական հաղորդումների տեսագրությունների եւ ձայնագրությունների ընտրանքային դիտարկման միջոցով պարզում է դրանց համապատասխանությունը օրենսդրության եւ լիցենզիայի պահանջներին.

10) վերահսկում է տեսալսողական հաղորդումների տեխնիկական չափանիշների համապատասխանությունը Կառավարության որոշմամբ սահմանված ստանդարտներին.

11) սույն օրենքի խախտման կամ իր որոշումները չկատարելու դեպքում կիրառում է պատասխանատվության միջոցներ.

12) վերահսկում է Հեռարձակողների կողմից նախընտրական քարոզչության Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված կարգի պահպանումը.

13) ուսումնասիրում եւ պատասխանում կամ եզրակացություն է տալիս Հեռարձակողների, օպերատորների եւ տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորների գործունեության վերաբերյալ բողոքներին, առաջարկություններին եւ հարցումներին.

14) իրականացնում է Հեռարձակողների եւ օպերատորների գործունեության մշտադիտարկում.

15) կարող է ներգրավվել տեսալսողական մեդիայի բնագավառին առնչվող միջազգային պայմանագրերի եւ իրավական ակտերի նախագծերի մշակմանը.

16) «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» օրենքով սահմանված կարգով եւ դեպքերում իրականացնում է ստուգումներ եւ ուսումնասիրություններ.

17) ~~ուսումնասիրություն~~ վերահսկողություն է իրականացնում Հանրային հեռարձակողներում տեղեկատվական, կրթական, մշակութային եւ ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանության ապահովման վերաբերյալ.

18) սահմանում է Խորհրդի կողմից սույն օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով նախատեսված հաշվետվության ներկայացման կարգը եւ ձեւը.

19) սահմանում է ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ վարչապետին կամ արտակարգ դրության ընթացքում ի պաշտոնե արտակարգ դրության տարածքի պարետ հանդիսացող ~~փոխվարչապետին~~ պաշտոնյային եթերաժամանակ հատկացնելու կարգը եւ պայմանները.

~~20) սահմանում է Հանրային հեռարձակողներով Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների կյանքի, մշակույթի, այդ թվում՝ իրենց լեզուների մասին տեսալսողական հաղորդումների հեռարձակման համար տրամադրվող եթերային ժամանակի նվազագույն ժամաքանակները.~~

20) սահմանում է մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրության ձեւը.

21) օրենքով սահմանված կարգով հաստատում է իր կառուցվածքը.

22) տալիս է եզրակացություն սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ.

23) մասնակցում է տեսալսողական մեդիա ոլորտի քաղաքականության մշակմանը.

24) սահմանում է հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման պայմանները եւ հրապարակում է ազատ սլոթերի առկայության վերաբերյալ տեղեկատվություն.

25) ստուգում է հեռարձակողի կողմից սլոթի օգտագործման լիցենզավորման հայտին կցված լիցենզիայի պայմանների համապատասխանությունը.

26) իրականացնում է սույն օրենքով նախատեսված այլ լիազորություններ

2. Կարգավորող պետական մարմինը սույն օրենքով սահմանված սուբյեկտներից, պետական մարմին

ներից եւ պաշտոնատար անձանցից պահանջում եւ ստանում է անհրաժեշտ փաստաթղթեր եւ այլ տեղեկատվություն:

3. Տեսալսողական մեդիայի մասին օրենսդրության պահանջների խախտում հայտնաբերելու դեպքում կարգավորող պետական մարմինն իրավասու է Հանրային հեռարձակողներին հանձնարարելու սահմանված ժամկետում վերացնել հայտնաբերված թերությունները:

4. Կարգավորող պետական մարմինը իրավասու է՝

1) սույն օրենքի տուգանք նախատեսող հոդվածով արգելված արարք հայտնաբերելու դեպքում միջնորդություն ներկայացնել Խորհրդին Հանրային հեռարձակողի գործադիր տնօրենին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ.

2) լիցենզիայի գործողության կասեցում կամ դադարեցում նախատեսող հոդվածներով արգելված արարքները կատարելու, ինչպես նաեւ սահմանված ժամկետում թերությունները չվերացնելու դեպքում կարգավորող պետական մարմինը իրավասու է միջնորդություն ներկայացնել Խորհրդին՝ Հանրային հեռարձակողի գործադիր տնօրենի պաշտոնավարումը դադարեցնելու վերաբերյալ:

5. Կարգավորող պետական մարմինը Հեռարձակողի հեղինակազրման կամ լիցենզիայի գործողությունը կասեցնելու կամ դադարեցնելու դեպքում՝ եռօրյա ժամկետում այդ մասին հայտնում է այդ ծրագիրը հեռարձակող մուլտիպլեքս օպերատորին՝ հեռարձակումը անհապաղ դադարեցնելու համար:

6. Կարգավորող պետական մարմինն իր լիազորություններն իրականացնելիս կարող է հասարակական կամ պայմանագրային հիմունքներով ներգրավել մասնագետների եւ փորձագետների:

7. Կարգավորող պետական մարմինն ընդունում է սույն օրենքով նախատեսված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական, անհատական եւ ներքին ակտեր:

8. Կարգավորող պետական մարմնի ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը հրապարակվում են նաեւ կարգավորող պետական մարմնի պաշտոնական կայքում:

9. Կարգավորող պետական մարմինը, կարգավորող պետական մարմնի անդամները եւ կարգավորող պետական մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների աշխատակիցներն իրենց լիազորություններն իրականացնելիս անկախ են եւ ենթարկվում են միայն օրենքին: Չի թույլատրվում անօրինական ազդեցություն եւ միջամտություն նրանց գործունեությանը:

Հոդված 33. Կարգավորող պետական մարմնի գործունեության սկզբունքները

Կարգավորող պետական մարմինն իր գործունեությունն իրականացնում է օրինականության, ժողովրդավարության, հավասարության, անաչառության, ինքնուրույնության, կոլեգիալության եւ հրապարակայնության սկզբունքների հիման վրա:

Հոդված 34. Կարգավորող պետական մարմնի անդամների թեկնածուներին եւ անդամներին ներկայացվող պահանջները եւ նրանց վարձատրության կարգը

1. Կարգավորող պետական մարմնի անդամի թեկնածու կարող է լինել քսանհինգ տարին լրացած, վերջին չորս տարում միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, վերջին չորս տարում Հայաստանի Հանրապետությունում

մշտապես բնակվող, ընտրական իրավունք ունեցող եւ հայերենին տիրապետող յուրաքանչյուր ոք, որն ունի ~~լրագրության,~~ հեռարձակման, տնտեսության, կառավարման, ճարտարագիտության, մշակույթի, արվեստի կամ իրավագիտության առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային փորձառություն, բարձրագույն կրթություն, հանդիսանում է զանգվածային լրատվության բնագավառում հեղինակավոր մասնագետ:

2. Կարգավորող պետական մարմնի անդամ չի կարող լինել՝

1) անձը, որը դատապարտվել է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի հիման վրա, եւ դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ.

2) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված անձը.

3. Կարգավորող պետական մարմնի անդամներն իրենց լիազորությունների իրականացման ժամանակահատվածում չեն կարող լինել որեւէ կուսակցության անդամ կամ որեւէ այլ կերպ զբաղվել քաղաքական գործունեությամբ: Հրապարակային ելույթներում նրանք պետք է ցուցաբերեն քաղաքական զսպվածություն:

4. Կարգավորող պետական մարմնի անդամները չեն կարող զբաղեցնել իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում, որեւէ պաշտոն՝ առեւտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական եւ ստեղծագործական աշխատանքից: Կարգավորող պետական մարմնի անդամի պարտականությունները գերակա են նրա կողմից իրականացվող այլ գործունեության նկատմամբ:

5. Կարգավորող պետական մարմնի անդամի լիազորությունները ստանձնելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, կարգավորող պետական մարմնի անդամը պարտավոր է՝

1) դադարեցնել ձեռնարկատիրական կամ քաղաքական գործունեությամբ զբաղվելը.

2) ազատվել պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում, ինչպես նաեւ առեւտրային կազմակերպություններում զբաղեցրած պաշտոններից.

3) ազատվել վճարովի հիմունքներով աշխատանքից, բացառությամբ գիտական, կրթական կամ ստեղծագործական աշխատանքի:

6. Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ իր պաշտոնն ստանձնելիս տալիս է հետեւյալ երդումը.

«Ստանձնելով կարգավորող պետական մարմնի անդամի պարտականությունները՝ երդվում եմ, հավատարիմ լինելով Սահմանադրությանը եւ օրենքներին, պաշտպանել մարդու իրավունքները եւ հիմնարար ազատությունները, աջակցել քաղաքացիական հասարակության ձեւավորմանը՝ կարծիքն ազատ արտահայտելու իրավունքի, տեղեկատվության ազատության եւ բազմակարծության ապահովման միջոցով:

Երդվում եմ, որ պարտականություններս կկատարեմ անաչառ, առավելագույն բարեխղճությամբ եւ ազնվությամբ, կգործեմ հրապարակայնության, անկողմնակալության եւ արդարության սկզբունքով՝ անկախ որեւէ քաղաքական կամ տնտեսական շահից:»:

7. Կարգավորող պետական մարմնի անդամների վարձատրության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքով:

Հոդված 35. Կարգավորող պետական մարմնի կազմավորման կարգը

1. Կարգավորող պետական մարմինը բաղկացած է յոթ անդամից: Կարգավորող պետական մարմնի անդամներին Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովի առաջարկությամբ ընտրում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով, վեց տարի ժամկետով՝ սեռային ներկայացվածությամբ:

2. Կարգավորող պետական մարմնի անդամի լիազորությունների ավարտման օրվանից ոչ շուտ, քան մեկ ամիս առաջ եւ ոչ ուշ, քան մեկ շաբաթ առաջ, իսկ այլ հիմքով թափուր տեղ առաջանալու դեպքում թափուր տեղն առաջանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, կարգավորող պետական մարմնի նախագահը, իսկ կարգավորող պետական մարմնի նախագահի թափուր տեղ առաջանալու դեպքում կարգավորող պետական մարմնի նախագահին փոխարինող անդամը այդ մասին գրավոր տեղեկացնում է Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովին:

3. Ազգային ժողովը կարգավորող պետական մարմնի անդամի ընտրությունը կատարում է Սահմանադրությամբ եւ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով սահմանված կարգով:

4. Կարգավորող պետական մարմինն իր կազմից ընտրում է կարգավորող պետական մարմնի նախագահ: Կարգավորող պետական մարմնի անդամը կարող է առաջադրվել որպես կարգավորող պետական մարմնի նախագահ ինքնաառաջադրման կամ կարգավորող պետական մարմնի որեւէ այլ անդամի կողմից իր համաձայնությամբ առաջադրվելու եղանակով:

5. Կարգավորող պետական մարմնի նախագահի ընտրության համար գաղտնի քվեարկում են կարգավորող պետական մարմնի բոլոր անդամները:

6. Քվեարկության համար կազմվում է քվեաթերթիկ, որում ներառվում են բոլոր թեկնածուները:

7. Քվեարկելիս կարգավորող պետական մարմնի անդամն ունի մեկ ձայն: Եթե քվեարկության մասնակիցն ավելի ձայն է տվել, ապա այդ քվեաթերթիկը համարվում է անվավեր:

8. Եթե քվեարկության արդյունքով որեւէ թեկնածու չի ստացել ձայների կեսից ավելին, ապա ինքնաառաջադրվում են առավել ձայներ ստացած երկու թեկնածուները եւ անցկացվում է լրացուցիչ քվեարկություն:

9. Եթե երկրորդ առավել ձայներ ստացած թեկնածուները երկուսն են, ապա հավելյալ քվեարկությամբ որոշվում է, թե նրանցից ով կարող է ինքնաառաջադրվել: ~~քվեարկությամբ ձայների հավասարության պատճառով հնարավոր չէ որոշել առավել ձայներ ստացած երկու թեկնածուներին, ապա նախապատվությունը տրվում է մասնագիտական աշխատանքի առավել երկար փորձառություն ունեցող թեկնածուին, իսկ փորձառության հավասարության դեպքում՝ տարիքով ավագին:~~

10. Լրացուցիչ քվեարկության ժամանակ կարգավորող պետական մարմնի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայն: Լրացուցիչ քվեարկության ժամանակ ձայների թվի կեսից ավելին ստացած թեկնածուն համարվում է ընտրված: Եթե ոչ մեկը չի ստացել քվեարկության մասնակիցների առնվազն կեսից ավելի «կողմ» ձայներ, ապա անցկացվում է նոր ընտրություն:

11. Կարգավորող պետական մարմնի նախագահն ընտրվում է կարգավորող պետական մարմնի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Կարգավորող պետական մարմնի անդամն իրավունք չունի հրաժարվելու քվեարկությունից եւ քվեարկում է միայն «կողմ» կամ «դեմ»:

12. Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվել կարգավորող պետական մարմնի անդամ, ներառյալ՝ նախագահ:

13. Կարգավորող պետական մարմնի նախագահն ընտրվում է մինչեւ որպես կարգավորող պետական մարմնի անդամ իր պաշտոնավարման ժամկետի ավարտը:

14. Կարգավորող պետական մարմնի նոր նախագահի ընտրությունը կատարվում է Կարգավորող պետական մարմնի անդամների կազմը համալրվելուց հետո՝ տասնօրյա ժամկետում:

Հոդված 36. Կարգավորող պետական մարմնի նախագահը

1. Կարգավորող պետական մարմնի նախագահը՝

1) ապահովում է կարգավորող պետական մարմնի բնականոն գործունեության կազմակերպումը.

2) ներկայացնում է կարգավորող պետական մարմինն այլ մարմինների հետ հարաբերություններում.

3) ձեւավորում է նիստերի օրակարգը, հրավիրում եւ վարում է կարգավորող պետական մարմնի նիստերը, ընդ որում՝ կարգավորող պետական մարմնի անդամը մասնակցում է նիստերի օրակարգի ձեւավորմանը օրակարգի վերաբերյալ կարգավորող պետական մարմնի նախագահին առաջարկություններ ներկայացնելու միջոցով.

4) ստորագրում եւ հրապարակում է կարգավորող պետական մարմնի որոշումները, արձակում է հրամաններ.

5) վերահսկում է կարգավորող պետական մարմնի ընդունած որոշումների կատարումը.

6) կարգավորող պետական մարմնի նախորդ տարվա գործունեության մասին հաղորդումը ներկայացնում է Ազգային ժողով.

7) իրականացնում է կարգավորող պետական մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների ընդհանուր ղեկավարումը.

8) կարգավորող պետական մարմնի հաստատմանն է ներկայացնում կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրության նախագիծը, կառուցվածքը եւ հաստիքացուցակը.

9) օրենքով սահմանված կարգով նշանակում եւ ազատում է կարգավորող պետական մարմնի աշխատակիցներին:

2. Արձակուրդի կամ գործուղման կամ ժամանակավոր անաշխատունակության դեպքում կարգավորող պետական մարմնի նախագահի լիազորությունները ժամանակավորապես կատարում է նրա նշանակած կարգավորող պետական մարմնի անդամը:

3. Կարգավորող պետական մարմնի նախագահի կողմից արձակուրդի կամ գործուղման մեջ գտնվելու դեպքում իրեն փոխարինող չնշանակելու, ժամանակավոր անաշխատունակության, լիազորությունների դադարման կամ դադարեցման դեպքերում կարգավորող պետական մարմնի նախագահի պարտականությունները կատարում է կարգավորող պետական մարմնի տարիքով ավագ անդամը:

Հոդված 37. Կարգավորող պետական մարմնի անդամի լիազորությունների դադարումը եւ դադարեցումը

1. Կարգավորող պետական մարմնի անդամը չի կարող նախքան պաշտոնավարության ժամկետը լրանալը հետ կանչվել իր պաշտոնից:

2. կարգավորող պետական մարմնի անդամի լիազորությունները դադարեցվում են՝

1) անհամատեղելիության պահանջները խախտելու դեպքում.

3) ժամանակավոր անաշխատունակության հետեւանքով ավելի քան 4 ամիս անընդմեջ կամ ավելի քան 6 ամիս օրացուցային տարվա ընթացքում իր պաշտոնական պարտականությունները կատարելու անհնարինության, բացառությամբ մայրության, երեխայի ծննդյան կամ երեխայի որդեգրման դեպքում

արձակուրդում լինելու հետ կապված պատճառներով, կամ ընտրվելուց հետո իր պաշտոնում նշանակվելուն խոչընդոտող ֆիզիկական արատ կամ հիվանդություն ձեռք բերելու դեպքում.

4) տարվա ընթացքում կարգավորող պետական մարմնի նիստերին անհարգելի պատճառով առնվազն երկու անգամ չմասնակցելու դեպքում.

5) մեկ անգամ քվեարկությունից հրաժարվելու կամ ձեռնպահ մնալու դեպքում, բացառությամբ սույն օրենքով նախատեսված՝ քվեարկությանը մասնակցությունը բացառող դեպքերի.

6) մեկ անգամ կարգավորող պետական մարմնի նիստին իր մասնակցությունը բացառող հանգամանքների մասին չհայտնելու դեպքում:

3. Կարգավորող պետական մարմնի անդամի լիազորությունների դադարման դեպքերն են՝

1) լիազորությունների ժամկետն ավարտվելը.

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կորցնելը կամ այլ պետության քաղաքացիություն ձեռք բերելը.

3) նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելը.

4) նրան անգործունակ, սահմանափակ գործունակ, անհայտ բացակայող կամ մահացած ճանաչելու վերաբերյալ դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելը.

5) նրա հրաժարականը.

6) նրա մահը:

4. Կարգավորող պետական մարմնի անդամի լիազորությունները սույն օրենքով սահմանված դեպքերում դադարեցնում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով:

5. Սույն հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետի հիմքով կարգավորող պետական մարմնի անդամի լիազորությունները դադարում են այդ հարցի համար հրավիրված նիստում կարգավորող պետական մարմնի անդամի կողմից իր հրաժարականը պնդելու կամ այդ նիստին չներկայանալու օրվանից:

6. Սույն հոդվածի 3-րդ մասի 6-րդ կետի հիմքով կարգավորող պետական մարմնի անդամի լիազորությունները դադարում են նրա մահվան օրը:

7. Սույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հիմքով կարգավորող պետական մարմնի անդամի լիազորությունները դադարում են նրա լիազորությունները դադարելու օրը:

8. Սույն հոդվածի 3-րդ մասի 5-րդ եւ 6-րդ կետերով նախատեսված հիմքերով կարգավորող պետական մարմնի անդամի լիազորությունները դադարելու դեպքում կարգավորող պետական մարմնի նախագահը անհապաղ հայտարարություն է տարածում կարգավորող պետական մարմնի պաշտոնական կայքում:

9. Սույն հոդվածի 3-րդ մասի 2-4-րդ կետերում նշված հիմքերով կարգավորող պետական մարմնի անդամի լիազորությունները դադարում են համապատասխան հիմքի առկայությունն արձանագրող կարգավորող պետական մարմնի որոշման ընդունման օրվանից:

Հոդված 38. Կարգավորող պետական մարմնի ծախսերի ֆինանսավորումը

1. Կարգավորող պետական մարմնի գործունեությունը ֆինանսավորվում է պետական բյուջեից:

2. Կարգավորող պետական մարմինը «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքով սահմանված կարգով առաջիկա տարվա բյուջետային գործընթացն սկսելու մասին վարչապետի որոշմամբ սահմանված ժամկետում յուրաքանչյուր տարի կազմում եւ Կառավարություն է ներկայացնում կարգավորող պետական մարմնի առաջիկա տարվա բյուջետային ֆինանսավորման հայտը (ծախսերի նախահաշիվը)՝ առաջիկա տարվա պետական բյուջեի նախագծում ներառելու համար: Ծախսերի նախահաշվին ավելացվում է այն

ներկայացնելու պահին նախորդող տասներկու ամսվա ընթացքում գանձված տուգանքների, պետական տուրքերի եւ տույժերի 30 տոկոսը՝ սեփական տնօրինման նպատակով:

3. Կարգավորող պետական մարմնի բյուջետային ֆինանսավորման հայտը Կառավարության կողմից ընդունվելու դեպքում՝ անփոփոխ, իսկ առարկությունների դեպքում՝ փոփոխված, ընդգրկվում է պետական բյուջեի նախագծում: Կառավարությունը կարգավորող պետական մարմնի բյուջետային ֆինանսավորման հայտը պետական բյուջեի նախագծի հետ ներկայացնում է Ազգային ժողով: Կառավարությունը Ազգային ժողով է ներկայացնում նաեւ բյուջետային հայտի փոփոխությունների վերաբերյալ իր հիմնավորումը եւ առկայության պարագայում հիմնավորման վերաբերյալ կարգավորող պետական մարմնի առարկությունները:

4. Կարգավորող պետական մարմնի ծախսերի նախահաշիվը պետք է ապահովի սույն օրենքով սահմանված խնդիրների եւ գործառույթների պատշաճ իրականացման հնարավորությունը, այդ թվում՝ միջազգային կազմակերպություններում ներկայացուցչության ապահովումը, ինչպես նաեւ կարգավորող պետական մարմնի անդամների աշխատավարձի վճարումը:

Հոդված 39. Կարգավորող պետական մարմնի տարեկան հաղորդումը

1. Կարգավորող պետական մարմինը մինչեւ յուրաքանչյուր տարվա ապրիլի 1-ը Ազգային ժողով է ներկայացնում իր նախորդ տարվա գործունեության եւ Հեռարձակողների ծրագրերում տեղեկատվության ազատության վիճակի մասին տարեկան հաղորդում:

2. Հաղորդումը ներառում է կարգավորող պետական մարմնի գործունեությանը եւ լիազորություններին համապատասխան իրականացված բոլոր բաղադրիչների վերաբերյալ ամբողջական տեղեկություններ եւ վիճակագրական տվյալներ (ներառյալ՝ հեղինակազորման, հայտարարված մրցույթների, տրված լիցենզիաների, ցանցային օպերատորների գործունեության լիցենզավորման համար ներկայացված ու մերժված դիմումների եւ դրանց հիմնավորման, տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորների կողմից ներկայացված տեսալսողական ծրագրերի, բացահայտված խախտումների եւ դրանց նկատմամբ կիրառված պատժամիջոցների եւ այլ լիազորությունների իրականացման մասին):

3. Հաղորդումը Ազգային ժողով է ներկայացնում կարգավորող պետական մարմնի նախագահը:

4. Հաղորդումն Ազգային ժողովում քննարկվում է «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով սահմանված կարգով:

5. Կարգավորող պետական մարմինն իր հաղորդումը հրապարակում է կարգավորող պետական մարմնի պաշտոնական կայքում:

Հոդված 40. Կարգավորող պետական մարմնի գործունեության կարգը

1. Կարգավորող պետական մարմինն իր գործունեությունը կազմակերպում է նիստերի եւ աշխատանքային քննարկումների միջոցով:

2. Կարգավորող պետական մարմնի նիստերը հրավիրում է կարգավորող պետական մարմնի նախագահը՝ իր նախաձեռնությամբ կամ առնվազն երեք անդամի պահանջով:

3. Կարգավորող պետական մարմնի նիստերը դռնբաց են, բացառությամբ օրենքով պահպանվող գաղտնիք պարունակող տեղեկատվության վերաբերյալ հարցերի քննարկման դեպքերի, երբ դրանք կարգավորող պետական մարմնի նիստին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ անցկացվում են դռնփակ:

4. Կարգավորող պետական մարմինն իր կայքում հրապարակում է նիստերի անցկացման տեղը, ժամանակաթիվը եւ օրակարգը:

5. Կարգավորող պետական մարմնի գլխավոր քարտուղարը նիստին կարող է մասնակցել խորհրդակցական ձայնի իրավունքով:

6. Կարգավորող պետական մարմնի նիստը վարում է կարգավորող պետական մարմնի նախագահը կամ նրան փոխարինող անձը: Նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա է կարգավորող պետական մարմնի անդամների կեսից ավելին:

7. Կարգավորող պետական մարմնի որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

8. Կարգավորող պետական մարմնի նիստում քննարկվող որեւէ հարցի վերաբերյալ շահերի բախում ունեցող կարգավորող պետական մարմնի անդամը պարտավոր է քննարկումից առաջ կարգավորող պետական մարմնի նախագահին եւ մյուս անդամներին տեղեկացնել շահերի բախման փաստի եւ բնույթի մասին, որը պետք է արձանագրվի նիստի արձանագրության մեջ:

9. Այդ տեղեկացումից հետո կարգավորող պետական մարմնի համապատասխան անդամը՝

1) պարտավոր է հրաժարվել տվյալ հարցի վերաբերյալ դիրքորոշում հայտնելուց եւ քվեարկությանը մասնակցելուց.

2) չպետք է հաշվառվի այդ նիստի իրավազորության ապահովման նպատակով:

10. Կարգավորող պետական մարմնի նիստը հետաձգվում է՝

1) քվորում չլինելու,

2) աշխատանքային օրն ավարտվելու,

3) հարցի քննությունը տվյալ նիստում անհնարին դարձնող այլ բացառիկ հանգամանքների առկայության դեպքերում:

11. Կարգավորող պետական մարմնի նիստերն արձանագրում է կարգավորող պետական մարմնի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումը: Նիստերի արձանագրություններն ստորագրում է նիստը նախագահողը: Նիստի արձանագրությունը կամ դրա մի մասը կարգավորող պետական մարմնի նախագահի հանձնարարությամբ կարող է հրապարակվել: Կարգավորող պետական մարմնի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումը վարում է կարգավորող պետական մարմնի որոշումների գրանցամատյան:

12. Կարգավորող պետական մարմինն ընդունում է աշխատակարգ, որով սահմանվում են կարգավորող պետական մարմնի լիազորությունների իրականացման ընթացակարգերը:

Հոդված 41. Կարգավորող պետական մարմնի կառուցվածքային ստորաբաժանումները

1. Կարգավորող պետական մարմինն իր աշխատանքները կազմակերպում է կառուցվածքային ստորաբաժանումների միջոցով:

2. Կարգավորող պետական մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների աշխատակիցների վարձատրությունն իրականացվում է «Պետական պաշտոններ եւ պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքին համապատասխան:

Հոդված 42. Հեռարձակողների եւ օպերատորների գործունեության մշտադիտարկումը

1. Հեռարձակողների գործունեության մշտադիտարկումն իրականացվում է ուղղակի դիտարկման, իսկ օպերատորի դեպքում նաեւ տեղում դիտարկում իրականացնելու միջոցով: Ուղղակի դիտարկման արդյունքները կարող են

համադրվել տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանների տվյալների հետ:

2. Հանրային հեռարձակողների գործունեության մշտադիտարկումը ներառում է նաեւ տեղեկատվական, կրթական, մշակութային եւ ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանության ապահովման վերաբերյալ ուսումնասիրությունը, որն իրականացվում է սույն հոդվածի 1-ին մասով սահմանված եղանակներով:

3. Տեսալսողական մեդիայի մասին օրենդրության պահանջների խախտման վերաբերյալ տեղեկությունների տիրապետելու դեպքում օպերատորի գործունեության տեղում դիտարկումն իրականացվում է կարգավորող պետական մարմնի նախագահի հրամանի հիման վրա:

4. Տեղում դիտարկում իրականացնելու մասին հրամանում նշվում են՝

1) տեղում դիտարկում իրականացնող մարմնի անվանումը.

2) օպերատորի անվանումը եւ գտնվելու վայրը,

3) տեղում դիտարկում իրականացնող անձի անունը, ազգանունը եւ պաշտոնը.

4) տեղում դիտարկում իրականացնելու նպատակը, ժամանակահատվածը եւ իրավական հիմքերը.

5) Տեսալսողական մեդիայի մասին օրենդրության պահանջների խախտման նկարագրությունը:

5. Օպերատորի մոտ տեղում դիտարկումը սկսելուց առաջ հրամանի մեկ օրինակը հանձնվում է օպերատորի ղեկավարին կամ ղեկավարին փոխարինելու իրավունք ունեցող անձի:

6. Եթե սույն հոդվածի 5-րդ մասում նշված իրավասու անձինք օպերատորի գործունեության վայրում չեն կամ հրաժարվում են ստանալ տեղում դիտարկում իրականացնելու վերաբերյալ հրամանը եւ ստորագրությամբ հավաստել այն ստանալու փաստը, ապա անմիջապես կարող է իրականացվել դիտարկումը:

7. Օպերատորի մոտ տեղում դիտարկում իրականացնելու դեպքում վերջինս տեղում դիտարկում իրականացնող անձանց պետք է ապահովեն անհրաժեշտ աշխատանքային տարածքով եւ տեխնիկական միջոցներով:

8. Մշտադիտարկման արդյունքներով կարգավորող պետական մարմնի ներկայացուցիչը կազմում է մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրություն:

9. Մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրության մեջ նշվում են մշտադիտարկման արդյունքների համառոտ շարադրանքը, ինչպես նաեւ վարչական վարույթ հարուցելու կամ հարուցված վարչական վարույթի համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստական հանգամանքները, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները: Դիտարկման արդյունքների եւ տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանների տվյալների համադրման դեպքում մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրության մեջ նշվում են նաեւ դիտարկման արդյունքների եւ տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանների տվյալների միջեւ անհամապատասխանությունը, անհամապատասխանությունների քանակը եւ տեւողությունը:

10. Արձանագրությանը կցվում են մշտադիտարկման առարկային վերաբերող, իսկ օպերատորի մոտ տեղում դիտարկում իրականացնելու դեպքում՝ վերջիններիս տիրապետության տակ գտնվող ապացույցները, որի մասին նշում է կատարվում արձանագրության մեջ:

11. Մշտադիտարկման արդյունքների մասին արձանագրությունն ուղղակի դիտարկում իրականացնելու դեպքում ստորագրում է մշտադիտարկում իրականացրած անձը, իսկ օպերատորի մոտ տեղում դիտարկում իրականացնելու դեպքում՝ կարգավորող պետական մարմնի եւ օպերատորի ներկայացուցիչը:

12. Ուղղակի դիտարկման միջոցով իրականացված մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրությունը կազմելուց հետո՝ եռօրյա ժամկետում, ուղարկվում է Հեռարձակողին կամ օպերատորին:

13. Մշտադիտարկման արդյունքների մասին արձանագրության վերաբերյալ առարկություններ ունենալու դեպքում Հեռարձակողը կամ օպերատորը մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրությունը ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, կարող է դրանք ներկայացնել կարգավորող պետական մարմին:

14. Օպերատորի մոտ իրականացված տեղում դիտարկման արդյունքների մասին արձանագրության վերաբերյալ առարկություններ ունենալու դեպքում վերջիններիս ներկայացուցիչն այդ մասին նշում է կատարում արձանագրության մեջ եւ ստորագրում:

15. Եթե սույն հոդվածի 5-րդ մասում նշված անձը հրաժարվում է ստորագրել եւ ստանալ արձանագրության երկրորդ օրինակը կամ տեղում դիտարկման իրականացման վայրում չէ, ապա արձանագրության երկրորդ օրինակը փոստով առաքվում է:

16. Տեղում դիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրությունը օպերատորի ղեկավարին փոխարինելու իրավունք ունեցող անձի կողմից ստորագրվելու դեպքում դրա մասին համապատասխան նշում է կատարվում արձանագրության մեջ, եւ արձանագրությանը կցվում է այն իրավական փաստաթղթի պատճենը (կանոնադրություն, հրաման, որոշում, լիազորագիր կամ այլ փաստաթուղթ), որի հիման վրա տվյալ անձն իրավունք ունի փոխարինելու օպերատորի ղեկավարին:

17. Եթե օպերատորի ներկայացուցիչը հրաժարվում է արձանագրությունն ստորագրել կամ այլ կերպ խոչընդոտում է տեղում դիտարկման իրականացմանը, ապա կարգավորող պետական մարմնի ներկայացուցիչն այդ մասին նշում է կատարում արձանագրության մեջ, որում նշվում են նաեւ մշտադիտարկման իրականացմանը խոչընդոտած օպերատորի ներկայացուցչի անունը, ազգանունը եւ պաշտոնը:

18. Մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրությունը կարող է հիմք հանդիսանալ վարչական վարույթ հարուցելու համար, իսկ հարուցված վարչական վարույթի շրջանակներում ծառայել որպես վարչական վարույթի ապացույց:

19. Մշտադիտարկման իրականացման վերաբերյալ արձանագրության ձեւը հաստատում է կարգավորող պետական մարմինը:

Գ Լ Ո Ւ Խ 7

~~ՀԵՌԱՐՁԱԿՈՂՆԵՐԻ~~ ՀԵՂԻՆԱԿԱԶՈՐՈՒՄԸ, ~~ՀԱՆՐԱՅԻՆ~~ ՄՈՒԼՏԻՊԼԵՔՍԻ ՍԼՈԹԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՈՒՄԸ

Հոդված 43. Հեղինակազորումը

1. Իրավաբանական կամ ֆիզիկական անձը Հեռարձակողի կարգավիճակ ստանալու համար կարգավորող պետական մարմին է ներկայացնում հեղինակազորման հայտ, որում նշվում է՝

1) հայտատուի անվանումը.

2) իրավաբանական անձի գրանցման համարը, իսկ ֆիզիկական անձի համար՝ հաշվառման համարը.

3) իրավաբանական անձի գտնվելու վայրը, իսկ ֆիզիկական անձի համար՝ հաշվառման վայրը.

4) հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն.
5) տեսալսողական ծրագրի անվանումը.
6) հայտի ներկայացման ամիսը, ամսաթիվը, տարեթիվը.
7) հայտատուի ստորագրությունը:
2. Հեղինակազորման հայտը բավարարվում է կարգավորող պետական մարմին այն ներկայացնելուց հետո տասնօրյա ժամկետում:
3. Սույն հոդվածի 1-ին մասի 1-5-րդ կետերով նախատեսված որևէ պայմանի փոփոխության դեպքում Հեռարձակողը եռօրյա ժամկետում ներկայացնում է դրանք կարգավորող պետական մարմին:

Հոդված 44. Հանրային եւ մասնավոր մուլտիպլեքսում գործող Հեռարձակողները

1. Կարգավորող պետական մարմնի կողմից հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման մրցույթները հայտարարվում են սլոթի օգտագործման լիցենզիայի ժամկետը լրանալու, նոր կամ ազատ սլոթ առաջանալու դեպքում:
2. Հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզիա կարող են ստանալ միայն Հայաստանի Հանրապետությունում գործող Հեռարձակողները, եթե այլ բան նախատեսված չէ մինչև սույն դրույթի ուժի մեջ մտնելը կնքված միջազգային պայմանագրով: ~~Օտարերկրյա տեսալսողական ծրագրերը հանրային մուլտիպլեքսում առանց լիցենզիա կարող են վերահաղորդվել միայն միջպետական պայմանագրի հիման վրա:~~
3. ~~Հանրային հեռարձակողները ցանցային օպերատորներին անվճար տրամադրում են իրենց տեսալսողական ծրագրերը վերահաղորդման նպատակով: Ցանցային օպերատորները պարտավոր են տարածել իրենց տրամադրված տեսալսողական ծրագրերը:~~
Հանրային մուլտիպլեքսում ներառված բոլոր տեսալսողական ծրագրերը իրենց վերգետնյա հաճախականությունների սփռման տարածքներին համապատասխան տարածման իրավունքով անվճար տրամադրվում են ցանցային օպերատորներին: Ցանցային օպերատորները պարտավոր են տարածել իրենց՝ անվճար տարածման իրավունքով տրամադրված տեսալսողական ծրագրերը: Ընդ որում ծրագրերի հերթականությունը պետք է սկսվի Հանրային հեռարձակողների ծրագրերից:
4. Սլոթի օգտագործման լիցենզիայի ժամկետը լրանալու հիմքով մրցույթը հայտարարվում է այդ լիցենզիայի գործողության ժամկետը լրանալուց 4 ամիս առաջ:
5. Հանրային մուլտիպլեքսում ազատ սլոթ առաջանալու դեպքում կարգավորող պետական մարմինը հայտարարում է մրցույթ մեկամսյա ժամկետում:
6. Հանրային մուլտիպլեքս ցանցում նոր սլոթ առաջանալու դեպքում Կառավարության լիազոր մարմինը այդ մասին տեղեկացնում է կարգավորող պետական մարմնին, որը մեկամսյա ժամկետում հայտարարում է սլոթի օգտագործման լիցենզավորման մրցույթ:
7. Թեմատիկ ուղղվածության չափորոշիչները, դրանց հասկացությունները սահմանվում են կարգավորող պետական մարմնի որոշմամբ:
8. Թվային հեռարձակման տեխնիկական հնարավորություն առաջանալու դեպքում Լսողական ծրագրեր հեռարձակողները կարող են ներառվել մուլտիպլեքսում՝ իրենց լիցենզիայի պայմաններին համապատասխան:
9. Մասնավոր մուլտիպլեքսում գործող Հեռարձակողները տեսալսողական ծրագրերի հեռարձակումն իրականացնում են մասնավոր մուլտիպլեքս օպերատորի կողմից տրամադրված սլոթի միջոցով:

Հոդված 45. Լիցենզիան

1. Լիցենզիան կարգավորող պետական մարմնի կողմից տրամադրվող փաստաթուղթ է, որը թույլ է տալիս.

1) Հեռարձակողին տեսալսողական տեղեկատվության հեռարձակում իրականացնելու համար օգտագործել հանրային մուլտիպլեքսի սլոթ.

2) ֆիզիկական կամ իրավաբանական անձին իրականացնել մուլտիպլեքս օպերատորի գործունեություն.

3) ցանցային օպերատորին վերահաղորդել Հայաստանի Հանրապետությունում գործող Հեռարձակողների եւ օտարերկրյա հեռարձակողների տեսալսողական ծրագրերը, բացառությամբ սույն օրենքով եւ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

2. Լիցենզիան չի կարող փոխանցվել կամ օտարվել այլ անձի:

3. Առանց լիցենզիայի հանրային մուլտիպլեքսում տեսալսողական ծրագրերի հեռարձակում իրականացնում են Հանրային հեռարձակողները, բացառությամբ սույն օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ մասում նշված դեպքի եւ միջպետական պայմանագրի հիման վրա Հեռարձակողները:

4. Սլոթի օգտագործման լիցենզիան տրվում է յոթ տարի ժամկետով, մուլտիպլեքս օպերատորի գործունեության լիցենզիան՝ անժամկետ, իսկ ցանցային օպերատորի գործունեության լիցենզիան՝ տասը տարի ժամկետով՝ երկարաձգման հնարավորությամբ:

5. Լիցենզիայի վերաձեւակերպումը, գործողության ժամկետի երկարաձգումը եւ կրկնօրինակի տրամադրումը իրականացվում է «Լիցենզավորման մասին» օրենքով սահմանված հիմքերով եւ կարգով:

Հոդված 46. Հանրային մուլտիպլեքսի սլոթի օգտագործման լիցենզավորման մրցույթը

1. Սլոթի օգտագործման լիցենզավորման մրցույթի հայտարարությունը պետք է պարունակի տեղեկություններ հանրապետական, մայրաքաղաքային եւ մարզային սփռում ապահովող ազատ սլոթերի քանակի մասին:

2. Սլոթի օգտագործման լիցենզավորման մրցույթին մասնակցելու համար ներկայացվում է հայտ, որի ձեւը սահմանվում է սլոթի օգտագործման լիցենզավորման մրցույթի անցկացման կարգով:

3. Հայտին կցվում են.

1) փաստաթուղթ՝ Հեռարձակողի նախանշված նպատակների իրագործման հիմնական ուղղությունների եւ միջոցառումների ընդհանրական նկարագրի վերաբերյալ, որոնք լիցենզիա ստանալու դեպքում կհանդիսանան լիցենզիայի պայմաններ.

2) ֆինանսական աղբյուրները հիմնավորող փաստաթղթեր.

3) տվյալներ օգտագործվելիք տեխնիկական միջոցների վերաբերյալ.

4) տեղեկություններ աշխատակազմի քանակի, նրանց կրթության եւ մասնագիտության վերաբերյալ.

5) էթիկայի կանոնագիրը, որը լիցենզիա ստանալու դեպքում կհանդիսանա լիցենզիայի պայման.

6) էթիկայի կանոնագրի դրույթների ապահովման ինքնակարգավորման միջոցները, որը լիցենզիա ստանալու դեպքում կհանդիսանա լիցենզիայի պայման.

7) լիցենզավորման մրցույթին մասնակցելու համար «Պետական տուրքի մասին» օրենքով սահմանված պետական տուրքի վճարումը հավաստող անդորրագիրը:

4. Հանրապետական սփռում ապահովող սլոթերի օգտագործման լիցենզավորման մրցույթի հայտատուն ըստ ցանկության կարող է մասնակցել նաեւ մայրաքաղաքային սփռում ապահովող սլոթերի օգտագործման լիցենզավորման մրցույթին՝ այդ մասին նշում կատարելով հայտում:

5. Հանրապետական եւ մայրաքաղաքային սփռում ապահովող սլոթերի օգտագործման լիցենզավորման մրցույթին հայտ ներկայացրած Հեռարձակողները չեն կարող մասնակցել մարզային սփռում ապահովող սլոթերի օգտագործման լիցենզավորման մրցույթին:

6. Հանրային մուլտիպլեքսի սլոթի օգտագործման լիցենզավորման մրցույթում հաղթողի ընտրությունն իրականացվում է կարգավորող պետական մարմնի անդամների վարկանիշային փակ քվեարկության միջոցով:

7. Վարկանիշային քվեարկության իրականացման ընթացակարգը սահմանվում է սլոթի օգտագործման լիցենզավորման մրցույթի անցկացման կարգով:

8. Կարգավորող պետական մարմինը մրցույթում հաղթող մասնակցի ընտրության ժամանակ հաշվի է առնում՝

1) սեփական արտադրության հաղորդումների գերակայությունը.

2) հայերեն հաղորդումների գերակայությունը.

3) բազմակարծությունը խթանելու կարողությունը.

4) հայտատուի տեխնիկական եւ ֆինանսական հնարավորությունները.

5) աշխատակազմի մասնագիտական պատրաստվածությունը.

6) ազգային, համամարդկային, հոգեւոր, մշակութային մնայուն արժեքների ճանաչողությանն ու ամրապնդմանն ուղղված հաղորդումների գերակայությունը.

7) գործող լիցենզավորված Հեռարձակողի դեպքում՝ գործունեության իրականացման ընթացքում սլոթի օգտագործման լիցենզավորման հայտով ստանձնած պարտավորություններին համապատասխանությունը:

9. Լիցենզավորման մրցույթի ժամանակ այլ հավասար պայմանների դեպքում նախապատվությունը տրվում է՝

1) գործող այն Հեռարձակողներին, որոնք իրենց գործունեության ընթացքում թույլ են տվել օրենսդրության նվազ քանակով կամ վտանգավորությամբ խախտումներ.

2) գործող այն Հեռարձակողներին, որոնք տեսալսողական հաղորդումների արտադրության եւ հեռարձակման բնագավառում ունեն առնվազն երեք տարվա փորձ:

10. Կարգավորող պետական մարմնի որոշումները պետք է լինեն պատշաճ հիմնավորված եւ պատճառաբանված: Կարգավորող պետական մարմինն ապահովում է իր որոշումների հրապարակայնությունը:

11. Մրցույթում հաղթող մասնակցի՝ լիցենզիա ստանալու իրավունքից հրաժարվելու կամ կարգավորող պետական մարմնի կողմից սույն օրենքի 51-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով լիցենզիա տալու մասին որոշումը ուժը կորցրած ճանաչելու դեպքում լիցենզիա ստանալու իրավունքն անցնում է հաջորդ առավելագույն միավոր ստացած մասնակցին:

12. Հանրապետական սփռում ապահովող սլոթի օգտագործման լիցենզիա ստացած Հեռարձակողի տեսալսողական ծրագիրը սփռման ամբողջ տարածքում որեւէ ձեւով չի կարող փոփոխվել:

Հոդված 47. Ցանցային օպերատորի գործունեության լիցենզավորման դիմումը

1. Ցանցային օպերատորի գործունեության լիցենզավորման համար դիմողը պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ կամ հաղորդագրության ձեւակերպումն ապահովող կապի այլ միջոցների օգտագործմամբ, կամ առձեռն՝ ստացականով, կարգավորող պետական մարմին է ներկայացնում դիմում, որի ձեւը սահմանվում է ցանցային օպերատորի գործունեության լիցենզավորման կարգով:

2. Դիմումին կցվում են.

1) դիմումատուի հիմնադիր փաստաթղթերի պատճենները.

2) տվյալներ օգտագործվելիք տեխնիկական միջոցների վերաբերյալ.

3) ֆինանսական աղբյուրները հիմնավորող փաստաթղթեր:

3. Դիմումին կից ներկայացված փաստաթղթերում սխալներ, ջնջումներ, վրիպակներ հայտնաբերելու դեպքում կարգավորող պետական մարմինը դրանք ստանալուց հետո՝ տասնօրյա ժամկետում, դիմողին պատշաճ կերպով տեղեկացնում է այդ մասին՝ դրանց շտկման նպատակով: Դիմողն իրավունք ունի սույն մասում նշված ծանուցումը ստանալուց հետո՝ տասնօրյա ժամկետում, կարգավորող պետական մարմին ներկայացնել փաստաթղթերը՝ առանց սույն մասում նշված թերությունների:

4. Ցանցային օպերատորի գործունեության լիցենզավորման կարգը սահմանում է կարգավորող պետական մարմինը:

Հոդված 48. Ցանցային օպերատորի գործունեության լիցենզավորման դիմումի քննարկումը եւ որոշման ընդունումը

1. Ցանցային օպերատորին գործունեության լիցենզավորման դիմումը կարգավորող պետական մարմինն իր նիստում քննարկում եւ որոշում է ընդունում այն մուտքագրելուց հետո՝ 30 օրվա ընթացքում:

2. Լիցենզիա չի տրվում, եթե՝

1) սույն օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ մասում նշված փաստաթղթերը թերի, ակնհայտ կեղծ կամ խեղաթյուրված են.

2) չեն համապատասխանում սույն օրենքի եւ իրավական այլ ակտերի պահանջներին.

3) դիմողը չի վերացրել կարգավորող պետական մարմնի կողմից նշված թերությունները.

4) բացակայում են տեսալսողական տեղեկատվության հեռարձակման տեխնիկական հնարավորությունները:

~~3. Լիցենզիա ստանալու դիմումը բավարարելու կամ մերժելու մասին որոշումը դիմողին ուղարկվում է որոշման ընդունումից հետո՝ եռօրյա ժամկետում: Որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:~~

Հոդված 49. Ցանցային օպերատորի գործունեության լիցենզիա ստացած անձի գործունեությունը

1. Հայաստանի Հանրապետության տարածքում եւ նրա սահմաններից դուրս գործող Հեռարձակողների տեսալսողական ծրագրերը ցանցային օպերատորի լիցենզիա ստացած անձի կողմից կարող են վերահաղորդվել տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորի կամ հեռարձակողի հետ պայմանագրի հիման վրա.

2. Վերահաղորդումը կատարվում է հեռարձակման հետ համաժամանակյա կամ գրեթե համաժամանակյա՝ տեսալսողական տեղեկատվության հեռարձակումից մինչեւ դրա ընդունումն ընկած կարճաժամկետ ընդհատումներով առաջացող տատանումների հետեւանքով՝ հեռարձակման գործընթացին ներհատուկ տեխնիկական պատճառներով պայմանավորված:

3. Ցանցային օպերատորի լիցենզիա ստացած անձը չի կարող լինել տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտոր:

4. Ցանցային օպերատորի լիցենզիա ստացած անձը սեփական տեսալսողական տեղեկատվություն չի կարող արտադրել եւ հեռարձակել:

5. Վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի յուրաքանչյուր փոփոխության վերաբերյալ ցանցային օպերատորը տեղեկացնում է կարգավորող պետական մարմնին:

Հոդված 50. Լիցենզիայի վավերապայմանները

1. Լիցենզիան պարունակում է հետեւյալ տեղեկությունները.
1) կարգավորող պետական մարմնի անվանումը.
2) լիցենզիայի սերիան եւ համարը.
3) լիցենզիան տալու ամսաթիվը.
4) գործունեության տեսակը, որի իրականացման համար տրվել է լիցենզիան.
5) իրավաբանական անձի անվանումը եւ գտնվելու վայրը, իսկ ֆիզիկական անձի համար՝ ազգանունը, անունը եւ հաշվառման վայրը.
6) սփռման տարածքը.
7) լիցենզիայի գործողության ժամկետը.
8) կարգավորող պետական մարմնի նախագահի ստորագրությունը.
9) կարգավորող պետական մարմնի կնիքի դրոշմը:
2. Մրցույթի արդյունքում հաղթած առաջարկը կցվում է լիցենզիային որպես պայման եւ համարվում դրա անբաժանելի մասը:

Հոդված 51. Լիցենզիայի տրամադրումը

1. Լիցենզավորման մրցույթում հաղթող ճանաչված, ինչպես նաեւ դիմումի հիման վրա կարգավորող պետական մարմնի որոշումը ստանալուց հետո՝ 20-օրյա ժամկետում, վճարում են «Պետական տուրքի մասին» օրենքով սահմանված չափով պետական տուրք:
2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված պետական տուրքի վճարումից հետո՝ տասնօրյա ժամկետում, կարգավորող պետական մարմինը նշված անձանց տալիս է համապատասխան լիցենզիաներ:
3. Սույն հոդվածով սահմանված ժամկետում պետական տուրքը չվճարելը հիմք է լիցենզիա տալու մասին եւ մրցույթում հաղթող ճանաչելու եւ լիցենզիա տրամադրելու մասին որոշումներն ուժը կորցրած ճանաչելու համար:
4. Մրցույթում հաղթող ճանաչելու մասին որոշումը սույն հոդվածով սահմանված հիմքով ուժը կորցրած ճանաչվելու դեպքում կարգավորող պետական մարմինը հայտարարում է մրցույթ եւ իրականացնում լիցենզավորում սույն օրենքով մրցույթի միջոցով իրականացվող լիցենզավորման համար սահմանված կարգով ու պայմաններով, բացառությամբ 46-րդ հոդվածի 11-րդ մասով սահմանված դեպքի:

Հոդված 52. Մասնավոր մուլտիպլեքս օպերատորի գործունեության լիցենզավորման մրցույթը

1. Կարգավորող պետական մարմինը իր կառավարմանը հանձնված ազատ հաճախականությունների առկայության դեպքում հայտարարում է մասնավոր մուլտիպլեքս օպերատորի գործունեության լիցենզավորման մրցույթ: Մրցույթը չկայանալու կամ մրցույթում հաղթող չլինելու դեպքում այն հայտարարելուց ~~մեկ տարի~~ 10 օր հետո կարգավորող պետական մարմինը հայտարարում է նոր մրցույթ:

2. Մասնավոր մուլտիպլեքս օպերատորի գործունեության լիցենզավորման մրցույթը հայտարարելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում կարգավորող պետական մարմին է ներկայացվում՝

1) հայտ.

2) մուլտիպլեքս ցանցի ստեղծման նախագիծը, ներառյալ՝ ցանցի գործարկման ժամանակացույցը.

3) տվյալներ օգտագործվելիք տեխնիկական միջոցների եւ սարքավորումների մասին.

4) ֆինանսական աղբյուրները հիմնավորող փաստաթղթեր.

5) հայտատուի հիմնադիր փաստաթղթերի պատճենները:

3. Հայտի ձեւը սահմանվում է մասնավոր մուլտիպլեքս օպերատորի գործունեության լիցենզավորման մրցույթի անցկացման կարգով:

4.Մասնավոր մուլտիպլեքս օպերատորի գործունեության լիցենզավորման համար դիմումների ներկայացման ժամկետի ավարտից հետո կարգավորող պետական մարմինը ցանցի ստեղծման նախագիծը եւ ժամանակացույցը իր ընտրած փորձագիտական խմբին ներկայացնում է տեխնիկական փորձաքննության, որը պետք է իրականացվի առավելագույնը երկու ամսվա ընթացքում:

5. Եթե երկու ամսվա ընթացքում փորձագիտական խումբը չի տալիս տեխնիկական եզրակացությունը, ապա համարվում է, որ այն համապատասխանում է անհրաժեշտ պահանջներին:

6. Տեխնիկական փորձաքննության եզրակացությունը ստանալուց հետո՝ առավելագույնը մեկ ամսվա ընթացքում, հիմք ընդունելով փորձագիտական եզրակացությունը, կարգավորող պետական մարմինը որոշում է ընդունում լիցենզիա տրամադրելու կամ դիմումը մերժելու մասին:

7. Մասնավոր մուլտիպլեքս օպերատորի գործունեության լիցենզավորման մրցույթի անցկացման կարգը (ներառյալ՝ գնահատման չափանիշները) սահմանում է կարգավորող պետական մարմինը:

8.Կարգավորող պետական մարմինը մասնավոր մուլտիպլեքս օպերատորի գործունեության լիցենզավորման մրցույթը հայտարարում է չկայացած, եթե՝

1) սահմանված ժամկետում ոչ մի դիմում չի ներկայացվել, կամ ներկայացված դիմումներից ոչ մեկը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին.

2) մրցույթի միակ մասնակցի կամ բոլոր մասնակիցների մուլտիպլեքս ցանցի ստեղծման նախագծի եւ ժամանակացույցի տեխնիկական փորձաքննության արդյունքում տրվել է բացասական եզրակացություն.

3) մրցույթի միակ մասնակցի կամ բոլոր մասնակիցների մուլտիպլեքս ցանցի ստեղծման նախագծով ներկայացված հեռարձակման ցանցի առաջարկվող սփռման տարածքի չափը չի համապատասխանում սույն օրենքով սահմանված պահանջին:

ԳԼՈՒԽ 8
ԱՌԱՆՑ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Հոդված 53. Առանց լիցենզավորման տեսալսողական տեղեկատվության կազմակերպման պայմանները

1. Ցանցային հեռարձակման համար լիցենզիա չի պահանջվում, եթե սփռման եւ սպասարկման տարածքը սահմանափակվում է իրավաբանական կամ ֆիզիկական անձին պատկանող շենքերով ու տարածքներով:

2. Առանց լիցենզավորման տեսալսողական տեղեկատվությունների հեռարձակման կազմակերպումը չպետք է ազդի տվյալ շրջանում գործող Հեռարձակողների իրականացման որակի վրա, ինչպես նաեւ չպետք է խաթարի տեսալսողական տեղեկատվություն ընդունող եւ հեռարձակող հեռահաղորդակցության տեխնիկական միջոցների աշխատանքը:

3. Առանց լիցենզավորման տեսալսողական տեղեկատվության հեռարձակում են իրականացնում ոչ գծային Հեռարձակողները, որոնք գործունեություն են իրականացնում կարգավորող պետական մարմնի կողմից սահմանված կարգով գործունեությունը թույլատրող որոշումը ստանալուց հետո:

4. Կարգավորող պետական մարմնի՝ գործունեությունը թույլատրող որոշումը ստանալուց հետո, ոչ գծային Հեռարձակողները կարող են պայմանագրային հիմունքներով գործունեություն իրականացնել ցանցային օպերատորների եւ այլ հաղորդակցության ցանցերով:

Հոդված 54. Տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորի գործունեությունը

1. Տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորը գործում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն կարգավորող պետական մարմին ծանուցում ներկայացնելուց հետո:

2. Յուրաքանչյուր նոր տեսալսողական ծրագրի վերաբերյալ ներկայացվում է ծանուցում:

3. Ծանուցումը պետք է պարունակի հետեւյալ տեղեկությունները.

1) տեսալսողական ծրագրերի վերաբերյալ.

2) տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտոր հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձի վերաբերյալ.

3) տեսալսողական ծրագրի իրավատիրոջ հետ կնքված պայմանագրի պատճեն.

4) Հեռարձակողների եւ օպերատորի հիմնադիր կամ մասնակից հանդիսանալու վերաբերյալ:

4. Կարգավորող պետական մարմինը ծանուցումը հաստատում է 20-օրյա ժամկետում:

5. Ծանուցման մեջ թերի, ակնհայտ կեղծ կամ խեղաթյուրված տեղեկություններ լինելու կամ օտարերկրյա տեսալսողական ծրագրերում գովազդ ներառված լինելու դեպքում այն չի հաստատվում, ~~եթե հնարավոր չի եղել ձեռք բերել այդ ծրագիրն առանց գովազդ~~, բացառությամբ այն դեպքերի երբ հնարավոր չի եղել ձեռք բերել տվյալ տեսալսողական ծրագրի առանց գովազդ տարբերակը:

Գ Լ Ո Ւ Խ 9

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱՅԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԽԱԽՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Հոդված 55. Պատասխանատվությունը տեսալսողական մեդիայի մասին օրենսդրության պահանջները խախտելու համար

1. Կարգավորող պետական մարմնի կողմից տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու, ինչպես նաեւ պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտումների դեպքեր

հայտնաբերելու եւ դրանց մասին կարգավորող պետական մարմին գրավոր տեղեկացնելու դեպքում կարգավորող պետական մարմինը կիրառում է հետեւյալ վարչական տույժերը.

1) գրավոր նախազգուշացում.

2) տուգանք.

3) հեղինակազորման կամ լիցենզիայի գործողության կասեցում.

4) հեղինակազորման կամ լիցենզիայի գործողության դադարեցում:

2. Վարչական տույժերի հասցեատերերն իրավունք ունեն դիմելու դատարան՝ կարգավորող պետական մարմնի որոշումներն անվավեր ճանաչելու կամ փոփոխելու պահանջով: Նշված պահանջով հայցը դատարան ներկայացնելը չի կասեցնում գործունեության կասեցման կիրառման մասին որոշման կատարումը:

3. Սույն հոդվածով նախատեսված վարչական տույժերը չեն կիրառվում Հանրային հեռարձակողի նկատմամբ:

Հոդված 56. Գրավոր նախազգուշացումը

Սույն օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով հայտնաբերված խախտումների առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենքով, կարգավորող պետական մարմինն իրավախախտումը հայտնաբերելու օրվանից եւ (կամ) պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում հայտնաբերված իրավախախտումների դեպքերի մասին տեղեկացվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում գրավոր նախազգուշացնում է խախտում կատարած անձին՝ պահանջելով վերացնել խախտումը եւ սահմանելով խախտումը վերացնելու համար ողջամիտ ժամկետ:

Հոդված 57. Տուգանքը

1. Սույն հոդվածով սահմանված իրավախախտումներ կատարած անձի նկատմամբ տուգանք կարող է կիրառվել իրավախախտում կատարելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում, իսկ շարունակվող կամ տեւող իրավախախտման դեպքում՝ այն հայտնաբերելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում:

2. Սույն օրենքի 56-րդ հոդվածով սահմանված կարգով գրավոր նախազգուշացում ստացած անձի կողմից նախազգուշացմամբ նշված ժամկետում սահմանված պահանջը չկատարելը կամ նախազգուշացման համար հիմք դարձած նույն խախտումը սույն օրենքի 56-րդ հոդվածով սահմանված վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ Հասույթի 0.03 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

3. Հեռարձակողների եւ օպերատորի կողմից համապատասխան սփռման տարածքների համընկնման շրջաններում՝ օրինական հիմքով տարածվող այլ տեսալսողական տեղեկատվություն ընդունելու իրավունքը սահմանափակելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ Հասույթի 0.04 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով:

4. Հեռարձակողների անվանումները էկրանային ցուցադրման ժամանակ միայն օտար լեզուներով առանց հայերեն անընդհատ տառադարձության օգտագործելը

առաջացնում է տուգանքի նշանակում՝ Հասույթի 0.02 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապ1ատիկի չափով:

5. Հեռարձակողի կողմից հայերեն հաղորդումները ընդհանուր եթերաժամի 55 տոկոսից պակաս հեռարձակելը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ Հասույթի 0.05 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով:

6. Ցանցային օպերատորի կողմից, առանց պայմանագրի վերահաղորդում իրականացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ Հասույթի 0.04 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:

7. Ընտրությունների (հանրաքվեների) նախընտրական (հանրաքվեի դրված հարցի վերաբերյալ) քարոզչության իրականացման համար օրենքով սահմանված ժամանակահատվածում առանց էկրանի վրա պարտադիր անընդմեջ լուսագրով «Նախընտրական (հանրաքվեի դրված հարցի վերաբերյալ) քարոզչություն» հաղորդումներ սփռելը, իսկ լսողական հաղորդումների դեպքում՝ յուրաքանչյուր հաղորդման ընթացքում ոչ պակաս, քան 2 անգամ դրա մասին չհիշեցնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ Հասույթի 0.05 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:

~~8. Հեռարձակողների կողմից թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների նկատմամբ խտրականության դրսեւորումը՝~~

~~առաջացնում է տուգանքի նշանակում՝ Հասույթի 0.05 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:~~

8. Հեռարձակողների կողմից թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 եւ ավելի ծավալային տոկոս) խմիչքների գովազդի հեռարձակումը 06:00-ից մինչեւ 22:30-ն ընկած ժամանակահատվածում, ծխախոտի եւ ծխախոտային արտադրության գովազդի հեռարձակումը, ինչպես նաեւ մանկապատանեկան տեսալսողական հաղորդումներում ծխախոտի կամ ծխախոտային արտադրության ապրանքատեսակների ուղղակի կամ անուղղակի օգտագործումը կամ ցուցադրումը առաջացնում են տուգանքի նշանակում՝ Հասույթի 0.02 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

9. Լրատվական հաղորդումների գովազդային ընդհատումը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ Հասույթի 0.03 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով:

10. Հեռարձակողի կողմից ամեն օր եթերում իր ելքային տվյալները չներկայացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

11. Հեռարձակողի կողմից իր հաղորդումների հեռարձակման ժամանակ անընդմեջ իր խորհրդանիշը չհեռարձակելը, բացառությամբ գովազդի հաղորդման ժամանակ՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ Հասույթի 0.02 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով:

12. Էրոտիկ բնույթի տեսալսողական հաղորդումները եւ սարսափ ու ակնհայտ բռնություն պարունակող ֆիլմերը, ինչպես նաեւ անչափահասների առողջության, մտավոր եւ ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող տեսալսողական հաղորդումների եթեր հեռարձակման պահանջները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ Հասույթի 0.02 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի չափով:

13. Արբանյակային հեռարձակման մասին կարգավորող պետական մարմին ծանուցում չներկայացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ Հասույթի 0.02 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի չափով:

14. Սույն օրենքի 6-րդ հոդվածի պահանջները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ Հասույթի 0.03 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

15. Տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանի վարման սահմանված կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

16. Հեռարձակողի կողմից «Գովազդի մասին» օրենքի պահանջները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում Հասույթի 0.03 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:

17. Հեռարձակողի կողմից հեռարձակած հաղորդումների տեսագրությունները եւ ձայնագրությունները՝ սույն օրենքով սահմանված ժամկետով չպահպանելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ Հասույթի 0.02 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով:

18. Սույն օրենքի 7-րդ հոդվածի պահանջները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ Հասույթի 0.02 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:

19. Սույն օրենքի 42-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված պայմանները չապահովելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ Հասույթի 0.01 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

20. Սույն օրենքի 8-րդ հոդվածի պահանջները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ Հասույթի 0.02 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

21. Արգելված հովանավորություն իրականացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ Հասույթի 0.02 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

22. Պետության կողմից հայտարարված սգո եւ հիշատակի օրերին գովազդի եւ զվարճալի հաղորդումներ հեռարձակելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ Հասույթի 0.03 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի չափով:

23. Լիցենզիա ստացած Հեռարձակողի կողմից տեսալսողական ծրագրում մանկական, կրթական, մշակութային եւ սպորտային թեմատիկ ուղղվածության տեսալսողական հաղորդումների շաբաթական եթերաժամի առնվազն 20 տոկոսի պահանջը չպահպանելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ Հասույթի 0.02 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

24. Ծխելու տեսարաններ պարունակող տեսալսողական հաղորդման մեկնարկին, տեսանելի չափով, 5 վայրկյան տեւողությամբ «ծխելը վնասում է ձեր առողջությանը» գրառման ուղեկցման պահանջը չպահպանելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ Հասույթի 0.02 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

25. Առանց սույն օրենքի 54-րդ հոդվածով սահմանված ծանուցման գործունեություն իրականացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:

26. Հեռարձակողի, իսկ ոչ գծային տեղեկատվության դեպքում՝ օպերատորի, կողմից տեսալսողական ծրագիրը կամ դրա մասը, առանց դրանց իրավատերերի (հեղինակային կամ հարակից իրավունքի սուբյեկտ չհանդիսացող) համաձայնության տարածելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

27. Կարգավորող պետական մարմնի որոշմամբ կամ նախագահի գրությամբ կամ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր կամ այլ տեղեկատվություն սահմանված ժամկետում չներկայացնելը կամ ոչ հավաստի կամ ոչ ամբողջական տեղեկություններ ներկայացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:

28. Կարգավորող պետական մարմին նախորդող տարվա հասույթի գոյացման բացվածքի եւ չափի վերաբերյալ տեղեկություն չներկայացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

29. Հեռարձակողի նախանշված նպատակների իրագործման հիմնական ուղղությունների եւ միջոցառումների ընդհանրական նկարագրին համապատասխան չգործելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

30. Էթիկայի կանոնագրի դրույթների ապահովման ինքնակարգավորման միջոցները չկիրառելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով:

31. Սույն հոդվածի 2-30-րդ մասերով սահմանված հիմքերով վարչական տույժի ենթարկված անձի կողմից մեկ տարվա ընթացքում նույն խախտումը կրկնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ կիրառված տույժի եռապատիկի չափով:

Հոդված 58. Հեղինակազորման կամ լիցենզիայի գործողության կասեցումն ու դադարեցումը

1. Հեռարձակողի հեղինակազորման կամ լիցենզիայի գործողությունը կասեցվում է, եթե՝

1) Հեռարձակողը սույն օրենքի 57-րդ հոդվածի 31-րդ մասով սահմանված հիմքով մեկ տարվա ընթացքում երեք անգամ ենթարկվել է վարչական տույժի (բացառությամբ սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի), որից հետո նույն տարվա ընթացքում կատարել է սույն օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված որեւէ վարչական տույժի նշանակման համար հիմք համարվող արարք.

2) Հեռարձակողը սույն օրենքի 57-րդ հոդվածի 31-րդ մասով սահմանված հիմքով սույն օրենքի 57-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ մեկ տարվա ընթացքում մեկ անգամ ենթարկվել է վարչական տույժի, որից հետո նույն տարվա ընթացքում կատարել է սույն օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված որեւէ վարչական տույժի նշանակման համար հիմք համարվող արարք.

3) Հեռարձակողի տեխնիկական միջոցները չեն համապատասխանում ընդունված ստանդարտներին, որի հետեւանքով վտանգ է սպառնում մարդկանց առողջությանը, արգելքներ են ստեղծվում այլ Հեռարձակողների եւ օպերատորների գործունեության համար, չի ապահովվում տեսալսողական հաղորդումների տեխնիկական որակը.

4) լիցենզիա ստացած Հեռարձակողն առանց որեւէ հիմնավոր պատճառի 24 ժամ շարունակ չի ապահովել տեսալսողական հաղորդումների հեռարձակում.

5) լիցենզիա ստացած Հեռարձակողը լիցենզիան ստանալու պահից վեց ամսվա ընթացքում չի հեռարձակել տեսալսողական հաղորդումներ.

6) այդ մասին կա Հեռարձակողի դիմումը.

7) խախտվել են օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները.

8) ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ վարչապետին կամ արտակարգ դրության ընթացքում ի պաշտոնե արտակարգ դրության տարածքի պարետ հանդիսացող փոխվարչապետին պաշտոնական հաղորդագրություն կատարելու համար եթերաժամանակ չի հատկացվել.

2. Հեղինակազորման կամ լիցենզիայի գործողությունը կասեցնելուց հետո կարգավորող պետական մարմնի նշած ժամկետում սույն հոդվածի 1-ին մասում նշված խախտումները վերացնելու դեպքում կարգավորող պետական մարմինը վերացնում է կասեցումը:

Կասեցման ժամկետը չի կարող գերազանցել ~~60~~ 30 օրը:

3. Հեղինակազորումը կամ լիցենզիայի գործողությունը դադարեցվում է, եթե՝

1) իրավաբանական անձը լուծարվել է.

2) տեղի է ունեցել լիցենզիայի փոխանցում ֆիզիկական կամ իրավաբանական այլ անձանց.

3) լիցենզավորման կամ հեղինակազորման համար ներկայացված փաստաթղթերում էական նշանակություն ունեցող կեղծ կամ խեղաթյուրված տեղեկատվություն է հայտնաբերվել.

4) սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված խախտումը չի վերացվել.

5) դիմումի հիման վրա.

4. Տեսալսողական հաղորդումների հեռարձակման ընթացքում կատարված տեխնիկական կանոնների խախտման, թերացումների կամ հաղորդումների հեռարձակումը չապահովելու համար անձն ազատվում է պատասխանատվությունից, եթե հիմնավորվում է, որ դրանք թույլ են տրվել՝

1) պետական լիազորված մարմինների կողմից տեխնիկական կանոնների կամ չափորոշիչների փոփոխության պատճառով.

2) տեխնիկական վերազինման նպատակով, որի մասին դրա իրականացումից առնվազն 30 օր առաջ գրավոր հիմնավորմամբ անձը տեղյակ է պահել կարգավորող պետական մարմնին եւ ստացել թույլտվություն.

3) անհաղթահարելի ուժի հետեւանքով:

5. Սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված դեպքերում Հեռարձակողները ողջամիտ ժամկետում վերականգնում են տեսալսողական հաղորդումների հեռարձակումը:

7. Սույն հոդվածի դրույթները տարածվում են նաեւ ցանցային օպերատորների վրա այնքանով, որքանով կիրառելի են:

Հոդված 59. Մասնավոր մուլտիպլեքս օպերատորի գործունեության լիցենզիայի դադարեցումը

1. Մասնավոր մուլտիպլեքս օպերատորի գործունեության լիցենզիան դադարեցվում է «Լիցենզավորման մասին» օրենքով նախատեսված դեպքերում, ինչպես նաեւ եթե՝

1) մուլտիպլեքս օպերատորը կարգավորող պետական մարմնի սահմանած ժամկետում չի ձեռք բերել օրենքով պահանջվող թվային հեռարձակման ցանց.

2) տեխնիկական պատճառներով նրա գործունեության խափանումը տեւում է երեք ամսից ավելի:

Գ Լ Ո Ւ Խ 9

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 60. Եզրափակիչ մաս եւ անցումային դրույթներ

2 4Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող ~~տասներորդ~~ օրը:

2 5Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» 2000 թվականի հոկտեմբերի 9-ի ՀՕ-97 օրենքը ճանաչել ուժը կորցրած:

2 6Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո Հեռարձակողները եւ օպերատորները շարունակում են իրենց գործունեությունը լիցենզիայի ժամկետներին համապատասխան:

2 7Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահին նոր լիցենզիա ստացած հեռուստառադիոընկերությունները սույն օրենքի իմաստով համարվում են հեղինակազորված եւ լիցենզիա ստացած Հեռարձակողներ:

2 8Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահին լիցենզավորման հայտ ներկայացրած հեռուստառադիոընկերությունները սույն օրենքի իմաստով համարվում են հեղինակազորված:

2 9Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեցամսյա ժամկետում սեփական տեսալսողական հաղորդում հեռարձակող մալուխային հեռուստառադիոընկերությունները դադարեցնում են սեփական հաղորդման հեռարձակումը:

3 0 . Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո մալուխային հեռուստառադիոընկերությունները համարվում են ցանցային օպերատորներ եւ շարունակում են իրենց գործունեությունը լիցենզիայի ժամկետով:

3 1Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ցանցային օպերատորները կարգավորող պետական մարմին ներկայացնում են տեղեկություն՝ իրենց ցանցում վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի մասին:

3 2Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո կարգավորող պետական մարմնի նախագահը, անդամները, Խորհրդի նախագահը եւ անդամները շարունակում են պաշտոնավարել մինչեւ իրենց լիազորությունների ավարտը:

3 3 Սույն օրենքի 44-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված չափորոշիչները և հասկացությունները կարգավորող պետական մարմինը հաստատում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում:

3 4Ոչ գծային տեսալսողական տեղեկատվության վերաբերյալ գործունեությունը թույլատրող որոշում ստանալու համար հայտերը ներկայացվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց 6 ամիս հետո:

3 5 Մրցութային հանձնաժողովի ձևավորման կարգը ~~Կառավարությունը~~ կարգավորող պետական մարմինը հաստատում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո 6 ամսյա ժամկետում:

3 6 Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահին լիցենզավորման հայտ ներկայացրած Հեռարձակողները լիցենզիան ստանում են սույն օրենքով սահմանված կարգով եւ պայմաններին համապատասխան:

3 7 Լսողական ծրագիր հեռարձակողների համար անալոգային հաճախականությունների վրա տարածվում են սույն օրենքով սլոթի վերաբերյալ նախատեսված կարգավորումները:

3 8 Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո վեց ամսվա ընթացքում սույն օրենքով նախատեսված տուգանքները կիրառվում են 50 տոկոսի չափով:

3 9 Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո վեց ամսվա ընթացքում սույն օրենքի 6-րդ եւ 7-րդ հոդվածներով արգելված արարքներ կատարելու համար կիրառվում են գրավոր նախազգուշացում:

4 0 Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո Հեռուստատեսության եւ ռադիոյի հանձնաժողովի կողմից ձեւավորված Մրցութային հանձնաժողովի կազմը լուծարվում է:

4 1 Թվային ռադիոհեռարձակման անցման ժամանակ լիցենզիա ստացած Լսողական ծրագիր հեռարձակողները պարտավոր են իրենց տեխնիկական միջոցները համապատասխանեցնել թվային հեռարձակման ցանցով հեռարձակվելու համար նախատեսված միջոցներին:

4 2 Սույն օրենքի 49-րդ հոդվածի 3-րդ մասը չի տարածվում սույն օրենքը ուժի մեջ մտնելու պահին առկա պայմանագրային հարաբերությունների վրա մինչեւ պայմանագրերի գործողության ժամկետի ավարտը:

4 3 Սույն օրենքը ուժի մեջ մտնելուց հետո սույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթը կինոմատոգրաֆիական ստեղծագործությունների ցուցադրության դեպքում գործում է մեկ տարի հետո:

4 4 Սույն օրենքի 44-րդ հոդվածի 2-րդ մասը ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի մեկից:

4 5 2020 թվականին հայտարարվելիք լիցենզիաների գործողության ժամկետը լրանալու հիմքով սլոթի օգտագործման լիցենզավորման մրցույթների հետ միաժամանակ հայտարարվում են նաեւ բոլոր ազատ սլոթերի օգտագործման լիցենզավորման մրցույթները:

4 6 Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահին հանրային մուլտիպլեքսի սլոթի օգտագործման լիցենզիայի մրցույթը հայտարարված լինելու, բայց հայտերի քվեարկությունը կայացած չլինելու դեպքում, այն չեղարկվում է, և մրցույթ է հայտարարվում սույն օրենքով սահմանված կարգով: Չեղարկված մրցույթի մասնակցության համար վճարված պետական տուրքը համարվում է վավեր Հեռարձակողի կողմից նոր մրցույթին մասնակցելու հայտ ներկայացնելու դեպքում: Նոր մրցույթին մասնակցելու համար Հեռարձկողի կողմից հայտ չներկայացնելու դեպքում վճարված պետական տուրքը վերադարձվում է ամբողջությամբ:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿՈԴ՝ Պ-596-30.04.2020-ԳԿ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

ԱՌԱՋԱՐԿԻ ՀԵՂԻՆԱԿԸ	ՆԱԽԱԳԾԻ ԱՅՆ ՄԱՍԸ, ՈՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ Է ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԻՄՆԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑՈՂԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ	ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ Ն ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Ուսումնասիրելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի նախագիծը (այսուհետ՝ նախագիծ)՝ առաջարկում ենք. 1. հաշվի առնելով, որ նախագծի 6-րդ հոդվածի 4-րդ մասի ձևակերպումը հակասում է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության մասին» կոնվենցիային, այն շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Տեսալսողական մեդիածառայությունները պարտավոր են իրենց ծրագրերում ապահովել լսողության խնդիրներ ունեցող անձանց համար հնարավոր տեղեկությունների ստացման մատչելիությունը՝ հայերեն ժեստերի լեզվով թարգմանությամբ և (կամ) հայերեն բաց կամ փակ ենթագրերով (համաժամանակյա գրավոր նկարագրությամբ) հեռարձակման միջոցով: Լսողության խնդիրներ ունեցող անձանց տեղեկություն ստանալու մատչելիությունն ապահովելու համար օրվա հեռուստաեթերաժամում հեռարձակվող հեռուստահաղորդումների նվազագույն քանակները և պահանջները սահմանվում են «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:». Նախագծի 61-րդ հոդվածի 9-րդ մասում արված հղումը շտկել, քանի որ նախագծի 44-րդ հոդվածը 6-	Ընդունվել է	Ընդունվել է

		րդ մաս չունի:		
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	15-րդ հոդվածի 6-րդ մասից հանել «կամ միջազգային իրավունքի սուբյեկտ հանդիսացող միջազգային կազմակերպություն» բառերը,	Ընդունվել է	Ընդունվել է
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	16-րդ հոդվածի 1-ին մասում «: Ավելի մեծ բաժնեմաս կարող է սահմանվել միջպետական պայմանագրերով:» բառերը փոխարինել «՝ եթե այլ բան նախատեսված չէ միջազգային պայմանագրով:» բառերով	Ընդունվել է	Ընդունվել է
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	17-րդ հոդվածի 1-ին մասում «: Ավելի մեծ բաժնեմաս կարող է սահմանվել միջպետական պայմանագրերով:» բառերը փոխարինել «՝ եթե այլ բան նախատեսված չէ միջազգային պայմանագրով:» բառերով,	Ընդունվել է	Ընդունվել է
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	24-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «4. Խորհրդի անդամ կարող են լինել միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, հայերենին տիրապետող և բարձրագույն կրթություն ունեցող, տեսալսողական բնագավառի, ինչպես նաև գիտության, կրթության, մշակույթի և լրագրության ոլորտի գործիչներ:», և համապատասխանաբար հանել 5-րդ մասի 1-ին կետը	Ընդունվել է	Ընդունվել է
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	45-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Օտարերկրյա կամ միջազգային տեսալսողական ծրագրերը հանրային մուլտիպլեքսում առանց լիցենզիա կարող են վերահեռարձակվել միայն Կառավարության որոշմամբ՝ երկկողմ կամ բազմակողմ գրավոր համաձայնության հիման վրա»:	Ընդունվել է	
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 1-ին հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետում և Նախագծի 24-րդ հոդվածի 1-ին մասում «ապահովող» բառից հետո լրացնել «և հսկողություն իրականացնող» բառերը, քանի որ Նախագծի իմաստով հանրային հեռարձակողի համար որպես լիազոր մարմին հանրային հեռարձակողի խորհուրդն	Ընդունվել է	Ընդունվել է

		է և հետևաբար նաև հսկողություն է իրականացնում:		
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 1-ին հոդվածի 5-րդ մասի 1-ին կետում և 6-րդ հոդվածի 5-րդ մասում առաջարկում եմ «հիմնական» բառը հանել, քանի որ իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի պետական գրանցման և պետական հաշվառման բնագավառում առաջացող հարաբերությունները կարգավորվում են «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքով, իսկ նշված օրենքում հիմնական գրանցում հասկացություն չկա:	Ընդունվել է	Ընդունվել է
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի սահմանումը համապատասխանեցնել ՀՀ Սահմանադրության 196-րդ հոդվածի 1-ին մասին:	Ընդունվել է	Ընդունվել է
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետում «ավարտուն է» բառից հետո լրացնել «և համարվում է հեղինակային և/կամ հարակից իրավունքի օբյեկտ» բառերը, քանի որ հեղինակային իրավունքի և հարակից իրավունքերի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքով, իսկ այս օրենքի իմաստով տեսալսողական ստեղծագործությունները համարվում են հեղինակային իրավունքի օբյեկտ:	Ընդունվել է	Ընդունվել է
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Առաջարկում եմ Նախագծում «վերահեռարձակում» բառը իր համապատասխան հոլովաձևերով փոխարինել «վերահաղորդում» բառով և համապատասխան հոլովաձևերով:	Ընդունվել է	Ընդունվել է
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	«Վերահաղորդում՝ այլ Հեռարձակողի կողմից տեսալսողական ծրագրի համաժամանակյա կամ գրեթե համաժամանակյա՝ տեսալսողական տեղեկատվության հեռարձակումից մինչև դրա ընդունումն ընկած կարճաժամկետ ընդհատումներով առաջացող տատանումների հետևանքով՝ հեռարձակման գործընթացին ներհատուկ տեխնիկական պատճառներով պայմանավորված և ամրագրված (ձայնագրված և (կամ) տեսագրված)	Ընդունվել է	Ընդունվել է

		տեսալսողական հաղորդման հետագա հեռարձակումը:»		
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 6-րդ հոդվածի 2-րդ մասում առաջարկում եմ «Այլ» բառը փոխարինել «Օտար» բառով, 2-րդ մասի 2-րդ կետում «Կարգավորող» բառից հետո լրացնել «պետական» բառը, քանի որ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտում միևնույն միտքն արտահայտելիս կիրառվում են միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ, իսկ Նախագծի 3-րդ հոդվածում և 6-րդ գլխի դրույթներում կարգավորող մարմինը նշված է պետական մարմին, ուստի առաջարկում եմ այս փոփոխությունը, իսկ 2-րդ մասի 2-րդ կետում «հաղորդումների» բառից հետո լրացնել «և այլ Հեռարձակողների կողմից ազգային փոքրամասնությունների մշակույթը ներկայացնող տեսալսողական հաղորդումների» բառերը, քանի որ Նախագծի այս դրույթը վերաբերում է նաև այլ Հեռարձակողներին:	Ընդունվել է	Ընդունվել է
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում է տեսալսողական տեղեկատվության ազատ ընտրության, արտադրության ու տարածման իրավունքը, հետևաբար, այս իրավունքի պատշաճ իրականացումն ապահովելու համար առաջարկում եմ Նախագծի 10-րդ հոդվածի 6-րդ մասում «30» թիվը փոխարինել «20» թվով:	Ընդունվել է	Ընդունվել է
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Անկողմնակալ և գնահատականներից զերծ տեղեկատվություն ստանալու յուրաքանչյուր քաղաքացու իրավունքն ապահովելու համար առաջարկում եմ Նախագծի 10-րդ հոդվածը լրացնել նոր 9-րդ մասով հետևյալ բովանդակությամբ «Հեռարձակողի լրատվական հաղորդումներում նույն թեմայի վերաբերյալ լուսաբանումը չպետք է գերազանցի հաղորդման եթերաժամի 25 տոկոսը:»	Ընդունվել է	Ընդունվել է
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 9-րդ հոդվածի 4-րդ մասում «տեսալսողական ծառայությունների» բառերը փոխարինել «Հեռարձակողների» բառով, քանի որ Նախագծի 3-րդ հոդվածում տրված է Հեռարձակողի՝ տեսալսողական մեդիածառայություն մատուցողի	Ընդունվել է	Ընդունվել է

		հասկացությունը և հետևաբար դրույթների տարաբնույթ ընկալումը բացառելու նպատակով առաջարկում եմ այս փոփոխությունը:		
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 14-րդ հոդվածի 6-րդ մասում «ապրանքը կամ ծառայությունը տարբերանշանով» բառերը փոխարինել «ապրանքների և ծառայությունների համար օգտագործվող ապրանքային նշանը,» բառերով, քանի որ այս Նախագծի դրույթների իմաստով «տարբերանշան» բառը չի կիրառվում:	Ընդունվել է	Ընդունվել է
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 15-րդ հոդվածի 4-րդ մասում առաջարկում եմ «մարմինը» բառից հետո լրացնել «հանրային» բառը, քանի որ Նախագծի իմաստով հանրային Հեռարձակողի խորհուրդը լիազոր մարմին է միայն հանրային Հեռարձակողի համար, հետևաբար Նախագծում դրույթների միջև հակասությունները բացառելու նպատակով առաջարկում եմ այս փոփոխությունը:	Ընդունվել է	Ընդունվել է
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 33-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ, 5-րդ և 6-րդ կետերում «օպերատորի» բառից հետո լրացնել «գործունեության» բառով:	Ընդունվել է	Ընդունվել է
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 33-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված է, որ Կարգավորող պետական մարմինն ընդունում է սույն օրենքով նախատեսված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր, սակայն այս կետի հետ կապված նշեմ, որ ՀՀ Սահմանադրության 196-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ Օրենքով սահմանված դեպքերում և կարգով Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն ընդունում է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր, իսկ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում տրված է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի սահմանումը, այն է՝ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտ՝ Սահմանադրության և օրենքների հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով օրենքով լիազորված լինելու դեպքում	Ընդունվել է	Ընդունվել է

		Սահմանադրությամբ նախատեսված մարմինների ընդունած նորմատիվ իրավական ակտ: Հետևաբար, հիմք ընդունելով վերոնշյալ դրույթները, առաջարկում եմ Նախագծի 33-րդ հոդվածում լրացնել նոր մաս, որով կսահմանվեն, թե որ դեպքերում է Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն օրենքով լիազորված ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր:		
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 44-րդ հոդվածը առաջարկում եմ փոխարինել հետևյալ նոր բովանդակությամբ. «Հոդված Հեղինակազորումը 44. 1. Իրավաբանական կամ ֆիզիկական անձը Հեռարձակողի կարգավիճակ ստանալու համար կարգավորող պետական մարմին է ներկայացնում հեղինակազորման հայտ, որում նշվում է՝ 1) հայտատուի անվանումը. 2) իրավաբանական անձի գրանցման համարը, իսկ ֆիզիկական անձի համար՝ հաշվառման համարը. 3) իրավաբանական անձի գտնվելու վայրը, իսկ ֆիզիկական անձի համար՝ հաշվառման վայրը. 4) հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն. 5) տեսալսողական ծրագրի անվանումը. 6) հայտի ներկայացման ամիսը, ամսաթիվը, տարեթիվը. 7) հայտատուի ստորագրությունը: 2. Հեղինակազորման հայտը բավարարվում է կարգավորող պետական մարմին այն	Ընդունվել է	Ընդունվել է

		ներկայացնելուց հետո տասնօրյա ժամկետում: 3. Տեսալսողական ծրագրի անվանման փոփոխման դեպքում հեղինակազորման նոր հայտ է ներկայացվում:»		
<< Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 48-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դրույթը վերաբերում է ցանցային օպերատորի կողմից դիմումին կից ներկայացված փաստաթղթերին, սակայն չի նշված թե ինչ փաստաթղթեր պետք է ներկայացնեն, հետևաբար առաջարկում եմ «Դիմումին» բառից առաջ լրացնել նոր նախադասություն հետևյալ բովանդակությամբ. «Դիմումին կցվում են. 1) դիմումատուի հիմնադիր փաստաթղթերի պատճենները. 2) գործարար ծրագիր. 3) տվյալներ օգտագործվելիք տեխնիկական միջոցների վերաբերյալ. 4) ֆինանսական աղբյուրները հիմնավորող փաստաթղթեր:»	Ընդունվել է	Ընդունվել է
<< Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 50-րդ հոդվածի վերաբերյալ հայտնում եմ, որ Նախագծի իմաստով ցանցային օպերատորի լիցենզիա ստացած անձը չի կարող սեփական տեսալսողական ծրագրեր հեռարձակել և միայն վերահաղորդելու է Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս գործող Հեռարձակողների տեսալսողական ծրագրերը, հետևաբար առաջարկում եմ Նախագծի 50-րդ հոդվածի 1-ին մասում «հեռարձակվել» բառը փոխարինել «վերահաղորդվել» բառերով, 2-րդ մասում «Վերահեռարձակումը» բառը փոխարինել «Վերահաղորդումը» բառով, իսկ Նախագծի 45-րդ հոդվածի 2-րդ մասում «վերահեռարձակվել» բառը փոխարինել «վերահաղորդվել» բառով:	Ընդունվել է	Ընդունվել է
<< Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 50-րդ հոդվածը վերաբերում է ցանցային օպերատորի լիցենզիա ստացած անձի գործունեությանը և ցանցային օպերատորի լիցենզիա	Ընդունվել է	

		ստացած անձի կողմից տեսալսողական ծրագրերը վերահաղորդվում են տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորի կամ հեռարձակողի հետ պայմանագրի հիման վրա, սակայն դրույթ չկա սահմանված, ինչպես պետք է կարգավորող պետական մարմինը տեղեկանա ցանցային օպերատորի կողմից վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի մասին, հետևաբար առաջարկում եմ Նախագծի 50-րդ հոդվածը լրացնել նոր 5-րդ մասով հետևյալ բովանդակությամբ. «Ցանցային օպերատորի կողմից վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի յուրաքանչյուր փոփոխության դեպքում կարգավորող պետական մարմին ներկայացվում է ծանուցում:» Եվ նշված հարցի կարգավորման համար անհրաժեշտ է նաև Նախագծի 61-րդ հոդվածը լրացնել նոր մասով հետևյալ բովանդակությամբ. «Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ցանցային օպերատորները կարգավորող պետական մարմին ներկայացնում են տեղեկություն՝ իրենց ցանցում վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի մասին:»		Ընդունվել է
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 52-րդ հոդվածի վերնագրում «Լիցենզիա տալը» բառերը փոխարինել «Լիցենզիայի տրամադրումը» բառերով:	Ընդունվել է	Ընդունվել է
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 53-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ նախադասության «նոր մրցույթ» բառերից հետո լրացնել «այնքան ժամանակ մինչև մրցույթում հաղթող ճանաչվելը:» բառերը:	Չի ընդունվել	Չի ընդունվել
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 53-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում «դիմում» բառը փոխարինել «հայտ» բառով, 3-րդ և 4-րդ կետերը կարդալ նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ և լրացնել նոր 5-րդ կետ հետևյալ	Ընդունվել է	Ընդունվել է

		նախադասությամբ. «3) տվյալներ օգտագործվելիք տեխնիկական միջոցների և սարքավորումների մասին. 4) ֆինանսական աղբյուրները հիմնավորող փաստաթղթեր. 5) հայտատուի հիմնադիր փաստաթղթերի պատճենները:»		
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 53-րդ հոդվածի 3-րդ մասը կարդալ նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ. «Հայտի ձևը սահմանվում է մասնավոր մուլտիպլեքս օպերատորի գործունեության լիցենզավորման մրցույթի անցկացման կարգով:»	Ընդունվել է	Ընդունվել է
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 56-րդ հոդվածը լրացնել նոր մասով: «Պատասխանատվությունից կարող են ազատվել հետևյալ հանգամանքների առկայության դեպքում. 1) դիմողը՝ բողոքողը գրավոր ձևով հրաժարվում է իր դիմումից 2) վարչական իրավապապտման դեպքի կամ կազմի բացակայության 3) օրենքով սահմանված կարգով»:	Չի ընդունվել	Չի ընդունվել
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծում դրույթների միջև հակասությունները բացառելու նպատակով առաջարկում եմ Նախագծի 58-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթը համապատասխանեցնել Նախագծի 6-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթին և Նախագծի 58-րդ հոդվածի 4-րդ մասը կարդալ նոր խմագրությամբ հետևյալ բովանդակությամբ. «Հեռարձակողների անվանումները էկրանային ցուցադրման ժամանակ միայն օտար լեզուներով առանց հայերեն անընդհատ տառադարձության օգտագործելը՝»:	Ընդունվել է	Ընդունվել է

ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 61-րդ հոդվածի 9-րդ մասում առաջարկում եմ «44-րդ հոդվածի 6-րդ մասով» բառերը և թվերը փոխարինել «45-րդ հոդվածի 7-րդ մասով» բառերով և թվերով, քանի որ Նախագծի 44-րդ հոդվածը 6-րդ մաս չունի, իսկ թեմատիկ ուղղվածության չափորոշիչները, դրանց հասկացությունները կարգավորող պետական մարմնի որոշմամբ սահմանումը կարգավորված է 45-րդ հոդվածի 7-րդ մասով:	Ընդունվել է	Ընդունվել է
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Առաջարկում եմ Նախագծում լրացնել նոր հոդված հետևյալ բովանդակությամբ. «Կարգավորող պետական մարմնի անկախությունը և անձեռնմխելիությունը Կարգավորող պետական մարմինը, կարգավորող պետական մարմնի անդամները և կարգավորող պետական մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների աշխատակիցներն իրենց լիազորություններն իրականացնելիս անկախ են և ենթարկվում են միայն օրենքին: Չի թույլատրվում անօրինական ազդեցություն և միջամտություն նրանց գործունեությանը և այդպիսի ազդեցության և միջամտության արդյունքում ընդունված որոշումներն անվավեր են:	Ընդունվել է	Ընդունվել է
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Կարգավորող պետական մարմնի աշխատակիցների գործողությունները կարող են բողոքարկվել Կարգավորող պետական մարմին՝ 30 օրվա ընթացքում կամ դատական կարգով՝օրենքով սահմանված ժամկետում, իսկ Կարգավորող պետական մարմնի որոշումները կարող են բողոքարկվել միայն դատարանում՝օրենքով սահմանված ժամկետում:»	Չի ընդունվել	Չի ընդունվել
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Օրենքը «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ նոր օրենքի նախագծին համապատասխանեցնելու նպատակով, որը նույնպես կարգավորում է հեռարձակող կազմակերպությունների իրավունքները, այդ թվում՝ մալուխով վերահաղորդողների, առաջարկում ենք Օրենքի 3-րդ հոդվածում օրենքում օգտագործվող	Չի ընդունվել	Չի ընդունվել

		հիմնական հասկացությունների մեջ սահմանել «հեռարձակում, վերահեռարձակում և մալուխային վերահաղորդում» հասկացությունները հետևյալ ձևակերպումներով՝ Հեռարձակում է համարվում հանրության ընկալման համար (նախատեսված) էլեկտրամագնիսական ալիքների միջոցով ռադիո կամ հեռուստատեսային հաղորդումներ կրող ազդանշանների հաղորդումը առանց հաղորդալարի (այդ թվում՝ արբանյակային հեռարձակումը), ինչպես նաև հաղորդալարով (այդ թվում՝ մալուխով վերահաղորդումը): Վերահեռարձակում և մալուխով վերահաղորդում է համարվում որևէ հեռարձակող կազմակերպության հաղորդման միաժամանակյա, չփոփոխված և ամբողջական վերահաղորդումը հանրությանը, որն իրականացվում է՝ 1) այլ հեռարձակող կազմակերպության կողմից (վերահեռարձակում). 2) մալուխային համակարգով՝ մալուխային օպերատորի կողմից (մալուխով վերահաղորդում): Հարկ է նշել, որ մալուխով վերահաղորդման իրավունքը կարգավորված է ԵՄ 93/83 EEC «Արբանյակային հեռարձակման և մալուխով վերահաղորդման նկատմամբ հեղինակային իրավունքի և հեղինակային իրավունքին հարակից իրավունքների վերաբերյալ որոշակի կանոնների համակարգման մասին» դիրեկտիվով: Դիրեկտիվը նախատեսում է արբանյակային կապով հեռարձակման և մալուխով վերահաղորդման վերաբերյալ կարգավորումներ: Տարաբնույթ մեկնաբանություններ չառաջանալու նպատակով առաջարկում ենք Օրենքի ամբողջ տեքստում «մալուխային ցանցով հեռարձակում» կամ «ցանցային օպերատորի հեռարձակում», «ցանցային		

		օպերատորի վերահեռարձակում» բառերը և դրա հոլովաձևերը փոխարինել «մալուխով վերահաղորդում» բառերով և դրա հոլովաձևերով:		
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Օրենքի 3-րդ հոդվածի 24-րդ մասի «բացառիկ տարածման իրավունք» բառերը փոխարինել «տարածման բացառիկ իրավունք» բառերով:	Ընդունվել է	Ընդունվել է
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 63-րդ հոդվածի 14-րդ մասի համաձայն՝ սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո վեց ամսվա ընթացքում սույն օրենքով նախատեսված տուգանքները կիրառվում են 50 տոկոսի չափով: Նույն հոդվածի 15-րդ մասի համաձայն՝ սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո վեց ամսվա ընթացքում սույն օրենքի 6-րդ և 7-րդ հոդվածներով արգելված արարքներ կատարելու համար կիրառվում են գրավոր նախազգուշացում: «Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ տույժ նշանակելիս հաշվի են առնվում կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, գույքային դրությունը, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները: Վերոգրյալից ելնելով՝ հայտնում ենք, որ Նախագծի 63-րդ հոդվածի 14-րդ և 15-րդ մասերով նախատեսված իրավակարգավորումները չեն բխում վարչական տույժ նշանակելու ընդհանուր կանոններից, և ներկայացված չէ նաև որևէ հիմնավորում նույն իրավախախտման համար տարբեր ժամանակահատվածներում տուգանքի տարբեր չափեր կիրառելու համար: Եթե նման մոտեցման հիմքը հեռարձակողների և (կամ) օպերատորների կողմից օրենքի պահանջների պատշաճ և ամբողջ ծավալով կատարման համար որոշակի ժամանակ տրամադրելու	Չի ընդունվել	Չի ընդունվել

		անհրաժեշտությունն է, ապա այդ դեպքում կարելի է առաջնորդվել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի պահանջներով: Ուստի, առաջարկում ենք վերոգրյալի համատեքստում վերանայել Նախագծի 63-րդ հոդվածի 14-րդ և 15-րդ մասերը:		
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	««Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 1-ին հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով որպես օրենքի նպատակ՝ նախատեսվում է Կարգավորող մարմնի անկախությունը: Մինչդեռ, օրենքի նպատակ կարող է լինել ոչ թե նշված մարմնի անկախությունն ինքնին, այլ դրա ապահովումը, ուստի նշված դրույթն ունի խմբագրման կարիք:	Ընդունվել է	Ընդունվել է
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Հեռուստեսության և ռադիոյի հանձնաժողովը կոչված է վերահսկողություն իրականացնելու հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների գործունեության նկատմամբ, ուստի գտնում ենք, որ Նախագծով առաջարկվող «տեսալսողական մեդիածառայութուն մատուցող» և «լսողական մեդիածառայություն մատուցող» եզրույթները համահունչ չեն ՀՀ Սահմանադրության 196-րդ հոդվածով ամարագրված և ավանդաբար կիրառվող հասկացությունների հետ:	Ընդունվել է	Ընդունվել է
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 8-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրվում է կարևոր իրադարձությունների մասին տեղեկատվություն ստանալու իրավունքը, իսկ նույն հոդվածի 3-րդ մասով սահմանվում է, որ դրանց շրջանակը հաստատում է կարգավորող պետական մարմինը: Կարծում ենք՝ նման կարգավորումն արդարացված չէ, քանի որ կարևոր իրադարձությունների շրջանակը սուբյեկտիվ և փոփոխական է: Եթե անգամ խոսքն այս դեպքում հասարակական նշանակություն ունեցող կարևոր իրադարձությունների մասին է, այնուամենայնիվ, գտնում ենք, որ դրանց շրջանակը սահմանել հնարավոր չէ, քանի որ ցանկացած	Ընդունվել է	Ընդունվել է

		անկանխատեսելի իրադարձություն որոշակի պայմաններում և որոշակի ժամանակահատվածում հանրության համար կարող է ունենալ կարևոր նշանակություն:		
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 9-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ արգելվում են տեսալսողական հաղորդումները, որոնց մասնակիցները Հեռարձակողին նախապես հայտնի՝ կենցաղային հողի վրա առաջացած վիճաբանության, երկարատև ժամանակահատվածի ընթացքում ձևավորված հակակրանքի արդյունքում հաղորդման բնույթով պայմանավորված կարող են կատարել օրենքներով արգելված գործողություններ: Նման ձևակերպումը խնդրահարույց է, քանի որ անձի կողմից կենցաղային հողի վրա առաջացած վիճաբանության կամ երկարատև ժամանակահատվածի ընթացքում ձևավորված հակակրանքի հիման վրա հաղորդման ընթացքում օրենքով արգելված գործողություններ կատարելու հնարավորությունը Հեռարձակողը որևէ կերպ կանխատեսել և կանխել չի կարող:	Չի ընդունվել	Չի ընդունվել
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 13-րդ հոդվածի 4-րդ մասում օգտագործվող «այլ վիճելի հարցեր» ձևակերպումն ունի հստակեցման կարիք:	Ընդունվել է	Ընդունվել է
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 26-րդ հոդվածի 15-րդ և 26-րդ մասերում «Կառավարության աշխատակազմ» բառերն անհրաժեշտ է փոխարինել «վարչապետի աշխատակազմ» բառերով: Բացի այդ պարզ չէ՝ ինչու պետք է տվյալ մրցութային հանձնաժողովի նիստերի նախապատրաստումը, արձանագրումը, ինչպես նաև ընդունված որոշումների առաքումն ապահովվի վարչապետի աշխատակազմի կողմից՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ ոլորտում լիազոր մարմինը Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն է, որն, իր հերթին, անկախ պետական մարմին է:	Ընդունվել է	Ընդունվել է
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Խորհրդի նախագահի ընտրությունը կատարվում է		

		հետևյալ կարգով…»: Այնուհետև, նույն մասի 3-րդ կետով սահմանվում է, որ Խորհրդի նախագահի ընտրության կարգը սահմանվում է կարգավորող պետական մարմնի որոշմամբ: Ուստի նշված դրույթների միջև առկա անհամապատասխանությունն անհրաժեշտ է վերացնել:	Ընդունվել է	Ընդունվել է
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 52-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ Հեռարձակողների լիցենզիաները տրվում են յոթ տարի, ցանցային օպերատորների լիցենզիան՝ տաս տարի ժամկետով՝ «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով լիցենզիայիժամկետի երկարացման հնարավորությամբ, մուլտիպլեքս օպերատորի լիցենզիան՝ անժամկետ: Մինչդեռ հարկ է նկատի ունենալ, որ լիզենցավորման ենթակա են ոչ թե անձինք, մասնավորապես՝ Հեռարձակողները, ցանցային և մուլտիպլեքս օպերատորները, այլ վերջիններիս կողմից իրականացվող գործունեության տեսակները:	Ընդունվել է	Ընդունվել է
ՀՀ Կառավարություն	Նախագիծ	Նախագծի 61-րդ հոդվածի 11-րդ մասում «մրցութային հանձաժողովի» բառերից հետո անհրաժեշտ է լրացնել «ձևավորման» բառը՝ նկատի ունենալով Նախագծի 26-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթները:	Ընդունվել է	Ընդունվել է
Պատգամավոր՝ Աննա Կոստանյան	Նախագիծ	8-րդ հոդվածն ամբողջությամբ է խնդրահարույց է, այն իրենից ենթադրում է միջամտություն խմբագրական աշխատանքներին, հետևաբար՝ գրաքննություն, քանի որ ոչ ժողովրդավարական մոտեցում է լրատվամիջոցների՝ հեռարձակողների, մեդիայի աշխատանքին: Ոչ ոք իրավունք չունի միջամտել լրատվությանը, «կարևոր» իրադարձությունների շրջանակը պետք է և կարող է որոշել միայն զանգվածային լրատվամիջոցի (հեռարձակողի) խմբագրությունը: Հետևաբար, առաջարկում եմ Հոդված 8-ն ամբողջությամբ վերանայել և համապատասխանեցնել զանգվածային լրատվամիջոցների, մամուլի և խոսքի ազատության միջազգային ստանդարտներին:	Չի ընդունվել	Չի ընդունվել

Պատգամավոր՝ Աննա Կոստանյան	Նախագիծ	Հոդված 19. Հակամենաշնորհային երաշխիքը 2. Իրավաբանական անձինք եւ ֆիզիկական անձինք միաժամանակ կարող են դառնալ ոչ ավելի, քան լիցենզիա ստացած երկու (մեկ հանրապետական եւ մեկ մայրաքաղաքային սփռման) Հեռարձակողի հիմնադիր եւ (կամ) մասնակից: Այստեղ հարկ է նշել՝ «Իրավաբանական անձինք եւ ֆիզիկական անձինք միաժամանակ կարող են դառնալ ոչ ավելի, քան լիցենզիա ստացած երկու (մեկ հանրապետական եւ մեկ մայրաքաղաքային, մեկ հանրապետական և մեկ մարզային, կամ մեկ մայրաքաղաքային և մեկ մարզային սփռման) Հեռարձակողի հիմնադիր եւ (կամ) մասնակից»	Ընդունվել է	Ընդունվել է
Պատգամավոր՝ Աննա Կոստանյան	Նախագիծ	Հոդված 23-ի 5-րդ մասում «Հանրային հեռարձակողին թույլատրվում է ցուցադրել սոցիալական գովազդ՝ «Գովազդի մասին» օրենքով սահմանված կարգով: Ժամը 00:00-ից մինչև 18.00-ն ընկած ժամանակահատվածում սոցիալական գովազդը հեռարձակվում է անհատույց հիմունքներով: Ժամը 18:00-ից մինչև 00:00-ն ընկած ժամանակահատվածում սոցիալական գովազդը հեռարձակվում է վճարովի հիմունքներով՝ «Գովազդի մասին» օրենքով սահմանված կարգով»: Առաջարկում եմ սոցիալական գովազդի ցուցադրությունն անհատույց հիմունքներով անել 18:00-ից մինչև 00:00-ն ընկած ժամանակահատվածում, իսկ վճարովի՝ 00:00-ից մինչև 18.00-ն ընկած ժամանակահատվածում, քանի որ հանրային հեռարձակողն արդեն իսկ ֆինանսավորում է ՀՀ քաղաքացիների հարկերից գոյացած գումարներից և հանրային գիտակցության բարձրացմանն ուղղված սոցիալական նշանակության գովազդները, որոնց պատվիրատուն հիմնականում ենթադրվում է, որ պետք է լինի պետությունը, ավելի լայն հնարավորություններ պետք է ունենան տեղ գտնելու prime time ժամանակահատվածում:	Չի ընդունվել	Չի ընդունվել

Պատգամավոր՝ Աննա Կոստանյան	Նախագիծ	23-րդ հոդվածում «վճարովի շրջանառությունը» բառակապակցությունը փոխարինել «անվճար շրջանառությունը» կամ «ազատ շրջանառությունը» բառերով:	Չի ընդունվել	Չի ընդունվել
Պատգամավորներ Ռուստամ Բաքոյան, Ալեքսեյ Սանդիկով	Նախագիծ	Ազգային փոքրամասնությունների վերաբերյալ հաղորդումների համար եթերաժամ տրամադրել հանրային Հեռարձակողով ոչ գիշերային ժամերի շաբաթական 30 րոպե, Լսողական ծրագրրժերով՝ 2 ժամ:	Ընդունվել է	Ընդունվել է
Սոֆյա Հովսեփյան	Նախագիծ	Հանրապետական սփռում իրականացնող Հեռարձակողի համար մանկական, կրթական, մշակութային եւ սպորտային թեմատիկ ուղղվածության տեսալսողական հաղորդումները կազմեն շաբաթական եթերաժամի առնվազն 30 տոկոսը	Չի ընդունվել	Չի ընդունվել
Հիմնական զեկուցող	Նախագիծ	Խորհուրդը տարեկան հաղորդումը ներկայացնի Ազգային ժողովին	Ընդունվել է	Ընդունվել է
Հիմնական զեկուցող	Նախագիծ	« Գովազի մասին » օրենքի պահանջները խախտելու համար պատասխանատվություն նախատեսել միայն Հեռարձակողների համար:	Ընդունվել է	Ընդունվել է